

24¹³
—
Z-85

1887

24
2-85 ԲՐԻՍՏՈՆԵԻՆ

ՄԻԱԿ ՅՈՅՍՆ

Ե Ի

ՄԻԱԿ ՄԻԻԹԱՐՈՒԹԻՒՆՆ

ԿԱՄ

Խորհուրդ ապաշխարութեան և
Գանձարան ներդրութեանց



ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ
ՅՈՎՀ. ՎԱՐԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ
Եպիսկոպոսի Տաբուր



= 1887 =

Printed in Turkey

23174

ԱՌ ՀՈԳԵՍԷՐՆ

Printed in Turkey

Առատովանոյթիւնն է սարսափի դժոխոց, առաջնորդ փրկոյթեան եւ յոյս հաւատացելոց:

Ս. Օգոստիկոս

Եթէ ոռնիս մի ծանր մեղք, զոր դոքոս սարսափաւանաց արտաստուօքն շռուանայ չես կարող, քո տեղ մայր Եկեղեցի թող լայ: ... Եւ թող վշտագնի ... Դոռ 'ի մեռելոց սիրտի յառնես:

Ս. Ամբրոսիոս

Աստուած մարդ՝ որոյ քաղցրագութ սիրտն այն ատեն միայն կը հանգչէր, երբ կը բարերարէր մարդկութեան. գալով այս աշխարհս փրկութեան առաջնորդող ուղւոյն համայն խոչընդոտն և դժուարութիւնքն անհետացոյց, և զմարդ մի այնպիսի վիճակի վերածեց, յորում նա զիւրութեամբ և առանց և ոչ մի փոքր դժուարութիւն կրելոյ կարող պիտի լինէր իւր վերջին վախճանին՝ իւր Արարչին հասնիլ:

Այսպէս՝ արդէն չառ տարիներ յառաջ գուշակած էր Նոայի ըսելով «Ամենայն ձորք լցցին և ամենայն լերինք և բլուրք խոնարհեցին. և եղիցին ամենայն դժուար»

112

2086
39

300-42

րինքն 'ի գլխրինս , և առապարքն
'ի գաշտս :» (Յսայի Խ. 4.)

Ո՞ր կարող է արդեամբ ուրանալ
թէ Քրիստոնէութիւնն՝ որոյ յե-
նակէտն է Երկինք , ունի իւր յա-
րակից միջոցներ որ առ այն վախ-
ճան կ'առաջնորդեն մի ամենա-
գլխրին եղանակաւ : Ո՞ր կարող է ,
կ'ըսեմ , ուրանալ թէ Քրիստոսա-
կան եկեղեցւոյ մէջ մատակարար-
եալ են միջոցք , որք ուղղեալ են
յառկապէս առ փրկութիւն մար-
դուն : Ոչ ոք : Զի այս մի անժըխ-
տելի ճշմարտութիւն է :

Յիրաւի կան այնպիսիք , ոյք
կամ կրօնական անտարբերու-
թեան գաոսանման խաւարին մէջ
խարխափելով , տակաւին զին-
քեանս մի լուսաւորեալ դարի մի
կեղծ և անուանական լուսաւո-
րութեամբ զարդարեալ համարե-
լով , անտարբեր և իբր անօգուտ

գործքեր կը համարին զայնս , նը-
պատակ ունենալով գտնել մի
ընդարձակ ասպարէզ , յորում մի
անսանձ և մեղսաթաթաւ ազա-
տութեամբ կարողանան թաւալ-
գլոր շաղախի աղտեղութեանց
մէջ . և կամ՝ ծառայելով մի կրօնի՝
որոյ սկիզբն , մէջն և վախճանն մի
բացարձակ բացասութիւն լինե-
լովն , առաւել ևս 'ի սովորութենէ
քան 'ի համոզմանէ , յաւակնու-
թիւնն ունին ժխտելոյ զայս ճշ-
մարտութիւն :

Սոքա և սոցա նմաններն դրժ-
բաղդաբար հանրացած են , և իւ-
րեանց յոռի և սխալ սկզբունք-
ներովն ոչ նուազ ազդեցիկ եղա-
նակաւ քո սրտին մէջ ևս , ով Հո-
գեսէրդ իմ , երբեմն իւրեանց չար
և անօրէն գաղափարաց նշոյլներն
կը ներմուծեն , կամ կը փափաքին
ներմուծել , այսու ստանձնելով մի

պաշտօն , որ բացարձակապէս մի միայն սատանային կը պատկանի :

Այս է ահաւասիկ այն ամենադառն և ամենացաւալի կէտն , որ վրդոված է իմ մետասանամեայ առաքելութեանս օրերն և ժամերն :

Հաւաստի է թէ ոչ սակաւ 'ի զգուշութիւն քո անձին , մաքառեցայ և դիմագրաւեցի մերթազդու եղանակաւ 'ի բեմէն խօսելով և մերթ առանձինն հրահանգիչ և սրտագրաւ խօսքերով զսիրելիդ յորդորելով : Միայն թարութիւն և սփոփ կը գտնէր իմ սիրտ , երբ դու կ'ընդունէիր իմ խօսքերն իբր երկիր բարի , և կը պաղաքեցիր էր որ հարիւրաւոր , էր որ վաթսնաւոր և էր որ երեսնաւոր : Իսկ որքան մի մեծ տխրութիւն կը պատէր զիմ սիրտ , և որպիսի դառն մտատանջու-

թեան կը մատնուէի , երբ ընդհառակն՝ դու , իբր մի կարծր ապառաժ , կը մերժէիր զայնս և չէիր ընդուներ :

Արդ՝ փրկութեան ամենադժուարին խոչընդոտն և առապարքն են մեղքն . զի փրկուելու համար Աստուածային սիրով վառիլ հարկ անհրաժեշտ է : Այն որ հետեւաբար կ'արատաւորէ մեղօք զիւր հոգին , կը զրկէ ինքզինքն բնականապէս 'ի սիրոյն Աստուծոյ , և կը լինի ատելի նմա , և իբր արդիւնք 'ի պատճառէ , կ'ենթարկի թէ մշտնջենաւոր և թէ ժամանակաւոր պատժոյ :

Ի՞նչ միջոց ուրեմն մատակարարեց ամենասիրելի Փրկիչն մեր , որով մարդ թէ դառնայր վերջստին առ սէր իւր Արարչին , և թէ զերծ մնայր յո և է պատժոյ : Ո՛րն է այն միջոցն , որով կը ջնջուի

մեղքն և նորա արտադրեալ յաւիտենական պատիժն : Այս միջոցն է խորհուրդն ապաշխարութեան , միակ յոյսն Գրիստոնէին :

Ո՞րն է այն եղանակն , որով դիւրութեամբ հոգին զերծ կը մնայ և կ'ազատի ժամանակաւոր պատիժներէն , որոց մէն մի մեղուցեալ հոգի արժանի է , և կ'ենթարկի անշուշտ : Այս է ներողութեանց շնորհաց անսպառ գանձարանն , միակ մխիթարութիւն Գրիստոնէին :

Սոյն միջոցներն , ով Հոգեւեւրդ իմ , քեզ անծանօթ չեն արդէն , զի ստէպ լսած ես այնց վերայ քարոզներու և յորդորակներու մէջ . նա մանաւանդ այս ճշմարիտ սկզբունք քո սրտի մէջ ստէպ տըպաւորուելով , փրկութեան ճանապարհին վերադարձեր ես , ուստի դու երբեմն խոտորած կը գըտ-

նուէիր : Այսու ամենայնիւ նկատելով որ քո սիրտ՝ մերթ ընդ մերթ մարդկութեան դէմ՝ երդուեալ ոսոխէն , 'ի սատանայէ՝ փշոց ցանկերով կը շրջապատի , և այն փշերն բոլորովին կը խեղդեն այն սուրբ և բարի խօսքերն , ուղեցի զայնս ընդ միշտ քո մտաց մէջ անջինջ և տպաւորեալ պահելոյ համար մի միջոց գտնել . և ահա այս նպատակաւ միայն Ապաշխարութեան Ս. Խորհրդոյն և ներողութեանց անսպառ գանձուց վերայ մի փոքրիկ աշխատութեան ձեռնարկեցի , յորում քիչ ժամանակի մէջ յաջողիս գոհ սրտիւ տեսնելով , փութացի զայն 'ի լոյս ընծայել , քեզ նուիրելով , յօգուտ Հոգւոյդ անմահի գնելոյ արեամբ կենարարին :

Մի և մի երբէք ակնկալեր նորոգ մի ինչ տեսնել անդ , զի զոր ինչ Բադարայի Եպիսկոպոս Աստ-

ուածարեալ Պէրսանիի և այլ հոգեւոր Առաջնորդաց երկերէն քաղելով քեզ 'ի բեմէն կ'աւանդէի, զնոյն և ոչ աւելի գրեթէ 'ի Հայ գիր արձանացուցեալ պիտի գըտնես:

Ի սիրտ և 'ի հոգի պիտի ուրախանամ և գոհ պիտի լինիմ եթէ քո հոգւոյդ փրկութեան համար մի բարիք ընելու կոչմանն ծառայելով, գործնականապէս ինքզինքս յաջողութեան պսակաւ պսակուած տեսնեմ:

Յ. Վ. Յ.

ՂԱՐԱԲԷՐ ՓՈՐՈՆ Հայոց
Ի 22 Յուլիսի 1886 ամին:



Ապաշխարութեան խորհրդոյն վերայ
ընդհանրապէս



Աստուածային նախախնամութիւնը գոհ չեղաւ որ մարդ՝ ծնանելով ապրէր այս երեւելի աշխարհիս վերայ, այլ նկատելով որ սա՝ յետ ծննդեան չէր կարող երկար ժամանակ առողջ վիճակի մէջ մնալ, իսկոյն Իւր անհուն ողորմութեամբն մատակարարեց նմա դարմաններ, դեղեր 'ի բոյս, 'ի տունկս և 'ի մետաղս և կամ 'ի սոցին խառնուրդս: Զոր 'ի կարգի բնութեան չզլացաւ մարդկութեան, զնոյն առատօրէն պարգեւեց 'ի կարգի շնորհաց եւս: Գիտէր նախախնամութիւնն թէ մարդ վերստին ծնանելով Մկրտութեան սուրբ խորհրդով, Իւր տկար բնութեան համար կարող

պիտի չլինէր յարատեւ մնալ նոյն սրբութեան, նոյն անբծութեան մէջ, զոր կ'ստանայր սուրբ Աւագանին միջոցաւ. գիտէր, կրտսմ, որ մարդս՝ իրեն բնական եղած տկարութեամբն և կամացն ազատութեամբ, կրնար ընդ միշտ իրեն ապերախտ գտնուիլ, կրնար զինքն վշտացնել, և մեղանջելովն իրմէն հեռանալ, և մերձենալ սատանայի. իւր անսպառ արդիւնքներն ոտքի տակ առնելով կրնար, պիտի ըսեմ, բոլորովին իրեն ատելի և գարշելի լինել: Ուստի գոհ չեղաւ միայն ստեղծել և պահպանել զնա, այլ գրեթէ կարող չլինելով դիմանալ, 'ի նշան իւր անսահման սիրոյն ուղեց հաստատել այնպիսի մի դարման, որոյ գորութիւնն և ազդեցութիւնն կայանայր 'ի լոգարանի անգին Արեան կենարարին, ուր լուաց-

ուելով աղտեղեալ հոգին վերադառնայր առ ինքն, խզելով բանսարկուն հետ հաստատած կապերն, ստանայր իւր կորուսած նախկին գեղեցկութիւնն և լինէր ժառանգ և ժառանգակից Քրիստոսի: Միով բանիւ խեղճ հոգին գտնէր հանդարտիկ խաղաղութիւն մի, զոր 'ի վիճակի մեղացն մէկ ձայնով գոչելով կը բնտուէր, այլ, աւան, չէր կարող գտնել:

Ահա այս անգին դարմանն է՝ որում Ապաշխարութեան Խորհուրդ անունը կուտամք, և որոյ վերայ կ'ուզեմ խօսիլ 'ի կրթութիւն հոգւոյդ, ո՛վ իմ հոգեսէր եղբայրս, և 'ի մխիթարութիւն մեղաւորաց: Այս այն Պրոբատիկէն է՝ յորում մէն մի զղջացեալ մեղաւոր անկանելով իւր ցաւերէն կատարեւապէս կը բժշկուի: Եթէ զայս միջոց չմատակարարէր մեզ

մեր ամենասիրելի Փրկիչն, մեք
մեր բոլոր կենաց մէջ՝ ներքին խա-
ղաղութենէ զուրկ, մեր յանցանաց
ծանրութիւնը մեր ուսերուն վրայ
պիտի կրէինք, և յետ մահու պի-
տի դատապարտուէինք դժոխոց,
ուր պիտի քաջէինք մեր մեղաց
պատիժն յաւիտեանս յաւիտենից :
Եթէ այս փրկարար Խորհուրդն
չհաստատուէր, մեք նման այն դա-
տապարտելոց՝ որոց մահու վճիռն
արձակուած է, տրտում տխուր
օրեր պիտի անցունէինք, գիշեր-
ներն 'ի բուն խառն և վրդովիչ
երազներով պիտի տառապէինք,
մի տարժանելի յուսահատութիւն
պիտի տիրէր մեր վերայ, և ամէն
օր ամէն վայրկեան պիտի հնչէին
մեր լսելեաց սա խօսքերն թէ՛
քեզ նամար յոյս չկայ, դու պիտի դա-
տապարտուիս, մի օր պիտի տարածու-
մն մահն և պիտի գահավիժի զքեզ

այն տեղ, որոտ դու արժանի ես :
Ո՛հ, Խնչ յուսահատ վիճակ, Խնչ
դժբաղդ և թշուառ կացութիւն :
Շնորհակալ լինիմք ուրեմն Ամե-
նաբարի և Ամենողորմած Կենա-
րարին որ ձգած է մեզ Ապաշխա-
րութեան սուրբ Խորհրդոյն բալա-
սանն, որով կը բուժին մեր հոգ-
ւոց վէրքերն, և կ'աղատեն զմեզ
մի այսպիսի դժնդակ վիճակէ :

Սակայն ինչպէս որ մի հիւանդ
մի դեղ առնելով օգտուելոյ հա-
մար պէտք է որ որոշեալ չափովն
որոշեալ ժամանակին առնու, զի
մի գուցէ այն դեղն 'ի թոյն փո-
խուի, սոյնպէս ալ՝ սրպէս զի Ա-
պաշխարութեան Խորհուրդն մեր
հոգիներու օգտակար և շահաւետ
լինի, հարկ է որ պէտք եղած
տրամադրութեամբք մերձենամք
առ Ա.յն. ապա թէ ոչ փոխանակ
'ի փրկութիւն հոգւոց մերոց ծա-

ռայելոյ, մեզ 'ի դատապարտութիւն պիտի ծառայէ Այն:

Սրբուհին Թէրէզա իւր տեսլեանց մէջ տեսաւ մի օր շատ հոգիներ՝ որք իբր ձեան տարաւիք կը թափէին 'ի դժոխս. սարսափած գոչեց. «ով Տէր, ինչ է պատճառն որ այսքան հոգիներ կը գահավիժին 'ի դժոխս դատապարտեալ: Որոյ պատասխանեց Տէրն. այս հոգւոց 'ի դժոխս գահավիժելուն միակ պատճառն իւրեանց յոռի խոստովանութիւնքն են:

Լաւ խոստովանիլ ուրեմն փրկուիլ ըսել է. մինչ ընդհակառակն՝ յոռի խոստովանութիւնք կը դատապարտեն զմեզ 'ի դժոխս: Տեսնեմք ապա թէ՛ լաւ խոստովանելոյ համար ինչ ընելու եմք, և քանի բան պէտք է:

Փոքրիկ մանուկ մ'իսկ, «ով իմ հոգեսէրս, շատ դիւրին եղանա-

կաւ կարող է պատասխանել այս հարցմանս և շուտով պիտի ըսէ, թէ՛ հինգ բան պէտք է. Քննութիւն, Զղջումն, Առաջադրութիւն, Խոստովանութիւն և Վճարումն ապաշխարանաց:

Քո հոգւոյդ փրկութիւնն ապահովելոյ համար անցնիմք ուրեմն, «ով հոգեսէր սիրելիդ իմ, մի առ մի այս կէտերի վերայ խորհրդածել:

1. ՔՆՆՈՒՄԵԱՆ ՎԵՐԱՅ.

Բարի և լաւ մի խոստովանութիւն ընելու համար, առաջին և կարեւոր բանը քննութիւնն է. այսինքն մեր մեղքերն փնտռել, մտքերնիս բերել և այնուհետեւ խոստովանիլ. վասն զի ոչ ոք կարող է առանց նախապատրաստեալ նիւթոց ձեռնարկել մի տան շինութեան:

Սակայն մի լաւ քննութիւն քնելու համար անհրաժեշտ է որ զմեզ պատրաստեմք աղօթքով։ Որովհետեւ մեր մեղքերն քննելն շատ դժուարին է, մանաւանդ որ մեր անձնասիրութիւնն և սատանայն միշտ կ'աշխատին որ մեք զմեզ արդարացնեմք. այնպէս որ՝ մեր կրքերն միշտ կ'ուզեն զայնա ծածկել մեր աչաց առջև. և այսու մեզ ոչինչ և թեթեւ իրողութիւններ կը թուին, հետեւաբար մեք զմեզ իբր բոլորովին անմեղ կը ներկայացնեմք, իբրեւ թէ բնաւ մեղք գործած չլինիմք, և այն գործերն՝ որք մեր միտքն կուգան, իբր մարդկային բնութեան հարկաւոր արդիւնքներն կը կարծեմք, և բնաւ մեղք չեմք համարիր։ Ահա այս պատճառաւ է որ քննութիւնն՝ որ քստ ինքեան դիւրին կ'երեւի, շատ դժուարին և առանց Աստ-

ուածային շնորհաց գրեթէ անկարելի կը լինի. հետեւաբար պէտք է որ նախ քան զամենայն՝ աղօթիւք Աստուծոյ շնորհքն խնդրեմք։ Այս միջոցաւ միայն կարող պիտի լինիմք յԱստուծոյ լուսաւորութիւն ընդունիլ, որով մշտքերնիս պիտի բերեմք մեր հոգւոց խեղճութիւններն, տկարութիւններն, յանցանքներն, և սոցա զանազան պարագայներն, թիւն և մեր վերայ տիրող կիրքն և լն։

Աղօթք ոչ այնչափ երկար պէտք է լինին և ոչ այնքան կարճ։ Ես քեզմէ չեմ պահանջեր, ո՞վ իմ հոգեւէրս, Սրբոյն Աւօգիոսի աղօթքներն, այսինքն խոստովանութենէ յառաջ երեք օր շարունակ գիշեր և ցերեկ աղօթելդ, բաւական է որ նախընթաց իրիկուընէ սկսիս զքեզ Աստուծոյ յանձնել և աղօթել Աստուծոյ,

որպէս զի մտաց լուսաւորութիւն
պարզեւէ, և հետեւեալ առաւօտ
եթէ հնար խակ է, եկեղեցի գնա-
լով սոյն այս դիտմամբ Պատարագ
տեսնես, և ապա փոքրիկ մի ա-
ղօթք յարելով սկսիս քննու-
թեան: (1)

Ա. — Յետ յանձնելոյ գրեզ Աս-
տուծոյ, չկորսնցնելով երբէք Աս-
տուծոյ ներկայութիւնն, սկսէ մի
առ մի փնտռել քո մեղքերն: Սա-
կայն նախ զգոյշ կեցիր, ո՞վ հո-
գեսէրդ իմ, որ սատանայէն չխա-
բուիս, և մի գուցէ դու քեզ բա-
րեգութ և ներողամիտ լինիս:
Բացորոշ եղանակաւ բացատրեմ
ըսածս: Երբ քննութեան սկսիս,
գիտես բանսարկու թշնամին ինչ
թելադրութիւններ պիտի ընէ, և
ինչ արդարացուցումներ միտքդ

(1) Տես 'ի Յաւելուածին:

պիտի բերէ: Էհ, այս մեղք չէ,
պիտի ըսէ նա, դու հաւանութիւն
չտուիր՝ որով մի ծանր մեղք գոր-
ծած լինէիր, հետեւաբար զայս
մէկդ թող: Այն ինչ մեղքն ալ
փոքր ինչ տարակուսի տակ է թէ՛
արդեօք մահացո՞ւ է թէ՛ ոչ. յան-
կարծ առանց գիտութեան պա-
տահեցաւ. կատարեալ խորհուրդ
չկար. հետեւաբար պահիկ մի ա-
սոր վերայ ևս մի խորհիր. այս
պարագայն մեղքին տեսակը չփո-
խեր, թէ և դու այնպէս կը կար-
ծես: Հապ ծն ուրեմն, ձգէ զայս
ևս մի կողմ, մանաւանդ որ աղ-
տեղի և ամօթալի բան մ'է, և լին:

Այս դարձուածներով, այս փա-
խուստներով սատանան խոստո-
վանութենէ դուրս ձգել կուտայ
այնպիսի մեղքեր, որք բուն խոս-
տովանութեան նիւթ են, որով
խոստովանութեան մէջ ըսած մեղ-

քերնիա թեթեւագոյններն և ոչ ծանրներն կը լինին : Այսու խոստովանութիւնն ամբողջ չլինելու վտանգինմէջ կ'իյնայ , և փոխանակ հանգիստ սրտով խոստովանարանէն հեռանալու , աւելի վրդովեալ և անհանգիստ խղճիւ կը մեկնիմք անտի , անօգուտ՝ մանաւանդ աւելի հաւանականօրէն սրբապիղծ մի խոստովանութիւն ընելով :

Ո՛հ , զգուշութիւն ուրեմն այս կէտիս մէջ . խստութիւն , խստութիւն պէտք է , սիրելիդ իմ , այնպէս որ , ոչ թէ դու զքեզ պէտք է քննես , այլ ենթադրելու ես թէ՛ այլ ոմն է զոր քննութեան ենթարկած ես : Քննութիւնը մի կանխեալ դատաստան է , զոր մեր վերայ 'ի գործ կը դնեմք . պէտք է ուրեմն , ինչպէս կ'ըսէ Սուրբն Բեռնարտոս , մեր մտքին մէջ մի

դատական ատեան բանամք , հոն մեր խիղճն իբր ամբաստանեալ 'ի մեր ներկայութիւն կոչեմք , և իւր գործքերն մի առ մի հարցաքննութեան ենթարկեմք առանց ակնածութեան , առանց գթութեան և ողորմութեան . զոր օրինակ հնչող դատաւորն մի օր մեր մահու կէտին պիտի ընէ :

Բ. — Պէտք է շատ մտադրութեամբ և ջանիւք քննել մեր մեղքերն , խուզարկելով մեր սրտի ամենածածուկ անկիւններն , զի մի գուցէ առանց մեր ուշադրութեան ծածկեալ մի ինչ գտնուի : Պարտ է որ մտքերնիս բերեմք թէ որ ճանապարհէն անցանք , որ տուն կը յաճախեմք , որոց հետ կամ ինչ բանի վերայ խօսած եմք : Եթէ այսպէս մանրակրկիտ լինիմք , անշուշտ դիւրին եղանակաւ պիտի յիշեմք մեր մեղքերն և ար-

դիւնաւոր մի քննութիւն ըրած պիտի լինիմք :

Գիտեմ, ո՛ր հոգեսէր սիրելիդ իմ, որ հոս մի դժուարութիւն կը ծագի քո մտաց մէջ, այսինքն թէ արդեօք կատարեալ մի քննութիւն ընելոյ համար որքան ժամանակ պարապելու եմք :

Այլ զայս կարելի չէ բացարձակապէս որոշել : Որովհետեւ երբ հարցանելու լինիմք մի խանութպանի թէ՛ դու քո հաշիւ տեսանելոյ համար որքան ժամանակի՞ կարօտ ես, անշուշտ պիտի պատասխանէ թէ՛ ժամանակը գիտէ զայդ, մարդը գիտէ : Անտարակոյս է որ շաբաթը մի անգամ հաշիւ տուողի հետ հաշիւ տեսնեն դիւրագոյն է, քան անոր հետ որ մէն մի ամիս հազիւ հաշիւ կը ներկայացնէ, որով դժուարութիւնն առաւել կը ծանրանայ, եթէ տարին

մի անգամ միայն հաշուոյ նստելու դժբաղդութիւնն ունենամ : Նոյնպէս յաճախորդ մի՝ որ ամիսն մի անգամ առեւտուր կ'ընէ, շատ դիւրութեամբ կրնայ իւր հաշիւն ներկայացնել, քան այն՝ որոյ սպասաւորն յաւուրն տաան անգամ կը յաճախէ իմ քով :

Ահա այս օրինակ կրնամ ըսել նկատմամբ խղճի քննութեան ևս : Շաբաթը մի անգամ խոստովանողն աւելի նուազ ժամանակի կարօտ է, քան այն որ ամիսն կամ տարին մի անգամ հազիւ հազ 'ի խոստովանութիւն կը դիմէ : Առաջինը մի քանի րոպէի մէջ կրնայ ինքզինքն քննել, մինչ երկրորդն և երրորդն գոնէ առ նուազն համեմատաբար կէս ժամու պէտք ունի մի կատարեալ քննութիւն ընելոյ համար : Նոյնպէս երբ երկու հոգի մի և նոյն ատեն խոստովա-

նած են , հարկաւ այն աւելի ժամանակի կարօտ է , որ յաւուրն տասն անգամ կամ աւելի սատանային խանութը կը յաճախէ և մեղանչելն իրեն ունակութիւն ըրած է :

Գ. — Քննութիւնը սկսելու է վերջին լաւագոյն կերպիւ ըրած խոստովանութենէ մինչ ցնոր խոստովանութիւն : Լաւ դիտելու է այն բառերն , զոր ըսի , այսինքն՝ ըստ կերպով ըրած խոստովանութենէ : Որովհետեւ երբ մէկն առանց անկեղծութեան՝ այսինքն մի մահու չափ մեղք պահելով , կամ առանց զղջման և առաջադրութեան մի խոստովանութիւն ըրած լինի , այն խոստովանութիւնը բոլորովին ոչինչ և անվաւեր է . հետեւաբար կրկնելու է զայն , իբրեւ թէ բնաւ խոստովանած չլինէր . և սկսելու է քննել զինքն վերջ-

ընթեր խոստովանութենէ , եթէ այնրեւ լաւ կատարուած լինելուն վերայ չկասկածի : Միով բանիւ՝ մինչեւ որ կատարեալէս վստահ չլինի իւր խոստովանութեան լաւութեան վերայ , չէ կարող քննել իւր խիղճն այն խոստովանութեան օրէն սկսեալ : Մի. քանի օրինակներ յառաջ բերեմք ենթադրութեամբ , որով լուսաւորուին մտքեր :

Հայկակ տասնեութ կամ քսան տարեկան հասակին մէջ մի մահացու մեղք կը գործէ , և առ ամօթի խոստովանահօրմէն կը պահէ զայն . ապա վեց եօթն տարիներ կը շարունակէ նոյն եղանակաւ խոստովանիլ . քննչ պիտի ընէ ուրեմն այդ խեղճը մի լաւ խոստովանութիւն ընելոյ համար : Պէտք է որ վեց , եօթն տարիներու մէջ ըրած խոստովանութիւնքն ոչինչ և անվաւեր համարելով , փնտռէ , գտնէ

այն խոստովանութիւնն , զոր մահուչափ մեղքն գործելէն և զայն իւր խոստովանահօր ծածկելէն յառաջ կատարած է , և անտի սկսի քննել իւր մեղքերն . այսինքն քննելու է թէ՛ ինքն այն մեղքը գիտութեամբ է ծածկեր , և յետ այնորիկ վեց եօթն տարիներու մէջ քանիցս խոստովաներ և հազորդուեր է . վասն զի այնչափ անգամ սրբապղծութեան մեղօք մեղանչեր է , որչափ անգամ որ խոստովաներ և հազորդուեր է : Միով բանիւ՝ մի ընդհանրական խոստովանութեան համար ընդհանուր մի քննութիւն ընելու է , սկսելով այն պահած մեղքէն . վասն զի , ինչպէս պիտի տեսնեմք , առանց անկեղծութեան մի խոստովանութիւն՝ ոչինչ , անվաւեր և սրբապիղծ է :

Քեզ մի այլ ենթադրութիւն

ևս ընեմ , որպէս զի , ո՞վ իմ սիրելի հոգեսէրդ , քո միտք աւելի ևս լուսաւորուի :

Արմենակ՝ ընկերին չար թեւադրութենէն շարժեալ , կամ թէ իւր բուն չարութեամբն , պատանեկութենէ սկսելով կամ բղջխոհութեան , կամ հայհոյութեան և կամ գողութեան մի ծանր մեղաց մէջ կ'անկանի : Յիրաւի սա՛ բնութեամբն կը զգուէր այս տեսակ մեղքերէ , սակայն դժբաղդաբար՝ ինչպէս և իցէ , կրկին նոյն մեղաց մէջ կը սահի ուրիշ անգամներ ևս , մինչեւ որ կ'ունականանայ և իւր խիղճն կը սովորի այս մեղաց : Արմենակ կը խոստովանի , բայց իւր ունակութիւնն չթողուր . և ոչ իսկ իւր խոստովանահօր բարի խորհրդոց կը հետեւի , և մեղաց առիթներէն չփախչիր : Բայց որովհետեւ ինքն գիտէ որ՝ եթէ նոյն

մեղքերն հանապազ մի և նոյն խոստովանահօր յայտնելու լինի , առանց խորհրդական արձակման պիտի մնայ , կ'սկսի այնուհետեւ փոխել խոստովանահայրն , մի օր միում , մի օր այլում , և այս եղանակաւ տարիներով կը յարատեւէ մնալ իւր չար ունակութեանց մէջ :

Արդ՝ ինչպէս կը թուի քեզ , սիրելիդ իմ , միթէ Արմենակ համոզուելու չէ իւր խոստովանութեանց ոչինչ , անվաւեր , և սրբապիղծ իսկ լինելուն վերայ . անտարակոյս : Վասն զի նա ինքն չէ ունեցեր երբէք կամք իւր չար ունակութիւններէն հեռի կենալու , ունենալով միանգամայն մի կատարեալ զղջումն և մի հաստատուն առաջադրութիւն : Ի՞նչ ընելու է ուրեմն թշուառն . յայտնի բան մ'է . պէտք է որ սկսի ինք-

զինքն քննել յօրէ յայնմանէ , յորում դժբաղդութիւն ունեցաւ այն ծանր մահացու մեղաց մէջ գլորելու , որոյ դէմ չպատերազմեցաւ երբէք , հետեւաբար չյաղթեց , այլ նա ինքն յաղթուեցաւ ի մեղաց :

Դ. — Վերջապէս քննութեանմէջ մեծ զգուշութեամբ հետեւեալ կէտն դիտելու է : Ամէն ոք մի արդիւնաւոր քննութիւն ընելոյ համար պէտք է որ մեղաց թիւն և պարագայներն ևս ի քննին առնու . վասն զի սոքա թէ կը փոխեն և թէ զգալի եղանակաւ կը ծանրացնեն մեղաց տեսակն :

Թուոյն համար զգուշանալն արդէն բնական է . ըստ որում այլ է միանգամ և եթ մեղանչել , այլ է երկիցս , երիցս , հնգիցս և այլն . հարկաւոր է ուրեմն , որչափ հնար իսկ է , եթէ ոչ ճշգրտիւ , գոնէ

մերձաւոր օրինակաւ (*approximative*) փնտռել մեղաց թիւն :

Մի օր մի խեղճ գեղջուկ կը խոստովանէր իւր խոստովանահօր, բայց որովհետեւ ըսած մեղքերն փոքր ինչ ծանրներէն էին, առանց թիւերն յայտնելու յառաջ կ'երթար. խոստովանահայրն իւր պարտաւորութիւնը կատարելու նպատակաւ հարցուց գեղջուկին ըսելով. Սիրելի որդեակ, քանի անգամ գործած ես այդ մեղքերդ, հինգ կամ վեց անգամ եղած է արդեօք. — Հայր սուրբ, պատասխանեց գեղջուկն. գրեթէ այդչափ կամ մերձ այդչափի :

Խեղճ քահանայն այդ գրեթէ, *մերձ* բառերուն վերայ տարակուսելով քիչ մը, կրկին հարցուց. — աղէկ մտած է, սիրելիս, մի գուցէ տասն և հինգ կամ քսան անգամ իսկ պատահած լինին այդ մեղքերն :

— Այո, Հայր սուրբ, գրեթէ այդչափ մի ևս յուսալի է :

Բնականապէս քահանային կասկածն աւելցաւ. ուստի կրկին հարցուց. — Ո'րդեակ, կ'երեւի թէ երեսուն, քառասուն անգամ ալ գործած ես դու այդ մեղքերն : — Այո, յարեց չուտով գեղջուկն, քիչ մը վեր կամ վար : Եթէ այդպէս է, կրկնեց քահանայն, հաւանական է թէ դու այդ մեղքերն մինչեւ յիսուն, վաթսուն անգամ իսկ գործած ես :

Գեղջուկն խոստովանահօր այս հարցմանն աներկմտաբար պատասխանեց թէ՛ վաթսուն անգամ չեմ յուսար, սակայն, հայր սուրբ, քիչ պակաս լինելու է կարծեմ :

Տես ուրեմն, սիրելի հոգեսէրդ իմ, թէ ո՞ր հասան այն գրեթէ *մերձ* բառերն. հինգն և վեցն վերջապէս տասնապատկել հարկ եղաւ :

Ձանալու է ուրեմն ըստ կարելւոյն մեղաց որոշ թիւն գտնել, և երբ կարելի չէ, բաւական է որոշել չաբաթն կամ ամիսն քանիցս պատահած լինեն. վասն զի խոստովանահայրն կրնայ հաշուել և տեղեկանալ:

Գալով մեղաց պարագայից վերայ, դիտելու արժանի է թէ՛ կան պարագաներ՝ որք կը ծանրացնեն յոյժ մեղքն նոյն տեսակին մէջ իսկ. կան նաև ուրիշ պարագաներ՝ որք ուղղակի կերպով մեղաց տեսակն կը փոխեն: Թէ՛ առաջիններն և թէ՛ վերջիններն խոստովանահօր յայտնուելու են անպատճառ: Զի այլ է գողանալ տասն ոսկի արժէք ունեցող իր մը, այլ է քսան ոսկւոյ. այլ է շարունակել մի քանի վայրկեան մի աղտեղի խօսակցութեան մէջ մնալ և բերկրութիւն գգալ, այլ է երկարաձգել զայն

մի կամ երկու կամ աւելի ժամեր: Այս սլարագայք կը ծանրացնեն մեղքն իւր նոյն տեսակին մէջ, և պէտք է որ ամէն ոք խոստովանի զայն: Նոյնպէս այլ է մի մեղանշական կատակ ընել Նկեղեցիէն դուրս, այլ է զայն յեկեղեցւոջ գործել. այլ է մի աղտեղի և անհամեստ խօսք խօսիլ չափահասից առջեւ, այլ է զայն արտաբերել ի ներկայութեան անմեղ մանկանց և պատանեկաց: Վասն զի սոքա անտարակոյս պիտի գայթակղին: Այս պարագաներն նոյն իսկ մեղաց տեսակը կը փոխեն, հետեւաբար պէտք է որ ամէն ոք այս պարագաներն ևս ուրոյն ուրոյն խոստովանի իւր խոստովանահօր:

Մինչեւ հիմա ըսածնիս ընդհանրապէս քննութեան համար հարկաւոր եղած ընդհանուր կանոնաց վերայ էր, որպէս զի, ուրեմն, ա-

ւելի յաջող և դիւրին եղանակաւ
կարող լինի մէն մի քրիստոնեայ
իւր քննութիւնն արդիւնաւորա-
պէս կատարել, այս գրքուկիս մէջ
մի Յաւելուած պիտի գտնէ, ուր
մի մասնաւոր և ընդարձակ քնն-
նութեան եղանակ որոշուած է:
Հոն դիմելով կարող ես քո փա-
փաքին հասնիլ, ով հոգեսէր հա-
ւատացեալդ իմ:

Ձ. Զրման վերայ .

Յետ քննելոյ մեր խիղճն, և յետ
մեր յիշողութեան մէջ ամփոփելոյ
ամբողջ մեր մեղքերն, պարտ ան-
հրաժեշտ է մի կատարեալ զղջումն
ունենալ, մտածելով որ մեք մեր
մեղքովն վշտացուցած եմք գերա-
գոյն և անհուն Բարին, զԱստուած,
վասն զի ինչ օգուտ ճանաչել մեր
մեղքերն, անոնց թիւն ու պարա-
գաներն գիտնալ, եթէ պակսի

զղջումն՝ որ ըստ վճռոյ Տրիտեն-
դեան Ս. Ժողովոյն, խոստովանու-
թեան նիւթն է, ինչպէս ջուրն
Մկրտութեան: Մի քահանայ կա-
րող է հազարիցս հազար անգամ՝
ես Սիրտեմ՝ զքեզ ձեւն արտասանել .
բայց եթէ ջուրն պակսի՝ ինչ զօ-
րութիւն պիտի ստանայ այն. ոչինչ:
Այսպէս ևս կարող է քահանայն
նոյնչափ և աւելի ևս կրկնել՝ ես
արձակեմ՝ զքեզ յամենայն մեղաց քոց
ձեւն . եթէ ապաշխարողն մի կա-
տարեալ զղջումն չունենայ, այն
ձեւն զերօյի, և մի կեղծ դրամի
արժէքէն աւելի արժէք կարող չէ
ունենալ . մանաւանդ այս վիճակի
մէջ խոստովանութեան ատեա-
նէն պիտի բաժնուինք, մեր մեղաց
քսակն մեր ուսերուն վերայ կրե-
լով, և որ ցաւալին է՝ զայն սրբա-
պղծութեան մեղօք առաւել ծան-
րացած պիտի գտնեմք: Վասն զի

Աստուած՝ որ սրտագէտն է և կը տեսնէ թէ ինչպէս այն ստախօս խոստովանողն կը ջանայ կրել յինքեան մի ջերմ փափաք ՚ի մեղս յարատեւելու, փոխանակ վաւերացնելոյ և հաստատելոյ քահանային արտասանած ձեւն, ընդհակառակն կ'ըսէ, ես ոչ արձակեմ՝ գրեզ ՚ի մեղաց քոց :

Ի՞նչ է ուրեմն գղջումն, որով խոստովանութիւնն վաւեր կը լինի. գղջումն է «ցաւ հոգւոյ ամենամեծ, և անկեղծ, և սաստիկ աւտելութիւն մեղացն գործելոց, հանգերձ առաջագրութեամբ ոչ ևս մեղանջելոյ այնուհետեւ :»

Այսինքն՝ հոգին մեղաց վերայ մի ամենամեծ ցաւ ունենալով, անկեղծօրէն և սաստկապէս աւտելու է զայն, և գարշելու է անտի. և այնուհետեւ այլ ևս չմեղանջելոյ առաջագրութիւն ղենելու է :

Հստ զանազան պատճառաց՝ որովք գղջումն կ'ունեցուի, երկուքի կը բաժնուի. Ա. ՚ի կատարեալն (*contritio*) և Բ. յանկատարն (*attritio*).

Չոր օրինակ. Վահրամ մեղաց սարսափելի հետեւութեանց վերայ կը մտածէ. այսինքն թէ՛ ինքն իւր հոգին մեղօք աղտեղած է, և յայնմ մի այնպիսի արատ տպաւորած է, որ զայն սատանայի նմանեցուցած է. կը խորհի որ իւր մեղքերովն զրկեալ է յԱրքայութենէ, և արժանացած է դժոխոց : Այս խորհրդածութիւններով իւր ըրած սխալմունքն կ'ըմբռնէ, կը գարշի իւր մեղքերէն, զայնս կ'ատէ, և գործած լինելուն վերայ կը ցաւի. յանձնառու կը լինի մանաւանդ մեռնիլ քան ուրիշ անգամ մեղանջել : Այս գղջումը՝ զոր կը յղանայ Վահրամ իւր սրտի

մէջ, անկատար կը կոչուի, զի յառաջ եկած է այս ցաւն երկիւղի պատճառներէ :

Իսկ Արամ ասով գոհ չլինիր, այլ աւելի յառաջ կ'երթայ. կը բարձրանայ ազնուագոյն և բարձրագոյն պատճառաց. կը մտածէ թէ որքան բարի է Աստուած յինքեան, և թէ որքան արժանի է Նա իւր կատարելութեամբն 'ի մէջ սիրուելու. կը մտածէ թէ իւր մեղքերովն վշտացուցած է և անարգած այնքան բարի, այնքան սուրբ, այնքան սիրելի և այնքան առատաձեռն մի Աստուած, Անոր կռնակ դարձուցած է, Անոր դէմ ապստամբած է, և զնա վերստին 'ի Խաչ հանած է : Այս խորհրդածութիւններով Արամայ սիրտն կը փղձկի, կ'ըմբռնէ իւր ապերախտութիւնն, կը զգուի մեղքերէն և զայնս կ'ատէ ուժգնապէս, գոր-

ծած լինելուն վերայ չափազանց ցաւ կ'զգայ, և յանձնառու կը լինի առաւել ևս մեռանիլ՝ քան ուրիշ անգամ մեղանչել : Այս զղջումն՝ որ Արամայ սրտին մէջ կը ծնի, կատարեալ կը կոչուի :

Անկատար զղջումն մեղաց թողութիւն ընդունելու համար բաւական է. սակայն հարկ անհրաժեշտ է խոստովանութիւնն. մինչդեռ կատարեալ զղջումն՝ որ գերազանց է քան զառաջինն, և մի ազնուագոյն պատճառէ՝ այսինքն 'ի սիրոյ յառաջ կուգայ, ըստ ինքեան (ենթադրելով միշտ բարի կամքն և բարի դիտաւորութիւն խոստովանելոյ) մեղաց թողութեան համար բաւական է, և պէտք է որ ջանամք մեր սրտի մէջ մի այսպիսի զղջումն արտադրել :

Զղջումն որպէս զի վաւեր և ընդունելի լինի, պէտք է որ հետե-

ւեալ յատկութիւններն ունենայ .
այսինքն պէտք է որ՝ 1⁰ Ներքին ,
2⁰ Գերքնական , 3⁰ Գերազոյն , 4⁰
Ընդհանուր լինի :

1⁰. Զղջումն պէտք է ներքին լի-
նի , այսինքն 'ի սրտէ յառաջ գա-
լու է : Սրտէն յառաջ գան մեղք .
հետեւաբար , ո՞վ սիրելի հոգեսէրդ
իմ , սիրտն պարտի ապաշաւել .
մեր սիրտն հարկ է որ զգածուի
մեղաց չարութեան վերայ և ա-
պաշաւէ : Ոմանք կը ցաւին լալով
և ողբալով գործած մեղացն վե-
րայ և ստէպ խոստովանութիւնն
հառաչանօք և հեկեկանօք կ'ընդ-
միջեն : Սակայն այս օրինակ ցոյ-
ցեր թէ և նշան են ներքին զղման
և ցաւոց , այսու ամենայնիւ ըստ
ինքեան զղջումն չեն : Ուստի հարկ
է որ զղջումն 'ի ներքուստ բղխէ ,
և իւր աթոռն սրտին ներքին խո-
րերուն մէջ հաստատէ :

2⁰. Զղջումն գերբնական լինելու
է , այսինքն պէտք է որ շարժի 'ի
մեզ 'ի շնորհաց և յառաջ գայ հա-
ւատոյ պատճառներէ : Բացայայտ
լինելու համար ահա քեզ մի օրի-
նակ , ո՞վ հոգեսէր հաւատացեալդ
իմ , որով աւելի լաւ պիտի ըմ-
բընես և լուսաւորուիս :

Միհրան ուրիշէ մը թելադրեալ
անպատիւ մի մեղանչական գոր-
ծով իւր խիղճը կ'արատաւորէ :
Այս մեղքն պատահմամբ երրորդէ
մը կը լսուի , որն որ չորրորդի մը
կը հաղորդէ . և այսպէս յաջորդա-
բար քիչ ժամանակի մէջ ընդհա-
նուր գաւառին մէջ կը տարածի :
Խեղճուկ Միհրան տեսնելով որ
ծանակ ու նշաւակ է եղած ա-
ռաջի ամենեցուն , կը ցաւի , կը
տառապի և իւր սրտին մէջ չա-
փազանց վշտեր կ'զգայ : Կը զղջայ
իւր գործած մեղաց վերայ , չու-

գեր այլ ևս գործել և ոչ մի փոքր մեղք, նախադասելով մահն՝ մանաւանդ քան նմանօրինակ մեղաց մէջ անկանիլ։ Սակայն այսչափ ցաւոց և վշտաց պատճառն ուրիշ բան չէ՝ եթէ ոչ իւր մեղաց յայտնութիւնն, իւր անուանարկութիւնն, և իւր համբաւոյն նըսեմութիւնն։ Միթէ այս գղջումն գերբնական կրնայ նկատուիլ ամենեւին ոչ. քանզի սոյն վիշտն յառաջ եկած է ի բնական պատճառաց, և ոչ ազդեալ ի հաւատոց և ի ճշմարիտ սիրոյ։

Իսկ Վահան կը ցաւի, կը գղջայ իւր անկարգ վիճակի մէջ գըտնուելուն, և անկէջ բնական հիււանդութեանց ենթարկուելուն վերայ։ Միթէ սոյն գղջման գերբնական յատկութիւն ունենալն կրնամք հաւաստել. ոչ երբէք վասն զի յառաջ եկած է ի մարդ-

կային ակնածութեանց և ի Փիզիգական վնասուց։

Մեր գղջումն ուրեմն կատարեալ և ընդունելի լինելոյ համար, պէտք է որ յղանայ ի մեզ շարժեալ ի սուրբ և ի գերբնական պատճառաց. այսինքն ի խորհրդաժողովեանէ՝ թէ մեղքն հոգւոյն գեղն կը ջնջէ, զայն Աստուծոյ թշնամի կ'ընէ՝ և յաւիտենական մահուան կը դատապարտէ, զայն իւր Արարչին և Փրկչին ապերախտ և ապստամբ ընելով, գերի կ'ընէ սատանայի ևայն։

3⁰. Զղջումն պէտք է որ գերագոյն լինի. այսինքն ցաւելու եմք առաւել մեր գործած մեղաց համար, քան թէ ուրիշ ո՛ր և իցէ դժբաղդութեան վերայ. զի արդեամբ մեղքն է չար, և գերագոյն չար, և քան զամենայն չարիս չարագոյն։

40. Վերջապէս զղջումն ընդհանուր լինելու է . այսինքն հարկ է որ տարածի ընդհանուր գործեալ մահացու մեղաց վերայ . այնպէս որ եթէ մի մեղանշական գործ իսկ դուրս ձգուի և այնր վերայ չզղջայ մեղանշողն , ոչինչ է զղջումն , և նշան է թէ այնախառն սրտին մէջ ցաւոց և ոչ մի փոքրիկ նշոյլն իսկ գոյութիւն ունի : Երբ ուրեմն , ով հոգեսէր սիրելիդ իմ , ուզես զղջալ , զոր օրինակ՝ անհնազանդութեան և որկրամոլութեան մեղաց վերայ , և չուզես զղջալ մեղանշական յարաբերութեանց վերայ՝ զոր ունիս այս ինչ կամ այն ինչ անձին հետ , և կամ մի այլ մեղքիդ վերայ , բարի կամք չունենալով միանգամայն հեռի կենալոյ յայնցանէ , քո զղջումն և քո ցաւ ոչինչ է , ըստ որում ընդհանուր չէ :

Ըստ գրեալ եղանակին՝ մի ճշմարիտ զղջումն ունենալոյ համար , նախ քան վամենայն առ Աստուած դիմելու ենք , վասն զի միայն յԱստուծոյ կարող եմք ունենալ զղջման հոգին և շնորհքն : Երկրորդ՝ միշտ մեր երեւակայութեամբ մեր առջեւ ունենամք զԱրքայութիւն երկնից . մտածեմք այն տեղւոյն պայծառութիւնն , երգոց քաղցր ներդաշնակութիւնն , հրեշտակաց գեղն ու գեղեցկութիւնն , ուրախութեանց լրումն , վայելից և երջանկութեան յաւիտենականութիւնն : Ապա դառնամք , մեք մեզ ըսեմք , տես , ով անձն իմ , տես ուրկից զըրկուած ես , և որպիսի մի հայրենիքէ հեռացած ես , այն ոչինչ և վայրկենական հաճոյից համար : Արքայութիւնն մտածելէն յետոյ՝ անցնիմք սոյն այս գեղեցիկ

զգացմամբք դարձեալ մեր երեւակայութեամբն նկատել այն ցաւոյ բնակարանն , որ է մասն և բաժին մեղաւորաց : Մտածեմք որ չիք անդ և ոչ մի լուսոյ ստուեր , որով փայլին աչք . մտածեմք այն յաւիտեանական հուրն որում մի գերբնական զօրութիւն տուեալ է յԱստուծոյ , այրելու և տոչորելու մարմնոյն պէս նաև զհոգին , առանց 'ի կենաց զայն զրաւելոյ . մտածեմք այն լացերն և ողբերն , այն հաչումն ու հառաչումն՝ որ վերջ չունին , այն հեկեկանքն որ չմեղմանայր երբէք , այն անանց և անշէջ պասուլքն և 'ի ծարաւոյ պապակումն , այն հայհոյութիւնքն , այն ատամանց կրճատումն , որ օր քան զօր կը սաստկանան . մտածեմք վերջապէս 'ի մի բան՝ այն վշտաց , տառապանաց , հեծութեանց և տագնապի

անհուն , անսահման , և անըմբռնելի բեռն , որ կը ծանրանայ ցաւաւիտեանս դատապարտելոյն վերայ , և յետոյ բոլորովին զգածեալ սրտիւ ըսեմք մեր անձին . ահա , ո՞վ անձն իմ , զոր ինչ շահեր ես քո մեղքերով . . . եթէ ամենագութն Աստուած գթալով քո վերայ մինչ ցայս կէտ պահպանած չլինէր զքեզ , հիմա դու հոս էիր . հոս պիտի տանջուէիր . . . հոս՝ ուր որդն ոչ մեռանի և հուրն ոչ շիջանի :

Այս կէտերն մեր մտաց մէջ մըտադրութեամբ յեղյեղելէ յետոյ , դիմեմք աւելի ազդու և լաւագոյն միջոցին . այսինքն՝ փոխադրեմք զմեզ Գողգոթայի լեռն , ուր 'ի Խաչին կախեալ կայ մեր ամենափրկելի Փրկչին ցուրտ սուրբ մարմինն : Ո՛հ , դիտեմք այն բարեհայեաց աչերն մահուան քօղովն

ծածկուած . . . այն շրթներն՝ ուս-
տի երբեմն քաղցր խօսքեր կ'ար-
տաբերէին , հիմա բոլորովին կա-
պուտակ և կիսաբաց . . . այն ամե-
նասիրելի և պաշտելի Դէմքն՝ յո-
րում հրեշտակաց անմեղով թիւնն
կը փայլէր , հիմա արեամբ թա-
թաւեալ լինելով բոլորովին տը-
գեղացած և աւերեալ , անձանա-
չելի է դարձած . . . այն անդամ-
ներն՝ որք Աստուածային սրբու-
թեամբ և մաքրութեամբն զմարդ
'ի սրբութիւն և յամբծութիւն կը
հրաւիրէին , հիմա բոլորովին ջախ-
ջախեալ և ջլատեալ ճաղկանք-
ներէ , և արեամբ ողողեալ . . . այն
ձեռներն՝ որք առատապարգեւ
կը կարկառէին մեղաւորաց սիրա-
լիր ընդունելութեան համար , ա-
մենուրեք և ամենուստեք կը բա-
րերարէին . . . այն ոտներն՝ որք
խոնջ և վաստակ չգիտէին կո-

րուսեալ ոչխարներն փնտուելու
համար , հիմա գամբրով ծակծը-
կած . . . սէ , հապա այն սիրտն՝
որ մի միայն զմեզ սիրելոյն մէջ
իւր հանգստութիւնն ու անդոր-
բութիւնն կը վայելէր , և մեզ հա-
մար միայն կը բաբախէր , այն ևս
այժմ կարեմէր խոցեալ է . . . :

Սոյնգունակ սուրբ խորհրդա-
ծութիւններով տոգորուած անդ-
րադառնանք մեր վրայ և ըսենք .
տեո ով անձն իմ , տեո քո ամե-
նասիրելի Փրկչին քեզ համար
կրած նեղութիւնքն , վիշտքն և
տառապանքն . . . Նա անհուն սի-
րով սիրեց զքեզ , և միայն քո սի-
րոյն համար ինքզինքն այս դառն
չարչարանաց ենթարկեց . . . իսկ
դու ապերախտ գտնուելով Անոր ,
վերստին զինքն չարչարեցիր , ձաղ-
կանօք և փշեայ պոսկով իւր ան-
գին Արեան թափուելուն պատ-

ճառ եղար, դու քո անթիւ անհամար մեղքերովդ զՈրդին Աստուծոյ դարձեալ խաչեցիր, և քո սիրելի Փրկչին մահուան պատճառ լինելով՝ Նորա բարեկամութենէն զրկուեցար, նետելով ըզքեզ քո հոգւոյդ թշնամւոյն սատանայի բազկաց մէջ... Ո՛հ, ինչ ապերախութիւն, ինչ աստիճանի չարութիւն... :

Այս՝ և ասոր նման գեղեցիկ խորհրդածութիւններով ազդեցիկ տպաւորութիւններ պիտի ունենաս՝ ի քեզ, ո՞վ սիրելի հոգեսէրդ իմ, և անտարակոյս պիտի ծագի՝ ի քեզ մի ճշմարիտ զղջումն. մանաւանդ եթէ մի աւելի կենդանի երեւակայութիւն ունենալու համար, ունեւորով ի ձեռին մի խաչելութիւն, ահն յառեալ ի Նա անքթիթ աչօք դիտես քո խաչեցեալ Տէրն և Արարիչն : Այսու

եղանակաւ Աստիգացիին և այլ Սրբոց նման՝ դու ևս կատարեալ և մի մեծ ցաւ պիտի զգաս քո մեղաց վերայ . և այլ ևս չմեղանջելոյ համար հաստատուն առաջադրութիւն մի պիտի դնես . աւելի մեռնիլ պիտի տենչաս քան ապրիլ մեղօք հեռի յԱստուծոյ, մերձ և գերի մեր հոգւոց թըշնամւոյն, սատանայի :

3. Առաջադրութեան վերայ

Բնական է, սիրելի հաւատացեալ հոգեսէրդ իմ, թէ երբ մէկը զգայ կատարելապէս մեղաց ատելի և գարշելի լինելն, և հետեւաբար զայն ատէ և խորշի յայնմանէ, զղջայ, կ'ըսեմ, ճշմարտիւ գարշելի և ատելի մի գործքովի իւր անհուն և ծայրագոյն Բարին վշտացուցած լինելուն վերայ, բնական է՝ կը կրկնեմ, որ ինքն՝

միանգամայն իւր սրտին մէջ կը խոստանայ հաստատուն խոստամամբ, այլ ևս մի այսպիսի գործք չընելու:

Սակայն ցաւ 'ի սիրտ կը յայտնեմ՝ քեզ, ով հոգեւեղդ իմ սիրելի, թէ կան շատեր, որք կարծեն թէ այս առաջադրութիւնն, այս խոստումն կատարած կը լինին, երբ պարզ և անհաստատ խօսքեր կ'արտաբերեն ըսելով, «Ո՛վ Տէր իմ և Աստուած, ես հաստատ դիտաւորութիւն կը դնեմ այլ ևս չմեղանջելոյ, ոչ ևս մեղք, ոչ ևս մեղանջել»: Եւ միայն այս սին ու ոսին խօսքերով կը բաւականանան և կ'երթան խաբել իրենց խոստովանահայրն, կարծելով ևս խաբել զամենագէտն Աստուած:

Ոչ, ոչ, սիրելիդ իմ, այս եղանակաւ առաջադրութիւն կատարեալ և բաւական չլինիր, այլ

այս ևս մի քանի յատկութիւններով զարդարուած լինելու է. որով թէ կատարեալ և թէ օգտակար լինի. պէտք է, կ'ըսեմ, որ կամքն որոշէ, առաջադրէ, բացարձակապէս կամի այլ ևս չմեղանջել. միով բանիւ, ունենալու է ներքին կերպով մի առաջադրութիւն որ՝ 1⁰ հաստատուն, 2⁰ բացարձակ, 3⁰ ընդհանուր, 4⁰ ազդու լինելու է, ապա թէ ոչ անգոր և անբաւական կը լինի. հետեւաբար խոստովանութիւնն ևս անօգուտ և անվաւեր:

1⁰. Առաջադրութիւնն պէտք է որ նախ հաստատուն լինի. այսինքն պէտք է որ մեր կամքն հաստատուն կերպով տրամադիր լինի մանաւանդ մեռնիլ քան մեղանջել ամենաբարի Աստուծոյ դէմ. այնպէս որ ծանր պատահարներ, ճախորդութիւններ, վշտեր, տա-

ռասպանքներ , աղքատութիւններ
և հիւանդութիւններ մեր աչաց
առջեւ ոչինչ երեւելու են , և ա-
ւելի ասոնց յանձնառու լինելու
եմք՝ քան ամենափոքր եղանակաւ
իսկ մեղանջել :

Սակայն ինչպէս գիտելու եմք
մեր նախկին առաջադրութեանց
մի այսպիսի հաստատութիւն ու-
նենալն կամ ոչ : Սորա փորձ դիւ-
րին է : Որմնադիրն ինչպէս կրնայ
իւր շինած պատին հաստատու-
թիւնն գիտել և վստահ լինել
յայն : Այն ատեն միայն՝ երբ կը
տեսնէ իւր շինած պատերն՝ որք
ոչ հողմերէ և ոչ հեղեղներէ կը
տապալին , այլ ամրապինդ կան
ու կը մնան ու և է ընդդիմութեանց
դէմ : Այսպէս ալ մեք՝ երբ կ'ու-
ղեմք գիտել թէ մեր առաջադրու-
թիւնքն հաստատուն են՝ թէ ոչ ,
մեք մեզ հարցունելու եմք՝ թէ

արդեօք մեր խոստովանութենէ
ետք , այն ինչ սատանայական
փորձութեանց ընդդիմացմնք ,
կամ հոգնեցմնք գոնէ ընդդիմա-
նալ . եթէ մեր խիղճն պատաս-
խանէ բացասապէս , այն ատեն
անկասկած կը լինիմք թէ մեր
նախկին առաջադրութիւնքն հաս-
տատութիւն չեն ունեցեր . զոր
օրինակ՝ պատն՝ որ շինուելէ վերջ
մի փոքրիկ հողմէ կը շարժի , մի
փոքրիկ հեղեղէ կը տապալի :

Կամք՝ որ ամէն փորձանաց հող-
մէ կը շարժի եղէգնանման , և կը
փոխուի , չէ կարող վստահիլ իւր
առաջադրութեանց վերայ . ուստի
մի հաստատուն կամք ունենամք ,
և այս կամքով առաջադրեմք , որ-
պէս զի արդիւնաւորիմք : Սուրբն
Պետրոս Առաքեալ , Սրբուհին Մա-
րիամ Մազթաղենացի , Սուրբն
Օգոստինոս , Սրբուհին Մարգա-

րիտա վշտացուցին, այո՛, իրենց Արարիչն, բայց զօրութեամբ իւրեանց հաստատ առաջադրութեանց, այլ ևս չմեղանչեցին. և այսօր Խորաններու վերայ կ'ընդունին ՚ի մէնջ յարգութիւն և պաշտօն: Սրբուհին Մարիամ Եգիպտացի ամբողջ տասն և եօթն երկար տարիներ զանազան և տարբեր փորձութիւններով փորձուեցաւ, մանաւանդ ըսենք տանջուեցաւ. բայց իւր առաջադրութեան հաստատութեամբ յաղթեց միշտ բանսարկու օձին և չինկաւ երբէք, այլ յաղթութեան փառաց պսակով պսակուեցաւ:

Կը փափաքիմ, «վ հոգեսէրդ իմ սիրելի, որ դու ալ այս սրբոց նմանիս: Ուստի, ջանա՛ որ քո առաջադրութիւնք հաստատուն լինին, և աշխատէ՛ օր ըստ օրէ բարւոքել քո կեանք, զի մի գուցէ

կասկածելի լինին քո խոստովանութիւնք:

2⁰. Առաջադրութիւնն պէտք է որ բացարձակ՝ այսինքն առանց թէութեան լինի: Զոր օրինակ. Գեղամ հետեւեալ առաջադրութիւններն կը դնէ: Ես կը խոստանամ այլ ևս չհայհոյելոյ, այսու դաշամբ որ՝ այս ինչ ձախորդութիւնն գլխուս չպատահի, կինս ինձ հնազանդ լինի, կամացս հակառակ չգործուի երբէք: Ես կը խոստանամ այս ինչ մարդուն հետ հաշտուելու, և զանի չատելու, բայց սա թէութեամբ՝ որ նա այլ ևս ինձ դէմ չխօսի, իմ կրած ֆլասներս տուծէ, նորա երեսէն տեսած նիւթական և բարոյական ֆլասներէս ազատիմ, և նախկին վիճակիս և աստիճանիս հասնիմ: Ես կը խոստանամ այս ինչ մարդուն չֆլասել, սա դաշամբ՝ որ

նա ինձ փոխարինութիւն ընէ այս ինչ եղանակաւ : Ես կը խոստանամ որ կաշառ չընդունիմ ոչ մէկէ , այսու թէութեամբ՝ որ ինձ բաւականաչափ թոշակ յատկացուի :

Իսկ Աշխէն յետագայ կերպիւ կ'առաջադրէ չմեղանջել : Առաջի Աստուծոյ կը խոստանամ և դիտաւորութիւն կը դնեմ երբէք անիծաբանութիւն չընելոյ . սակայն սա թէութեամբ՝ որ իմ չար որդիքս հանդարտ լինին , խելօք լինին , սիրտս չնեղացնեն , այրս արբենալով զիս չգանակոծէ : Ես կը խոստանամ որ այս ինչ անձին հետ մտերմութիւն չունենամ , անոր հետ շատ չտեսնուիմ , միայն սա թէութեամբ՝ որ նա իմ քով չյաճախէ , հեռի կենայ ինձմէ , և իմ այրս ալ ըստ ամենայնի հաւատարմութիւն պահէ , ևայլն :

Միթէ Գեղամ և Աշխէն այս-

պէս՝ կատարեալ և ճշմարիտ առաջադրութիւն ըրած կը համարուին . ոչ երբէք . վասն զի բացարձակ չէ իրենց առաջադրութիւն , այլ բոլորովին թէական , որով և բնականաբար անվաւեր և ոչինչ են : Ընդհակառակն բացարձակ և հաստատուն պիտի լինէին իրենց առաջադրութիւնք , երբ խոստանային անկեղծօրէն այլ ևս մեղաց մէջ չգլորելու , առանց ո՛ր և է թէութեանց և դաշանց . մինչեւ իսկ այնու ամենածանր վտանգաց հանդիպէին . միով բանիւ եթէ կամենային յաղթել ամենայնի վասն սիրոյն Քրիստոսի :

ՅՊ. Առաջադրութիւնն պէտք է որ ընդհանուր լինի . այսինքն երբ մի ոք առաջադրէ , պէտք է որ ուխտէ առաջի Աստուծոյ ո՛ր և է մեղք չգործելու առանց բացառութեան բոլոր իւր կենաց չըր-

ջանին մէջ: Ուստի անվաւեր և ոչինչ է առաջադրութիւն այն մարդուն՝ որ կ'ըսէ. կ'առաջադրեմ այս ինչ մեղքերն չգործել, բայց ոչ երբէք այն ինչ մեղքն. վասն զի չեմ կարող հրաժարիլ յայնմանէ: Այսօր երթամ խոտովանիլ, խիղճս լաւ մը մաքրել և մինչեւ մի ամիս մեղք չգործելոյ առաջադրել. սակայն յետ մի ամսոյ, էհ, այն ինչ մեղքն բոլորովին շուտ մը թողուլ՝ քիչ մը գործիս չգար. մանաւանդ որ շատ տառապելու եմ անկէ հեռի մնալոյ համար: Կը տեսնես որ այս առաջադրութիւնք ընդհանուր չեն, որովհետեւ ոչ ընդհանուր մեղաց վերայ կը տարածին, և ոչ իսկ բարի կամք կը տեսնուի ընդ միշտ չգործելոյ գնոյն մեղս, առ որ ունակացած է մի ոք, և յորմէ հրաժարիլ յոյժ կարեւորագոյն է:

Ուստի պէտք է որ ամէն ոք առաջադրէ ոչ թէ այս ինչ մեղքն կամ այն ինչ պակասութիւնն չվերակրկնելու, այս ինչ չափ ժամանակ ժուժկալելու և հրաժարելու, այլ բնաւին և իսպառ մեղք չգործելու և զայն չճանաչելու իսկ: Ապա թէ ոչ՝ խոտովանութիւնն անվաւեր և անօգուտ կը լինի:

Հոս՝ կարելի է թէ մէկը հետեւեալ հարցումն ընէ:

Ես հաստատուն կամքով կ'առաջադրեմ այլ ևս չմեղանչելոյ. սակայն անձս փորձելով և դիտելով կը վրդովիմ և կը խռովիմ թէ՛ շատ դժուարին պիտի լինի հաստատուն մնալ սոյն առաջադրութեանս մէջ, և կ'երկնջիմ զի մի գուցէ կրկին գլորիմ մեղաց մէջ: Արդ՝ իմ առաջադրութիւնս բացարձակ և ընդհանուր կրնա՞յ համարուիլ արդեօք: Անտարա-

կոյս : Որովհետեւ դու անյողդողդեղ Կամքով խոստացեր ես չմեղանջել, թէ և միտքդ գուշակէ, և երկնչի կրկին մեղանջել : Վասն զի գուշակելով և երկնչելով վերըստին մեղանջելու Կամք ունեցած չես լինիր :

Ահա քեզ մի փոքրիկ օրինակ :

Անգամ մի, մի եղիւելի ծերունի, անկարող լինելով ոտքերուն վերայ կանգուն կենալ, լեռնէ մի վար կ'իջնար գաւազան 'ի ձեռին : Խեղճուկն՝ ըստ պահանջմանց եղանակին, բարի և գեղեցիկ մի աւուր հանդիպած չէր, այլ ամէն կողմ սառերով չրջապատեալ էր, և այդ լեռուն գրեթէ սառոյցի մի կոյտ դարձած էր, հետեւաբար ճանապարհն խիստ վտանգաւոր էր : Ուստի ծերուկն յեցած յիւր գաւազան, դողդոջուն տոներով քայլ առ քայլ յառաջ

կ'երթար մեղմիկ . բայց գիտես իւր մտաց մէջ ինչ կ'որոճար . սարսափահար կ'երկնչէր և զարհուրանօք կ'ըսէր թէ, անկարելի և խիստ դժուարին բան է որ՝ ես այսօր առանց գահավիժելու և կեանքս վտանգելու այս սառնապատ լեռան ստորոտն իջնեմ : Արդարեւ խեղճ ծերունին սոյն սրտատանջ ծփանաց մէջ կը տարուբերէր մի քայլէն առ միւսն սառոյցներէն 'ի վար թաւալգլոր խաղալու՝ և ջարդահոտոր լինելու գուշակութիւններով, որում երբէք Կամք չունէր, և տկարաց ձեռնտու ամենազօր Աստուծոյ օգնութեամբն առանց վտանգի իջաւ այդ ահարկու լեռուն :

Ահա ուրեմն ինչպէս մարդ կարող է՝ թէ ձախորդ գուշակութիւններ լուսնեալ, և թէ միանգամայն հաստատ և յորոշեալ Կամք

ուենեալ երբէք չգայթեալու օգնականութեամբ Աստուծոյ : Այնպէս մի մեղաւոր , մանաւանդ ունակացեալն 'ի մեղս , նման մեր խարխուլ , դողդոջ ծերունոյն , մեղաց սառնապատ լեռնէն վար կ'իջնայ , բոլորովին տկար և անզօր , ծանրածանր վտանգներով շրջապատեալ , սակայն կարող է անյողդողդ կամքով առաջադրել առաջի Աստուծոյ երբէք չմեղանշելոյ , հայցելով Երկնային մեծազօր օգնականութիւնն , որ իւր բաղմատագնապ լնտաց և սրտի տարակուսանքներն և գուշակութիւններն ցրուող յենարանն ունեցուին է , և այսու այլ ևս մեղաց մէջ չգլորեալու՝ և հոգին ամբիժ և անարատ պահելու :

4⁰. Վերջապէս առաջադրութիւնն պէտք է ազդու լինել , այսինքն ոչ միայն պարտիմք հաս-

տատապէս առաջադրել չմեղանշելոյ , այլ նաեւ մեղաց մերձաւոր առիթներէն իսկ խուսափելոյ , և ամենէն ազդու եղանակաւ մեղաց մէջ չանկանելոյ կարեւոր միջոցներն 'ի կիրարկանելոյ՝ և 'ի գործ դնելոյ կատարեալ առաջադրութեամբ զինեալ լինելու եմք : Եթէ ուրեմն , մերձաւոր առիթներն վերցնելու և խոստովանահօր թեւադրած միջոցներն 'ի գործ դնելու բարի կամք և որոշողութիւն չունենամք , կը հետեւի թէ մեք ոչ երբէք 'ի մեղաց հեռի մնալու առաջադրութիւն ունիմք , և ոչ կամք՝ ատել զմեղս , համարելով և ձանաչելով զայնս՝ ինչպէս որ են , գարշելի և ամենազգուելի , առաջի ամենասուրբ կամացն Աստուծոյ :

Ի՞նչ պիտի ըսէինք , երբ տեսնէինք մէկն՝ որ սառոյցներու վե-

բայ բազմիցս գլորելով և վնասուելով, կ'որոշէ այլ ևս չգլորիլ, և այսու ամենայնիւ կ'ուզէ միշտ սառույցներու վերայ շրջիլ, և կամ բազմիցս այրած լինելով խոկ, միտքը կը դնէ երբէք չայրիլ, և 'ի վերայ այսր ամենայնի, միշտ կրակներու և բոցերու մէջ կը վազէ. հարկաւ պիտի զայրանայինք և զարմանայինք այդպիսի մի յիմարի վերայ, և պիտի ազդարարէինք ազդու եղանակաւ այլ ևս սառույցների վերայ չշրջիլ և հեռի կենալ կրակներէ և բոցերէ: Ծիշդ այս եղանակ պիտի պատասխանէի այնպիսւոյն՝ որ կ'ըսէ. ես հաստատ կ'առաջադրեմ մեզքէ հեռի կենալ, այսու ամենայնիւ չուզեր մեզաց մերձաւոր առիթներէն հեռանալ: Միթէ կատարեալ յիմարութիւն չէ՞ այս:

Եթէ Պետրոս Առաքեալ շարու-

նակէր մնալ Կայիափայի ապարանաց մէջ, ուր երիցս իւր Տէրն ուրացաւ, միթէ մի ազդու առաջադրութիւն ըրած պիտի լինէր. ոչ երբէք. ահա այս պատճառաւ է որ հազիւ կ'ըմբռնէ թէ հոն մնալն իրեն համար վտանգաւոր է, կը փախչի այն մեզաց մերձաւոր առիթն, և կ'ենէ դուրս և կ'սկսի արտասուել: «Ել արտաքս և ելաց դառնապէս»:

Մեք ևս ուրեմն, սլ հոգեսէր սիրելիդ իմ, հետեւիմք Սրբոյն Պետրոսի օրինակին, մի ազդու առաջադրութիւն ընելով, մեր հրաժեշտն տամք այն տեղեաց, այն անձանց, այն իրաց՝ որք մեզ մեղանչելոյ մերձաւոր առիթ եղած են, և կամ կրնան լինել. և այս գովելի տրամադրութեամբք մերձենամք առ մեր խոստովանա-հայրն, և խոստովանիմք մեր մեղ-

քերն անկեղծութեամբ սրտի 'ի սրբութիւն և 'ի մաքրութիւն մեր անմահ հոգւոց :

4. Ա. Խոստովանելու պարտաւորութեան վերայ: Բ. Լաւ խոստովանութեան համար պահանջեալ տրամադրութեանց վերայ: Գ. Խոստովանութեան մի բանի կէտերի վերայ խորհրդածութիւնք .

Ա. — Մարդկութեան անհաշտ թշնամին՝ սատանայն , կ'ըսէ Ս. Յովհան Ոսկեբերան , իւր խորագիտութեամբն զմարդ որոգայթի մէջ ձգելով , զնա Աստուծոյ գէմ մեղքով ապստամբեցնելոյ համար բազմատեսակ հնարիւք կ'աշխատի՝ փաղաքշելով թեւադրել զնա յուսալու մի դիւրին ներումն և թողութիւն մեղաց խոստովանութեան միջոցաւ : Սակայն հազիւ թէ կը ձգէ զնա իւր թակարդին

մէջ , կ'սկսի այն ատեն բոլորովին հակառակն գործելով , նկարել նորա աչաց առջեւ մեղաց ծանրութիւնն , և ներումն ու թողութիւնն չափազանց եղանակաւ դժուարացնելով , կը ներմուծէ նորա սրտին մէջ առաջի քահանայի խոստովանելուն մի ամօթալի գործողութիւն լինելուն գաղափարն :

Գրեալ թէ բանսարկու և չար օձն՝ ոսոխն մարդկութեան , 'ի գործ դնել կ'ուզէ՝ զոր 'ի գործ կը դնէ այն անգութ սիրտն , որ յետ վիրաւորելոյ զիւր ախոյեանն , նոյն վիրաց բաւասանին մէջ ևս թոյն կը խառնէ , որպէս զի վերքն բոլորովին մահացու լինի թշուառ վիրաւորելոյն , փոխանակ անտի բուժուելու :

Այսպիսի անհնարին չարեաց մի դարման հայթայթելոյ համար ուրեմն , նախ մի քանի խօսք պիտի

ըսեմ խոստովանութեան պարտաւորութեանցը վերայ, և ապա խոստովանութեան ատեն անկեղծ լինելոյ կարեւորութեան վերայ: որով պիտի տեսնեմք պատճառներն, ոյց սակա ոմանք կը լռեն իւրեանց մեղքերն, և այսու դեղն 'ի թոյն փոխարկելով, կը մատնեն իւրեանց հոգիներն մշտնջենաւոր մահու:

Արդէն ամէն ոք գիտէ թէ՛ յետ մկրտութեան՝ ներգործական մեղաց ներքեւ ընկձեալ մէն մի անհատ պարտաւոր է խոստովանիլ, և ոչ ոք կարող է փրկութիւն գտնել առանց կատարելոյ զայս պարտաւորութիւն: Հետեւաբար ինչպէս մկրտութիւնն հարկաւոր է կարեւորութեամբ միջոցի, առանց որոյ ոչ, վասն ջնջման տիրոջ նական մեղաց, նոյնպէս և նոյն եղանակաւ խոստովանութիւնն

կարեւոր է վասն բարձման ներգործական ծանր մեղաց:

Սակայն կարելի է, ով հոգեսէր հաւատացեալդ իմ, տարակուսիս թէ արդեօք մի անհատ՝ որ 'ի սիրոյ պատճառաց շարժեալ մի կատարեալ զղջումն ունի իւր մեղաց վերայ, չէ կարող իւր մեղացն թողութիւն ընդունիլ առանց խոստովանութեան իսկ: Սակայն գիտցիր որ այդպիսին՝ թէև իւր կատարեալ զղջմամբն մեղացն թողութիւն կը գտնէ, այսու ամենայնիւ այդ զղջումն պէտք է որ գոնէ անուղղապէս յինքեան պարունակէ հաստատ առաջադրութիւն ըստ տուեալ առթին նոյն ծանր մեղքն քահանային խոստովանելոյ: Քանզի ով որ կատարեալ զղջումն ունի, ունենալու է միանգամայն հաստատուն կամք Աստուծոյ ամէն հրամաններն 'ի

գործ դնելու : Արդ՝ Աստուած հրամայած է մեզ խոստովանիլ քահանային մեր մեղքերն , քահանայից միայն տալով կապելոյ և արձակելոյ բացարձակ արտօնութիւնն և իշխանութիւնն : Հետեւաբար պէտք է որ այնպիսին հաստատ կամք ունենայ նաև այս հրամանն ևս կատարելոյ . ապա թէ ոչ պիտի ըսէր մէկ կողմէն «Աստուած իմ՝ կը ցարիմ զքեզ վշտացնելոս , որովհետեւ դու սննամսնսն բարի ես» . իսկ միւս կողմէն (միաբը դնելով իւր ծանր մեղքը չխոստովանիլ) պիտի ըսէր . «Ո՛վ Տէր իմ , հոգ չե զքեզ վշտացնել , ես չեմ ուզեր խոստովանելոյ հրամանը կատարել , եւ սիրտի լոճ , սիրտի սրահեմ՝ այն ինչ մեղքս խոստովանութեանս մէջ» : Յայտնապէս ուրեմն կ'երեւի թէ՛ մի այսպիսի անհատ ոչ զգլջումն ունի և ոչ սուղադրութիւն . բնականա-

պէս և ոչ կամք իւր մեղացն թողութիւն ընդունելոյ : Իսկ ընդհակառակն երբ մէկն՝ իմեղս գըտնուելով , մահուան վտանգի մէջ անկանի , և մի կատարեալ զգլջումն ունենալով ուզէ խոստովանիլ , անձկանօք փախաքի մի քահանայ գտնել ի կատարումն իւր պարտաւորութեան , և սակայն կարող չլինի այնմ հասանել , այնպիսին չզրկուիր երբեք երկնից Արքայութենէն , միայն թէ հետեւեալ թէութիւնք կատարուին :

1⁰. Եթէ զգլջումն կատարեալ է և ոչ անկատար , որ չբաւեր առանց խոստովանութեան ի թողութիւն մեղաց :

2⁰. Եթէ արդեամբ և իրօք քահանայ չգտնուի , որ կարող լինի իւր խոստովանութիւնը լսել :

Խոստովանութեան կարեւորութիւնն և ի գործ դրուիլն հին օ-

րինաց մէջ ևս կը տեսնուի, եթէ մի փոքրիկ ակնարկ տամք հետեւեալ վկայութեան. «Այր կամ «կին, յամենայն մարդկեղէն մեղաց, և արհամարհելով արհամարհիցէ՝ և յանցանիցէ անձնն «այն, խոստովան լիցի զմեզս իւր «զոր արար» : (Թուոց Ե. 6-7)

Նոյնպէս կը կարդամք (Ղեւտ. Ի 2. 39-40) : «Եւ մնացեալքն ի «ձէնջ սատակեսցին վասն մեղաց «իւրեանց, յերկրի թշնամեաց «իւրեանց, և վասն մեղաց հարց «իւրեանց, որ ընդ նոսա մաշեացին : Եւ խոստովան լիցին զմեզս «իւրեանց և զհարց իւրեանց զի «յանցեան և արհամարհեցին զիս» :

Այս տեղերէս ի զատ չատ տեղեր ևս կը տեսնեմք Ս. գրոց մէջ, յորս կը հրամայէ Աստուած Իսրայէլի ժողովրդեան, իւրեանց մեղքերն խոստովանելու : Մինչեւ

իսկ կը տեսնեմք ուղղեալ առ ժողովուրդն բանս քաջալերութեան, չչփոթելոյ և չամաչելոյ համար : Ահա ինչ որ կ'ըսէ Սիրաք (Գլ. Դ. 31) այս նկատմամբ. «Եւ վասն մեղաց քոց մի ամաչեր խոստովանիլ» :

Խոստովանութիւնը ուրեմն, ով սիրելի հոգեւոր հաւատացեալդ իմ, մէն մի քրիստոնէի համար կարեւոր է կարեւորութեամբ, առանց որոյ չիք փրկութիւն : Այս միջոցաւ մեք կ'ազատիմք յաւիտենական դատապարտութենէ, և կը բացուին մեզ դրուներ երկնից : Քանի որ մեր հոգին մեղօք չազախեալ է, բոլորովին գերի է նա սատանայի : Եթէ կ'ուզեմք ուրեմն ազատիլ մի այսպիսի անհանդուրժելի գերութենէ, ներումն և թողութիւն հայցեմք յԱստուծոյ վասն մեղաց մերոց :

Կը՛փախաքիմք սոյն ներման և թողութեան, դիմեմք ՚ի խոստովանութիւն, զի այսու միայն կարող եմք սատանային ձեռքէն ազատիլ, Աստուծոյ որդի լինիլ, ստանալով իրաւունք՝ արդեամբ Փրկչին մերոյ ժառանգելոյ զԱրքայութիւն ։

Սակայն այսու չեմ ուզեր իմանալ թէ՛ խոստովանութեան վերայ վստահելով, գիտութեամբ մեղաց մէջ գլորելու է . այսինքն պէտք չէ ըսել, մեղանքնք եւ ապա խոստովանելոյ մեր մեղաց թողոյթիսն կը գտնեմք անտարակոյս ։ Որովհետեւ մի այսպիսի գործողութիւն Աստուծոյ ողորմութեան դէմ մեղանչել կը նշանակէ, և է մի ամենամեծ և գարշելի ապերախտութիւն, և արդիւնք մի յետին աստիճանի անխոհեմութեան . նման այն յիմար մարդոյն՝ որ ինքզինքն կը թունաւորէ, վերջը դեղ-

թափի գտնուելուն դիւրութեան անոտի յուսով ։ Զի ո՞վ կարող է երաշխաւորել մեզ թէ՛ մի յանկարծահաս հիւանդութեամբ մահուան պիտի չմատնուիմք ։ Միթէ մեծ յիմարութիւն չէ մի բորձր տեղէ գահավիժիլ, յուսալով թէ կարելի է գտնուիլ մի բարերար ձեռն՝ որ մեզ կարկառուելով պիտի ազատէ մեր ոսկորներն մի դառն, ցաւալի և սրտատոջոր խորտակմանէ ։

Բ. — Ինչպէս որ անտարակոյս և աներկբայ է թէ՛ եթէ մեք մեր հոգւոց վրկութիւնն կ'ուզեմք գործել, պարտիմք խոստովանիլ մեր մեղքերն . նոյնպէս եթէ կ'ուզեմք մեր խոստովանութեանց արդիւնաւոր լինելն, հարկ անհրաժեշտ է որ լաւ տրամադրեալ լինիմք մեր խոստովանութեանց ժամանակ, այսինքն պարտիմք

1⁰ անկեղծ , 2⁰ խոնարհ , 3⁰ կարճ
և համառօտ լինել :

1⁰. Անկեղծ լինելու եմք մեր
խոստովանութեան մէջ , այսինքն
առանց մեղք պահելու բոլոր մեր
մեղքերն ամբողջովին խոստովա-
նելու եմք քահանային , առանց
նկատելու և ուշադրութեան առ-
նելու մարդկութեան անօրէն թըշ-
նամուոյն՝ չար սատանային յառաջ
բերած տեսակ տեսակ պատրուակե-
ներն և պատճառանքներն , զոր
'ի գատապարտութիւն հոգւոց մե-
րոց կը յարուցանէ :

Բայց ինչ եղանակ կը գործածէ
սատանայն մեր մեղքերն պահել
տալու համար , միտ դիր , ո՛վ հո-
գեսէրդ իմ , և լսէ :

Սատանայն՝ քրիստոնէին սրտին
մէջ նախ մի երկիւղ կը ձգէ թէ՛
քահանայն՝ որում կը խոստովանի
մեղաւոր ոք , կարելի է խոստո-

վանութեան մէջ ունեցած լրերէն
օգտուելով , նմա մի փասս կը հաս-
ցընէ . և կամ երկրորդ՝ իւր այն
ինչ ամօթալի մեղքն լսելով , իւր
վերայ գաղափարն կ'աւրէ : Բաց
աստի սատանայն ուղղակի կեր-
պով չթեւադրեր զխոստովանողն
թէ՛ քահանայն անշուշտ իւր մեղ-
քերն ուղղապէս այլոց պիտի յայտ-
նէ , այլ իբրեւ մարդ՝ կարելի է
որ սխալի , կ'ըսէ , և առանց գիտ-
նալու իսկ անուղղակի կերպով
և անզգուշութեամբ բերնէն մի
խօսք դուրս կուտայ , որ յարա-
բերութիւն ունենալով իւր մեղաց
հետ , կարելի է իւր պատուոյն
նսեմանալուն առիթ տայ : Այս մի
խորագիտութիւն է , զոր հասա-
րակօրէն կը գործածէ աւելի դիւ-
րութեամբ խաբելու համար :

Սակայն , սիրելի հոգեսէրդ իմ ,
այս այնպիսի խաբեբայութիւն

մի՛ է, որոյ նմանն իսկ չէ կարելի գտնել աշխարհի վերայ: Եւ յիւրաւի իսկ. որովհետեւ խոստովանահայր ոք ոչ ուղղակի և ոչ անուղղակի կերպով խոստովանութեան գաղտնիքն եղծել կարող չէ: Կը կարդամ պատմութեան մէջ թէ՛ Սպարտացիք հրաւերներու համար որոշեալ մէն մի սրահի դրանց վերայ խոշոր գրերով հետեւեալն գրած էին. ԲԱՆ ՄԻ՛ ԵԼՅԷ ՍՍՏԻ. (*sermo hine non egrediatur*) այսինքն ինչ որ կը խօսուի և կ'ըսուի հոս, դուրս պիտի չելնէ. սոյն այս խօսքերն ամեն խոստովանարանի ճակատն ևս զօրութեամբ գրուած են. և ամենախիստ եղանակաւ այս հրամանս գործադրելու պարտաւոր է մէն մի խոստովանահայր:

Երեւակայեմք մարդ մի որ բաց ի իւր խոստովանահօրմէն (որում

անկեղծօրէն կը խոստովանի զամենայն ինչ) սովոր է խաբել ընդհանուր քաղաքն. հանրութեան առջեւ կը ներկայանայ նա իբր մի հրեշտակ. և ուր որ նորա վերայ խօսուի, միշտ բարի է համբաւն: Արդ՝ խոստովանահայրն որ գիտէ նորա ինչ աստիճանի մէջ գըտնուիլն, ինչ ընելու պարտաւոր է: Հարկաւ լռելու: Իսկ եթէ իւր լռութեամբն կասկածանաց տեղի տալու մի երկիւղ ունենայ, այն ատեն պարտաւոր է ինքն ևս խօսիլ, ինչ եղանակաւ որ հանրութիւնն կը խօսի. թէ և այսու այդ անհատին յանձնուի մի բարձր պաշտօն, որում անարժան է նա, և որոյ սոյն պաշտօնին անցնելովն՝ ընկերութեան ամենամեծ փառանք հասնի, և ընդհանուր գաւառն մեծ վտանգի ենթարկուի: Ենթադրեմք նոյնպէս որ մի

անհատի 'ի նպաստ և 'ի գովութիւն մի վկայագիր ուզուի քահանայէն . սա՝ յետ առնելոյ զբարի վկայութիւն այլոց , գիտելով իսկ 'ի խոստովանութենէ որ նա անարժան է , պարտաւոր է տալ զայն , և բարձրացնել մինչեւ յերկինս ըստ հարկին , հակառակ ճիշդ իրողութեան՝ որում միայն խոստովանութեան ատենին մէջ տեղեակ եղած է :

Դարձեալ՝ եթէ մի դատարանի մէջ կանչուելով մի խոստովանահայր՝ հարցուի թէ , այս ինչ անձին այս ինչ ոճիրն գործելուն վերայ տեղեկութիւն ունի՞ թէ ոչ , նա պարտաւոր է (թէև իրօք 'ի խոստովանութենէ տեղեկութիւն ունենայ) բացարձակապէս պատասխանել թէ՛ բնաւ տեղեկութիւն չունի . մինչեւ իսկ կարող է զայն երդմամբ հաստատել : Վասն

զի ինչպէս կ'ըսէ Սուրբն Թովմաս՝ զոր ինչ գիտէ քահանայն խոստովանութեամբ՝ չգիտեր իբրեւ մարդ , այլ գիտէ իբրեւ պարզ պաշտօնեայ Քրիստոսի : Եթէ ուրեմն զայս ուրանալովն իսկ մի անպարտի վերայ ծանրանայ ոճիրն և մահու իսկ դատապարտուի արդարն , և կամ իւր անձն ևս ծանր՝ մինչեւ իսկ մահու վտանգի ենթարկուի , դարձեալ քահանայն պարտաւորեալ է յարատեւել , կալ , մնալ իւր ժխտման վերայ :

Միով բանիւ , սիրելի հոգեսէրդ իմ , ոչ մեր կենաց մէջ , ոչ մահուան ատեն և ոչ յետ մահու , ոչ ձախորդութեանց և ոչ յաջողութեանց մէջ , ոչ բարեկամութեան և ոչ թշնամութեան համար , ոչ ընդ գաղտնեօք և ոչ յայտնի , ոչ առ ահի և ոչ առ շահու , վերջապէս և ոչ մի եղանակաւ խոստո-

վանահայրն կարող է խոստովանութեան գաղտնիքն եղծել. քանքաւստի մի՛ երցեն. քահանային շրթներն մի սարսափելի կնքով կընքեալ են, թէ 'ի բնական, թէ յԱստուածային, թէ յեկեղեցական և թէ 'ի քաղաքական օրինաց: Այն աստիճանի որ, եթէ՝ (պարզ ենթադրութիւն մ'է զոր կ'ընեմ) ապացուցուի թէ մի քահանայ խոստովանութեան կնիքն եղծած է մի ամենափոքր եղանակաւ իսկ, ոչ թէ միայն նորա գագաթան վերայ պիտի թափին եկեղեցական պատժոց և դատակընքոց կայծաղներն, այլ և քաղաքական պատիժներուն ամենասատիկներն, և նորա կեանքն պիտի փճանայ ընդ եկեղեցական ամենածանր դատակնքով և ըստ դատարանաց ամենասատիկ թիավարութեան պատժօք:

Սակայն աներկմիտ եղիր, ո՞վ հոգեւոյն հաւատացեալդ իմ, չիք ինչ և ոչ մի երկիւղ: Քանզի խոստովանութեան անջնջելի կնքոյն վերայ նոյն իսկ նախախնամութիւնը կը հսկէ: Այն Աստուածը՝ որ երբեմն իւր անքնին և անհասանելի դատաստանաւն թոյլ կուտայ որ քահանայն յանցանաց մէջ անկանի, և առաւել քան զաշխարհականս աղտեղութեանց ցեխերու մէջ թաւալի, թոյլ չէ տուած և երբէք թոյլ չպիտի տայ որ նա եղծէ գկնիք խոստովանութեան:

Այսպիսի մի բացարձակ առաջարկութեան ապացոյցն պիտի գտնեմք ականերեւ, եթէ դիմեմք Գաղղիական և Իտալական թէ հին և թէ նոր խռովալիր յուզմանց և վրդովմանց պատմութեանց: Նոյն իսկ Բողոքական պատմիչ մի

կը պատմէ թէ՛ գտնուեցան այն
ժամանակներն քահանայներ՝ որք
իւրեանց ամենանուիրական ուխ-
տերն և երդումներն ոտքի տակ
առին, և ամենազարչելի աղտե-
ղութեամբք չաղախեցան, և կա-
տարեւապէս իբր ուրացող անաս-
տուածներ և անկրօններ ապրե-
ցան, ի վերայ այսր ամենայնի
չէ գտնուած երբէք մի քահանայ՝
որ խոստովանութեան մի գաղտ-
նիք ամենաչնչին եղանակաւ իսկ
եղծած լինի:

Պտնուեցան քահանայներ՝ որ
ուղեղի հիւանդութեամբ տառա-
պելով, իւրեանց կեանքն յիմա-
րանոցներու մէջ անցուցին, և
իւրեանց ըսածն ու խօսածն չէին
գիտեր, չէին իմանար, այսու ա-
մենայնիւ՝ ըստ վկայութեան նոյն
իսկ կաթուղիկէութեան անհաշտ
թշնամի բժշկաց, չէ գտնուած

այսպիսեաց մէջ ևս մի քահանայ
որ խոստովանութեան ատենին
մէջ լսածին վերայ խօսի կամ
գաղտնիք մի յայտնէ:

Պտնուեցան և կան քահանայ-
ներ՝ որ քնոյ մէջ կը խօսին, և
նախընթաց աւուր գործողու-
թիւնքն կը յայտնեն բացորոշա-
կի, այլ չէ գտնուած և չիք և ոչ
ոք որ իւր քնոյ մէջ՝ խոստովա-
նութեան վերաբերեալ մի գաղտ-
նիքն յայտնէ: Յապացոյց այս ը-
սածիս ահա մի դէպք՝ զոր կը
պատմէ մեր դարու գրագէտներէն
հռչակաւորն Հայր Վէնթուրա:

Մի գաւառի մէջ կը գտնուէր
երիտասարդ մի քահանայ. սա՝
չափազանց ուրախ և զուարթ մի
խառնուածք ունենալով, կենակ-
ցութեան համար ամենաբարի ըն-
կերակից մ'էր. իւր անկեղծու-
թեամբն յաշս ամենեցուն սիրելի

եղած էր, որովհետեւ զոր ինչ կը կրէր 'ի սրտին, զնոյն անկեղծօրէն ունէր իւր շրթանց վերայ: Սակայն սա դժբաղդաբար իւր խոր քնոյ մէջ բաւական յայտնի և իմանալի եղանակաւ խօսելու սովորութիւնն ունէր, և զոր ինչ կը հարցնէին՝ կը պատասխանէր:

Իւր խոստովանորդւոց մէջ կը գտնուէր նաև մի երիտասարդուհի, որոյ գաղտնիքն յետին աստիճանի երկու երիտասարդաց հետաքրքրութիւնն չարժած էր: Սոքա ուրեմն հարցնելով, փնտրուելով յիշեալ երիտասարդուհւոյն խոստովանահօր սով լինելն, վերջապէս երբ իմացան թէ այն քահանայն է՝ որոյ հետ ստէպ զուարճացեր էին, շատ խնդացին և խիստ ուրախացան. նա մանաւանդ լաւ գիտէին թէ նա՝ գիշերն 'ի բուն իւր քնոյն մէջ թէ կը խօսի

և թէ հարցմանց ճշդիւ և կէտ առ կէտ կը պատասխանէ: Ուստի սկսան տեսակ տեսակ շողրքորթութեամբ և փաղաքշանօք նորա սիրտն բոլորովին իրենց գրաւել, արդեամբ նորա մտերմութիւնն և ընտանութիւնն կատարելապէս չահեցան. հետեւաբար անխտիր մէկ մէկի տուն կը յաճախէին ընտեւաբար:

Խեղճ քահանայն փոքր կասկած մ'իսկ չէր կարող ունենալ սոցա չարամտութեան վերայ: Մի գիշեր ուրեմն այս երկու ապիրաւոյներն մի յարմար առթիւ կարող եղան քահանային սենեակն մըտնել, ուր զնա խորին քնոյ մէջ ընկղմած գտին, և քովն նստելով սկսան հետն խօսակցիլ: Այլ և այլ բաներ հարցուցին նմա. և նա իբրարթուն կէտ առ կէտ կը պատասխանէր: Դարձնելով խօսքն յիշ-

եալ երիտասարդուհւոյն վերայ , մինչեւ որ նորա անուան , մակա-
նուան և ազգականաց վերայ կը
շրջէր խօսքն , աներկմիտ կը պա-
տասխանէր քահանայն : Սակայն
մին յերկոցունց՝ որ աւելի ան-
համբերն էր , և իրեն հարկ եղեալ
լուրն առնելու սաստիկ փափա-
քովն կը տոչորէր , առանց այլ ևս
հանդուրժելոյ մէկէն ուղղեց հե-
տեւեալ խօսքերն առ քահանայն :

Բայց դու , բարեկամ , նորա
խոստովանահայրն ես կարծեմ...
դու մասնակից ես նորա ամենա-
խոր և կարեւորութեան արժանի
գաղտնեաց... դու պէտք է գիտ-
ցած լինիս... հապ թն , մի կառ-
կածիր մեր վերայ... մեք բնաւ
մէկու մը չեմք ըսեր , և կ'երդ-
նումք քեզ որ այն գաղտնիքներն
մեր սրտից մէջ թաղուած պիտի
մնան... ստոյգ է արդեօք թէ... :

Այլ ևս չկրցաւ շարունակել իւր
խօսքն , որովհետեւ քահանայն՝
որ միշտ խոր քնոյ մէջ կը շարու-
նակէր մնալ , ընդհատելով նորա
խօսքերն , պատասխանեց սաստ-
կութեամբ :

Ո՛վ խրատեց զքեզ , ո՛ր ապիրատ
թշուառական , գալ հոս և այս
եղանակաւ զիս փորձել . ի՞ժի ան-
պիտան , անիծեալ և անիծապարտ
ծնունդ , երբ համարձակեր և յան-
դըքներ է մարդ՝ խոստովանահօր-
մէ մի խոստովանորդւոյ գաղտ-
նիքն հարցաքննել... կորսուեցէք
դուրս , անարգ չարեր , իմ սենե-
կէս : Եւ այս յանդիմանական խօս-
քերուն յարեց ի պարգեւ մի փա-
ռաւոր և հնչող ապտակ , որում
իւր քով աւելի մօտ գտնուողն
միայն արժանանալու բաղդն ու
պատիւն ունեցաւ :

Այս եղանակաւ երկու երիտա-

աարդներն ամօթապարտ և խաղ
ու ծանակ եղած, պարտաւորե-
ցան առանց այլ ընդ այլոյ հարցը-
նելու հեռանալ քահանային սե-
նեկէն, որ դեռ կը ննջէր:

Հանգիստ և անդորր մի սիրտ
ունենամք ուրեմն, ով հոգեսէր
սիրելիդ իմ, և համոզուիմք կա-
տարելապէս թէ՛ ոչ ոք ի քահա-
նայից կարող է յայտնել խոստո-
վանութեան գաղտնիքն, մինչեւ
իսկ իւր արիւնն թափել պէտք
ալ լինի այս պատճառաւ: Ինչ-
պէս Սուրբն Յովհաննէս Նէփո-
մուկեանի օրինակն յայտնապէս
կը ցուցնէ. զի սա՝ իւր թագուհի
խոստովանորդւոյն գաղտնիքն
թագաւորին չիմացնելուն համար,
ամենայն հաստատամտութեամբ
յանձնառու եղաւ հեղձամահ մար-
տիրոսանալ յօրինակ համայն խոս-
տովանահարց:

Ո՛հ, որքան ուրեմն արգահա-
տելի է յիմարութիւն ումանց, որք
յաղթեալ ի թելադրութենէ սա-
տանայի՝ կ'ամաչեն և չեն ուզեր
դուրս տալ մի թոյն՝ որ զիրենք
կը մահացնէ, ազատիլ մի ծանր
բեռէ՝ որ զիրենք կ'ընկճէ:

20. Խոստովանութիւնն անկեղծ
լինելէ զատ պէտք է որ նաև խո-
նարհութեամբ կատարուի. այս-
ինքն երբ կը մօտենամք այն ա-
տեանին՝ ուր պիտի դատուիմք
ըստ արդարութեան, պէտք է որ
խոնարհութեամբ և բոլորովին
չփոթած և մի սուրբ ամօթխա-
ծութեամբ զգածուած ներկայա-
նամք, և ոչ թէ անտարբերու-
թեամբ պատմեմք մեր մեղքերն
իբր ոչինչ իրեր, իբր թէ յանցա-
ւորն աւելի անարգեալն եղած
լինի՝ քան թէ մեք:

30. Վերջապէս երբ կ'երթամք

խոստովանիլ մեր մեղքերն , կարճ և համառօտ լինելու եմք , և ոչ թէ երկար բարակ պատմութիւններով խճողելու եմք զխոստովանութիւն : Ոմանք մի մեղք խոստովանելու ատեն կ'սկսին պատճառներն 'ի մէջ բերել , և յայտնել այնպիսի պարագաներ՝ որք երբէք յարաբերութիւն չունին խոստովանութեան հետ :

Օրինակի համար , ահա մի կին՝ որ ներկայանալով խոստովանահօր , հետեւեալ եղանակաւ կ'ըսկըսի խոստովանիլ :

Հայր սուրբ , սաստիկ բարկացեր եմ . բայց , ախ , ինչ ըսեմ ես այն էրկանս . գիտնալու բան է , հայր սուրբ , ամեն օր գինետունէն դուրս չելներ . անցեալ օր գինետուն գացած էր , երբ տուն դարձաւ , Աստուած հեռի արասցէ , ոտքերուն վերայ չէր կրնար

կայնիլ , սկսաւ զիս նեղել , հոգիս բերանս բերաւ , ալ չկրցի համբերել ; սաստիկ բարկացայ :

Ահա ընդհակառակն մի այր՝ որ հետագայ եղանակաւ կ'սկսի խոստովանութիւնը :

Հայր սուրբ , անիծաբանութիւն ըրի . որովհետեւ թշուառական կնիկս ամենեւին զիս բանի տեղ չդներ . անցեալ օր բոլորովին յոգնած՝ խանութէն տուն եկայ , տեսայ որ ամենեւին ուտելիք պատրաստուած չէր . հոգի բեր որ դիմանայ , սիրտս նեղացաւ , ինքզինքս չկրցի բռնել , մէկ երկու հատ փակցնելէս ետքը , Աստուած կամ իմ հոգիս առնէ , ըսի , կամ քուկդ , որ ձեռքէդ ազատիմ . ախ , հայր սուրբ , չես գիտեր իմ քաշածս , ևայլն :

Բայց ինչ օգուտ կամ ինչ հարկ քահանային յայտնել էրկան գի-

նետուրն երթալն՝ կամ կնկան ան-
հոգութիւնն . բաւական է որ մէկն
ըսէ , սաստիկ բարկացայ և բար-
կութեամբ այս ինչ մեղքն գոր-
ծեցի . և միւսն թէ՛ իմ ամուս-
նոյս այս ինչ անէծքն ըրի : Ի՞նչ
հարկ է կ'ըսեմ երկար բարակ ա-
ւելորդաբանութիւններ խոստո-
ւանութեան մէջ . բաւական է որ
մեր մեղքերն խոնարհութեամբ և
անկեղծութեամբ մէկիկ մէկիկ ա-
ռանց երկարելու , մեր խոստովա-
նահօր յայտնեմք , և երբ նա մեզ
բան մի հարցնէ մի կէտի վերայ ,
ճշդիւ պատասխանեմք , և այնու-
հետեւ մեր խոստովանահօր խոր-
հուրդներն և խրատներն մտադ-
րութեամբ լսեմք . վասն զի այնու
մեզ դարմաններ պիտի մատակա-
րարուին հեռի կենալու մեղքէ , և
սատանայական թելադրութիւն-
ներէն զգուշանալու համար :

Մի գուցէ , ո՞վ իմ սիրելի հո-
գեսէրս , ընես , ինչպէս կ'ընեն ո-
մանք , որք երբ քահանայն կ'սկսի
խրատի , փոխանակ միտ դնելու ,
կը մտածեն թէ արդեօք կայ ու-
րիշ մեղք որ մտքերնին եկած չէ ,
զի այս ևս լաւ բան չէ , մանա-
ւանդ եպերելի է : Երբ ուրեմն
մեղքերդ ըսիր աւարտեցիր , այլ
ևս մի մտածեր այնց վերայ , այլ
մտադրութեամբ քահանային խը-
րատուցն միտ դիր , և յետ խոս-
տովանութեան երբ յիշելու լինիս
մի մեղք , կարող ես ուրիշ ան-
գամ երթալ քո խոստովանահօր
զայն խոստովանիլ :

Ք. — Արդ՝ անցնիմք ընել մի քա-
նի խորհրդածութիւններ խոստո-
ւանութեան մի քանի կէտերի
վերայ , որք շատ և շատ պիտի օգ-
նեն մեզ մեր խոստովանութիւն-
ներն լաւ կատարելոյ համար :

1⁰. Կրնայ պատահիլ որ խոստովանահայրն մէկու մը արձակում չտայ : Վասն զի լաւ գիտելու է թէ՛ քահանայն խոստովանութեան ատենին մէջ ամենամեծ պատասխանատուութեան ենթարկեալ է , և մի օր առաջի Աստուծոյ հաշիւ պիտի տայ . և երբ մի անարժանի առջեւ նետէ արձակման մարգարիտն , ինքն սրբապղծութեան մեղօք պիտի արատաւորէ իւր հոգին :

Վստահ եմ արդէն , սիրելի հաւատացեալդ իմ , թէ դու չես ուզեր որ խոստովանահայրն դատաւարտուի 'ի պատճառս այլոց , սակայն կարելի է ըսես թէ՛ ինչպէս կրնայ լինիլ որ ես առանց արձակում առնելու մեկնիմ , քանի որ զիս տեսնեն՝ որ խոստովանեցայ . ինչ պիտի ըսեն և խօսին յիմ վերայ . միթէ այս ինձ հա-

մար մեծ անպատուութիւն չէ : Բայց չէ , սիրելիս , ոչ ոք կարող է և իրաւունք ունի բան մի ըսելու : Վասն զի կարելի է որ նոյն իսկ արձակումն առած լինիս , սակայն մի այլ բանաւոր պատճառէ Ամենասուրբ Հաղորդութեան մերձեւալէ արգիլուիս : Եւ եթէ մէկն այսպիսի խօսքեր ընէ , յանդուգն դատողութիւն ըրած կը լինի և կը մեղանչէ սոստիկ : Բայց՝ պիտի կրկնես , իմ խոստովանահայր ինձ անիրաւութիւն ըրաւ արձակում չտալով , և այն ինչն՝ որ ինձմէ աւելի մեղք ունէր , արձակեց :

Սակայն զգուշութիւն , հաւատացեալ սիրելիդ իմ , որովհետեւ այս մի ամենամեծ բամբասանք է : Մինչեւ իսկ քո խոստովանահայր մի անիրաւութիւն ըրած լինի , դու պէտք չէ որ խօսիս և դատես . զի նա ևս մի օր առաջի ա-

հեղ ատենին Քրիստոսի պիտի
դատի և պատասխանատու է իւր
գործքերովն : Լաւ կը լինի ուրեմն
որ ամէն ոք իւր գործոց վերայ
միայն խորհի, և այլոց գործոց
չմիջամտէ . որովհետեւ կարելի է
թէ այն անձն՝ որ մեղաւոր կը
թուի, մեղաւոր չէ . և կամ ուրիշ
անգամ առանց այլոցն գիտու-
թեան խոստովանութեան գնա-
ցեր, և երկրորդ անգամին ար-
ձակման շնորհացն արժանացերէ .
և կամ կարելի է թէ մի անգամ
միայն խոստովանելով իսկ, մի կա-
տարեալ զղջումն ունեցեր և այ-
նու արժանի եղեր է արձակման,
և այլն : Ամէն որ խոր գործքովն պա-
տասխանատու չէ, կ'ըսէ առածն :

Չ⁰. Մի այլ կէտ ևս կայ որ շատ
արժանի է արդեամբ խորհրդա-
ծութեան տակ առնուելու, և է
հետագայն :

Կը գտնուին մի քանի անձինք՝
որք իւրեանց սովորութիւն ըրած
են խոստովանութեան վերայ խո-
սիլ, և խոստովանահայրեր բամ-
բասելն . զոր օրինակ, այս ինչ
խոստովանահայրն այս կամ այն
բանն ինձ ըսաւ . . . այս ապաշխա-
րանքն դրաւ ինձ . . . զիս ետ զրկեց
առանց խոստովանեցնելու . . . այս
ինչ խորհուրդն տուաւ ինձ, և
կամ այս ինչ հարցումն ըրաւ ինձ :

Այսպիսիք իրենց աղճատանաց
նիւթ գտնելու համար կ'սկսին
մէկ խոստովանարանէ միւս խոս-
տովանարան անցնիլ, այսօր մի
քահանայի, վաղն միւսին քով,
այնուհետեւ տես ինչ բաղդա-
տութիւններ կ'ընեն :

Այս ինչը շատ խիստ է, և չա-
փազանց մանրակրկիտ . . . այն ինչն
աւելի շնորհալի և քաղցր է . . . այն
ինչը քիչ մը լայն ճամբայ բռնած

է, իսկ միւսն նեղ և շատ նեղ...
այս շատ կը խօսի, այդ քիչ...
այս լաւ դիտողութիւններ կ'ընէ,
իսկ այդ միւսն գրեթէ բնաւ դի-
տողութիւն չընէր, և կ'ուզէ վաղ
ընդ փոյթ խոստովանութիւնն ա-
ւարտելով, իւր գործոյն երթալ,
և այլն:

Յիրաւի արանց մէջ ևս կը գըտ-
նուին այսպիսի աւելորդախօս ա-
րարածներ, սակայն դժբաղդա-
բար առաւել խօսողներն կանայք
կը լինին. որք երանի՜ թէ ամենայն
ինչ տեղն 'ի տեղն հասկնան և ա-
պա խօսին. այլ ընդհակառակն
միոյն վերայ տասն ևս բարդելով
կ'սկսին այնպիսի բաներ ըսել՝ որոց
վերայ խեղճ խոստովանահայրն և
ոչ իսկ երազած է, և առանց բանի
մը գիտակ լինելու, այսպիսի ան-
ձանց խօսակցութեանց և աղճա-
տանաց առարկայ եղած է:

Խոստովանութեան վերայ ա-
ռանց հարկաւորութեան խօսելէն
աւելի յոռեգոյն մի ախտ չէ կա-
րելի լինիլ: Զգուշացիր ուրեմն,
սիրելիդ իմ, որովհետեւ, ինչպէս
կ'ըսէ Սուրբն Փրանկիսկոս Սալէ-
զացին, առանց կարեւորութեան
խոստովանութեան վերայ խօսիլն
ներելի մեղք է, իսկ խոստովա-
նութեանց նկատմամբ մի խոստո-
վանահայր բամբասելն մահացու
մեղք է: Զգոյշ կեցիր նաև շատ
խոստովանահայր փոխելէ. աշխա-
տէ դու գտնել մի բարի, գիտ-
նական և փորձառու խոստովա-
նահայր, և նմա՝ իբր գործավիր
հօր, կատարեալ բժշկի, իմաս-
տուն վարդապետի և անաչառ
դատաւորի յանձնէ քո հոգին:
Հետեւելով նորա բարի խրատուցն
և խորհրդոց, 'ի գործ դնելով
ճշդութեամբ 'ի նմանէ մատակա-

րարեալ դարմաններն , և հնա-
զանդելով նորա արդար վճռոյն ,
արժանի պիտի լինիս հասնիլ քո
վերջին յենակէտի , որ են երկինք :

Տ. Ապաշխարանաց վնարման վերայ

Լաւ խոստովանելոյ և մեր խոս-
տովանութիւնն արդիւնաւոր ը-
նելոյ համար վերջին հարկաւոր
կէտն է քահանային դրած ապաշ-
խարանքն կատարել : Սակայն
դժբաղդաբար սրբան նուազ ու-
շագրութեան առնուած է այս
կէտ . կը գտնուին ոմանք որ հոգ
չեն տանիր երբէք խոստովանահօր
դրած ապաշխարանքն կատարե-
լու . կամ բողոքովին զանց կ'ը-
նեն , և կամ եթէ փոքր ինչ եր-
կար է , մի երկու օր կը կատարեն ,
և ապա կը թողուն մնացեալն .
կարծես թէ ծանր և անտանելի
բեռ մ'է այն :

Բայց սիրելի հոգեսէր հաւա-
տացեալդ իմ , գիտես թէ այս մեծ
մեղք մ'է : Երբ մեր խոստովանա-
հօրն մի ծանր մեղք կը խոստո-
վանիմք , նոյն մեղաց համապա-
տասխանող մի ապաշխարանք դը-
նել պարտաւոր է նա . եթէ զայն
կամաւ և յօժարութեամբ չկա-
տարեմք , մահուչափ մեղօք կը
մեղանչեմք :

Պէտք է ուրեմն՝ որ քահանային
դրած ապաշխարանքն կատարեմք
անթերի , և ինչ եղանակաւ որ
հրամայուած է մեզ , և ոչ թէ ըստ
քմաց և ըստ հաճոյից մերոց :

Ի գործնականին կը յորդորեմ
զքեզ , ո՞ ազնիւ հոգեսէրդ իմ ,
որ ջանաս նոյն խոստովանած օրդ
կատարել զայն եթէ հնար է .
որպէս զի մի գուցէ մոռանաս .
իսկ եթէ հնար չլինի նոյն օրն
կատարել , հետեւեալ օրն ան-

միջնակէս և անպատճառ կատարելու ես(1) :

Ահա այս եղանակաւ կատարած պիտի լինիս մի պարտաւորութիւն՝ որ է յօգուտ հոգւոյդ , և որով ազատելով մեր անհաշտ թշնամւոյն՝ սատանայի գերութենէն , պիտի լինիս կատարեալ հաւատացեալ և հետեւող Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ :



(1) Ապաշխարանաց վերայ լաւագոյն տեղեկութիւններ պիտի աւանդուին , «Ներողութեան վերայ ընդհանրապէս» հետեւեալ յօդուածին մէջ :

Ներողութեան վերայ րեդիանրապէս , եւ րէ քանի՞ տեսակ են ներողութիւնք .



Ա. — Տեսանք թէ խոստովանութիւնն մի կենսարար արդիւնք ունենալոյ համար պարտ անհրաժեշտ է քահանային դրած ապաշխարանքն կատարել : Սակայն երեք կէտեր կան՝ որք խորհրդածութեան արժանի են , այսինքն նախ՝ առ ինչ այս ապաշխարանքն կը տրուի . երկրորդ՝ թէ քահանայէն տրուած ապաշխարանքն բաւական են թէ անբաւական . երրորդ՝ եթէ անբաւական են , այս անբաւականութեան թերին լեցնելու կերպն , կամ եղանակն ինչ է :

Ներողութեան վերայ ընդհանրապէս մի գաղափար պիտի ու-

նենամք, եթէ այս երեք կէտերն ուշադրութեան առնուամք :

1⁰. Լաւ գիտելու է թէ՛ մարդս մեղքով ճշմարիտ, գերագոյն և միակ բարին՝ զԱստուած կը վըշտացնէ. հետեւաբար մեղքն ճշմարիտ, գերագոյն և միակ չարիք մ'է. և ո՛րքէ իրէ մահու չարիք մեղք կը կրէ իւր հետ մի յաւիտենական պատիժ :

Ամենասիրելի Փրկիչն մեր՝ որ իւր մարդեղութեամբն չունէր այլ նպատակ՝ եթէ ոչ յիշել և կոչել զմեղաւորն իւր հայրենի և սիրալիր բազկաց մէջ, ի նշան իւր Աստուածային սիրոյն հաստատեց, ինչպէս ըսինք, ապաշխարութեան սուրբ խորհուրդն ի քառութիւն և ի թողութիւն մարդկային ներգործական մեղաց : Ուստի երբ մեք կը մերձենամք այս սուրբ Խորհրդոյն, թողութիւն կ'ընդու-

նիմք թէ՛ մեր մեղացն, և թէ՛ սորա յարակից եղեալ յաւիտենական պատժոցն : Սակայն մեղաց յաւիտենական պատժոյն ներմամբն, միթէ մարդ բոլորովին զերծ կը մնայ յո՛րքէ պատժոյ : Ո՛չ : Այլ Աստուածութիւնն որոշած է մի ժամանակաւոր պատիժ մեղաց, զոր իրեն վերապահած է և զոր չներեր ապաշխարութեան սուրբ Խորհրդով, այլ կ'ուզէ որ մեք զայն քաշեմք անպատճառ կամ այս արտասուաց հովտին մէջ, և կամ ի հանդերձելումն ի Քաւարանի(1) :

(1) Գիտելու է աստ թէ՛ ի բաց առնելու է այն հոգին, որ Աստուածային սիրով վառուած, և կատարեալ զղջմամբ տոգորուած է : Վասն զի սա՛ այս պարագայիս մէջ զերծ կը մնայ յո՛րքէ պատժոյ, այսինքն՝ թէ՛ ի յաւիտենականէն և թէ՛ Քաւարանի ժամանակաւոր պատժէն :

Այս ճշմարտութիւնս բացարձակ ճշմարտութիւն մ'է և արդեամբ իսկ :

Աստուած ներեց մեր նախահարցն՝ Ադամայ և Եւայի մեղաց . ներելով և թողլով ևս նոցա մեղացն յաւիտենական պատժոյն : Սակայն չթողուց երբէք նոցա մեղացն ժամանակաւոր պատժոց , այլ ընդհակառակն պարտաւորեցան նոքա լալ և ողբալ , հեծել և հեծեծել , տապիլ և տաղնապիլ հարիւրաւոր տարիներ 'ի պատիժ իւրեանց անսաստութեան և անհնազանդութեան :

Դաւիթ զՈւրիայն սպանանելով մեղանչեց մարդասպանութեան ծանր մեղօք , յաւելլով սոյն մեղաց վերայ ուրիշ ծանրագոյն մեղք մի ևս . այլ միթէ յաւիտենական պատժէն թողութիւն գլտնելովն , ժամանակաւոր պատժէն

ևս ներումն գտաւ յԱստուծոյ : Ու'չ երբէք : Այլ ընդհակառակն պարտաւորեցաւ նա 'ի պատիժ իւր այս մեղացն , չարութեան պտղոյն՝ իւր զաւակին , իւր աչացն առջեւ մեռնիլն տեսնել . հալածեցաւ նա Աբիսողոմ իւր հարազատէն , քաջելով վերջապէս այս աշխարհի վերայ ուրիշ շատ և շատ դառն նեղութիւններ , վշտեր և ցաւեր :

Միով բանիւ ուրեմն , Աստուած կը ներէ յիրաւի մեղաց , և կը թողու մեղացն յաւիտենական պատժոցն , այլ կ'ուզէ միանգամայն՝ որ նոյն մեղաց ժամանակաւոր պատիժներն կրեմք և վճարեմք անշուշտ : Զի ինչ են այն նեղութիւններն և վշտերն , այն հիւանդութիւններն , այն հարուածներն և պատուհասներն , այն նաւաբեկութիւնքն , փոթորիկներն և հե-

ղեղներն , այն երաշտութիւնքն ,
այն պատերազմներն՝ որք մեր
վրայէն անպակաս են միշտ , ոչ
այլ ինչ , եթէ ոչ՝ են մեր մեղաց
ժամանակաւոր պատիժներն՝ զորս
կամայ ակամայ կրելու կը պար-
տաւորիմք :

Ներեց յիրաւի մեր ամենասի-
րելի Արարիչն մեր այն աղտեղի
մեղաց , մեր հայհոյութեանց , մեզ
սովորական եղած անիծարանու-
թեանց , բամբասանաց , քսու-
թեանց , մեր եղբայրսիրութեան
դէմ գործած մեղաց , և այլն , սա-
կայն , ո՞ հոգեւէր հաւատացեալդ
իմ , չներեր երբէք այս մեր մե-
ղաց համար որոշեալ ժամանակա-
ւոր պատժոցն . կ'ուզէ և կը պա-
հանջէ որ կրեմք այն պատիժներն
այս աշխարհի վերայ :

Իսկ եթէ հոս չքաշեմք , անտա-
րակոյս անդին՝ ի Քաւարանի ստի-

պուած եմք քաշել , ուր աւելի
սաստիկ է . թէև շատերն կը փա-
փաքին հոս հանգիստ ընել և հոն
քաշել . թշուառներ , չեն գիտեր
թէ Քաւարանի պատժոյն ծան-
րութիւնն այն աստիճանի է , որ
ինչպէս կը հաւաստէ հրեշտակային
վարդապետն մեր Սուրբն Թով-
մաս , այս աշխարհիս կարելի և
իրական եղած համայն վիշտք և
հեծութիւնք , ցաւք և տրտմու-
թիւնք , ի բաղդատութիւն այն
տեղւոյն ամենավորք պատժոյն
իսկ , ամենաոչինչ են :

Ամէն ոք ուրեմն , որ ընդ մեղօք
է , խոստովանութեամբ կ'ազատի
մեղաց յաւիտենական պատժէն
ևս , այլ չազատիր ժամանակա-
ւորէն :

Ահա այս պատճառաւ է որ մեր
խոստովանահայրն՝ խոստովանու-
թենէ ետք մեզ մի ապաշխարանք

կը դնէ , որ մասամբ մի կը փոխա-
նակէ այս պատժոյն : Վասն զի ,
քահանային դրած ապաշխարանքն
վճարելով , մեր մեղաց պէտք ե-
ղած պատիժն կը թեթեւցնեմք .
Աստուածային արդարութեան մեզ
համար կամ աստ , կամ 'ի հան-
դերձելումն վերապահած ժամա-
նակաւոր պատժոց ծանրութիւնն
կը նուազեցնեմք . և որքան շատ
և ծանր է այս ապաշխարանքն ,
համեմատաբար այնքան զօրու-
թիւն ունի թեթեւցնելու այս
պատիժներն : Հիմա կ'իմանամք
թէ որքան մեծ է այս վճարմանց
օգուտն , հետեւաբար որքան սի-
րելի պէտք է լինի քեզ , ո՛հ հոգե-
սէր սիրելիդ իմ , քահանային դը-
րած ապաշխարանքն :

Մի գանգատիր ուրեմն , սիրե-
լիս , եթէ քո խոստովանահայր
երբեմն ծանր ապաշխարանքներ

կը դնէ : Վասն զի ինչ են անոնք՝
թէ բաղդատմամբ Բաւարանի
պատժոց , և թէ բաղդատմամբ
այն ապաշխարանաց և վճարիչ
գործոց , որք Եկեղեցւոյ նախկին
դարուց մէջ մեղաւորաց կը հրա-
մայուէին : Ո՛հ , գրեթէ ոչինչ :
Վասն զի մի ծանր հայհոյութեան ,
կամ Աստուծոյ կամ Ամենասուրբ
Կուսին և սրբոց դէմ եղած մի ա-
նարգութեան համար , ոչ թէ մի
Վարդարան կամ մի Լիթանիա
ըսել , այլ եօթն շաբաթ Եկեղեց-
ւոյ առջեւ ձայնաւոր Պատարագի
ժամանակ ծնկան վերայ , և եօթ-
ներորդ շաբաթն ալ բոկոտն և
վիզն մի պարան ձգած կենալ կը
պարտաւորէր : Բաց աստի պէտք
էր որ նաև եօթն ուրբաթ հացով
և ջրով լոկ ծոմ պահէր : Երբ մէկն
կիւրակէ կամ տօն օր մարմնաւոր
գործով կ'զբաղէր , կը պարտաւո-

րէր երեք օր հաց և ջրով անցը-
նել: Աստուածային պաշտամանց
ատեն խօսիլ յանդգնողին՝ տաան
օր հացով և ջրով միայն անցնել
հրամայուած էր: Ով որ իւր ծնո-
ղաց հնազանդ չլինէր, և կամ որ-
դիական յարգանաց դէմ մի գործ
գործէր, պարտաւորեալ էր երեք
տարի ապաշխարել: Ով որ իւր
հոգեւոր հօրն կամ հովուին կամ
ժողովրդապետին կամ հոգաբար-
ձուին ազդարարութեանց և ուղ-
ղութեանց չհնազանդէր, քառա-
սուն օր հացով ու ջրով անցընե-
լու կը պարտաւորուէր: Երբ մի
ոմն ընկերին դէմ մի ատելութիւն
ունենար, պարտաւորեալ էր նոյն-
չափ օր հացով և ջրով անցընել,
որչափ օր որ շարունակած էր կը-
րել այս ատելութիւնն իւր սրտին
մէջ: Մի անհամեստ մեղաց հա-
մար երեք տարի, մի թեթեւ գո-

ղութեան համար մի տարի, մի
բամբասանքի համար երեք տարի
ապաշխարել որոշուած էր: Եթէ
մի այր՝ կնոջ հանդերձով, կամ
մի կին՝ առն զգեստուք ծպտէր,
այսպիսեաց համար երեք տարի
ապաշխարել հրամայուած էր և լն:

Ահա, իմ ազնիւ հոգեսէրս, այն
մեծ տարբերութիւնն՝ որ հին դա-
րուց քրիստոնէից և մեզ համար
որոշեալ ապաշխարանաց մէջ կը
տեսնուի: Մեծ է արդարեւ տար-
բերութիւնն, այսու ամենայնիւ
ցաւ՝ ի սիրտ կը տեսնեմք որ այն
հին և բարի քրիստոնեայք կ'ըն-
դունէին սիրով և յօժարու-
թեամբ, մինչ մեր արդի քրիս-
տոնեայք կամ բոլորովին չեն կա-
տարեր, և կամ հազիւ կիսով
չափ: և զայն ալ առանց իմանա-
լու կը կատարեն:

20. Սակայն մէն մի քրիստոնեայ

պէտք է լաւ համոզուի թէ, ըստ
ինքեան խօսելով, այս ապաշխա-
րանքներն անբաւական են մեր
մեղքերովն արժանացած ժամա-
նակաւոր պատժոց վճարման։ Ո-
րովհետեւ կը տեսնեմք արդեամբ
և հաւաստեօք պատմութեանց
մէջ, թէ սուրբերն չէին դադա-
րեր երբէք բոլոր իւրեանց կենաց
մէջ անձամբ զանձինս մահացուց-
մանց տակ ընկճելէն, վճարիչ
գործքեր Աստուծոյ նուիրելէն,
թէև ամենաստոյգ է թէ՛ նոքա
չատ հաւատարմութեամբ և ճշ-
դութեամբ իւրեանց խոստովա-
նահարց դրած ապաշխարանք-
ներն կը կատարէին։ Ինչո՞ւ ուրեմն
ծոմ կը պահէին, իրենց մարմին-
ներն կը ձաղկէին, և այլ ծանր և
ցաւալի գործքերու տակ կ'ընկ-
ճէին իւրեանց անձերն։ զի հա-
մոզուած էին թէ ամէն մեղք՝ թէ՛

մահացու, թէ՛ ներելի, արժանի
է պատժոյ։ և թէ՛ եթէ իրենք
կամաւ և յօժարութեամբ այս աշ-
խարհիս մէջ չվճարէին բարի և
վճարիչ գործքերով, անպատճառ
պարտաւորեալ էին յետ մահու՝
հանդերձեալ կենաց մէջ վճարել։
Նոյնպէս լաւ համոզուած էին թէ՛
լաւագոյն է որ այս կենաց մէջ,
յորում Աստուած միշտ կ'ողորմի,
մէն մի անհատ իւր գործքերն
մաքրէ, քան սպասել հանդերձե-
լումն, ուր չիք ողորմութիւն,
այլ միայն արդարութիւն Աստու-
ծոյ կը գործէ, և ուր պիտի ժըն-
տըռուի մինչ ցյետին բնիոնն։

Որպէս զի ուրեմն Քաւարանի
սաստիկ պատժոց տակ չընկճիմք,
և այնր զարհուրելի բոցերու մէջ
ջճարակիմք, պէտք է որ օր աւուր
վերայ ապաշխարանքներն ապաշ-
խարանաց վերայ յաւելումք, և

նման այն անմեղ 'ի մարմնի հրեշ-
տակին՝ Սրբոյն Աւղիոսի, մէկ
ձեռքերնիս խարազան և 'ի միւ-
սում՝ խթաններն, յաւուրն՝ մի
հացով և սակաւ ջրով շատանամք,
ճաղկելով մեր ըմբոստ մարմինն,
կոտորելով մեր անզուսպ կամքն,
ընկճելով, կ'ըսեմ, զմեզ առաջին
դարուց քրիստոնէից և մեզմէ շատ
նուազ մեղաւորաց համար որոշ-
եալ մի, երեք, տասն և այլն ա-
մաց ամենախիստ ապաշխարանաց
տակ, որպէս զի ազատիմք Քա-
ւարանի խիստ պատիժներէն:

30. Սակայն նախախնամողն Աս-
տուած 'ի նշան իւր անսահման
սիրոյն՝ զոր չէ երբէք զլացեր
մարդկութեան, 'ի մխիթարու-
թիւն մեզ ամենեցուն, սոյն այս
խիստ բեռան մի հնար, մի դարման
չէ մատակարարեր արդեօք. նա՝
որոյ լուծն քաղցր է և բեռն փոք-

րողի, պիտի պարտաւորէ զմեզ,
բոլոր այս ժամանակաւոր պա-
տիժներն անշուշտ կրելու և վճա-
րելու, առանց և ոչ մի փոքր
մասն մեզ ներելու: Զիք արդեօք
և ոչ ոք՝ որ մեզ օգնէ գոնէ զայնս
վճարելու: Ստոյգ և հաւաստի է
թէ՝ մին 'ի մէնջ հայհոյեր է ծան-
րապէս. անարգեր է Աստուծոյ,
Ամենասուրբ Կուսին, մի սրբոյ
անունն. կարեւոր է ուրեմն և ան-
հրաժեշտ, որ սա՝ տասն կիւրակէ
յաջորդաբար Եկեղեցւոյ դռուն
կանգնի, և հաց ու ջրով եօթն
ուրբաթ անցնէ. այս պատիժն
պիտի չներուի գոնէ մի այլ մի-
ջոցաւ. և եթէ աստ չներուի այն,
միթէ 'ի Քաւարանի կրելու է:
Ճշմարիտ է թէ կիւրակէ կամ մի
տօն օր մին 'ի մէնջ աշխատած է,
բայց սա չէ կարող երեք օր լոկ
հացիւ և ջրով ծոմապահութեամբ

անցնել, ինչ ընելու է ուրեմն :
Ձեմ կրնար ուրանալ, պիտի ըսէ
այլ ոմն, թէ՛ ես հոգեւոր հօրս
հրամանն ոտնակոխ ըրած եմ,
սակայն ըստ հրամանի Ս. Եկեղեց-
ւոյ՝ Քաւարանէն գոնէ մասամբ
մի գերծ մնալոյ համար, հաց ու
ջուր միայն գործածելով չեմ կա-
րող մի այլ մեծ պահք բռնել :
Ո՛հ, կարելի է, պիտի ըսէ մի այլ
ոք, սատանայէն խաբուելով մի
կամ երկու անհամեստ և աղտեղի
մեղօք իմ Աստուածս վշտացուցի,
սակայն զիմորդ հնար է որ ես ե-
րեքական տարի մէն մի սոյն տե-
սակ մեղաց համար ապաշխարեմ :

Ո՛չ, ո՛չ, ո՛վ իմ հոգեսէր հաւա-
տացեալս, մի յուսահատիր, եթէ
երբէք քո խիղճ ևս վրդովեալ է
սոյնօրինակ դժուարութիւններէ :
Վասն զի մեր սիրոյ Աստուածը՝
գեղեցիկ, զիւրին և Աստուածա-

յին մի միջոց մատակարարած է
մեզ ՚ի դարման : Անուրանալի է,
ինչպէս ըսի, թէ մեք որ անխըտ-
րաբար այսչափ մեղքեր գործած
եմք, պարտաւորեալ եմք իրակա-
նապէս շատ խիստ և սաստիկ ա-
պաշխարանաց ենթարկել զմեզ,
մեր կենաց մէջ մի կանոնաւոր Քա-
ւարան քաշելով : Սակայն իմաք
և գոհութիւն մեր ամենասիրելի
Արարչին, որ հաճեր է իբր իւր
սիրոյ մի այլ գրաւական ձգել,
պիտի ըսեմ, մի շնորհաց գանձուց
արկղ, յորում եթէ մեք չունիմք
մեր անձանց սեպհական արդիւնք-
ներ, որովք կարող լինիմք հա-
տուցանել մեր պարտքերն, պիտի
գտնեմք առատօրէն այլ արդիւնք-
ներ, որք պահուած են մեզ բաշ-
խուելու համար՝ ՚ի վճարումն մեզ
սեպհական եղեալ պարտուց : Ո՛վ
մեծի շնորհացս. որով կրնամք

մեր պարտիքն վճարել չնորհիւ արդեանցն այլոց : Բայց ինչո՞ւ կը զարմանաս , ո՞վ հոգեսէրդ իմ , միթէ միոյն պարտքն միւսն չի կրնար վճարել . միթէ այս սովորական նա մանաւանդ բնական մի ճշմարտութիւն և իրականութիւն չէ : Այո՛ , մեք մեր մեղքերովն պարտիմք Աստուծոյ , հետեւաբար պարտական եմք նմա վճարել , սակայն 'ի դիւրութիւն մեզ՝ ուրիշն կրնայ այս մեր պարտքն վճարել , բաւական է որ նա իրմէ աւելցած արդիւնքներ և վճարիչ բարի գործքեր ունենայ . բաւական է որ , աւելի պարզ խօսիմ , նա Աստուծոյ վերայ մի պահանջ ունենայ : Երբ նա ուզենայ իւր պահանջովն մեր պարտքը փակել , այն ժամանակ մեք մեծապէս կ'օգտուիմք , զի այնու մեր պարտքերն կը փակուին . վասն զի բնա-

կան է թէ՛ պահանջը և պարտք միմեանց փոխանակուելով զմիմեանս կը ջնջեն :

Սակայն կարելի է որ գտնուի մի անհատ՝ որ Աստուծոյ վերայ պահանջ ունենայ : Անտարակոյս : Քանզի աշխարհիս փրկութեան համար միթէ անհրաժեշտ էր որ Յիսուս Քրիստոս գայր յայս աշխարհ , ինքզինքն այնքան նուաստացնէր , այնչափ նեղութիւններ վշտեր քաշէր , բոլոր իւր անդին Արիւնն հեղոյր , և վերջապէս Խաչին վերայ մեզ համար ողջակէզ լինէր : Ո՛չ , ո՛չ : Այլ բաւ էր որ նա մի արտասուքի կաթիլ հեղոյր , մի հառաչանք արձակէր , մի ազերս ընէր , կարող էր ընդհանուր աշխարհը փրկել . բաւ էր , կ'ըսեմ , մի եղիցի ըսէր , և պիտի լինէր անլրէպ զոր ինչ կամէրն : Բոլոր ուրեմն տանջանքներն և

այնքան անարգութիւններն՝ զորս
ընկալաւ, այն արեան չիթերն՝
զոր թափեց, և իւր ամենադառն
մահն իւր և մեծ իբր անհուն
արժէք ունեցող պահանջ իւր
երկնաւոր Հօր վերայ: Քրիստոսի
այս անսպառ արդեանց գանձն՝
թէ և ըստ ինքեան բաւական է, և
նա մանաւանդ ի՛ առաւելու իսկ
'ի վճարումն համայն պարտուց
մերոց, այսու ամենայնիւ ի հաս-
տատութիւն առաջադրեալ խըն-
րոյն քիչ մ'ալ յառաջ երթանք:

Ամենասուրբ Կոյսն՝ մեր ամե-
նասիրելի Մայրն Մարիամ ունէր
արդեօք մեղք և թերութիւն ինչ:
Ո՛չ, և ամենեւին ո՛չ: Այլ նոյն իսկ
'ի սկզբնական մեղաց անարատ և
զերծ էր: Հարկաւոր էր ուրեմն
որ նա ապաշխարէր: Ո՛չ: Ապա
ուրեմն, իւր կենաց ընթացից մէջ
հաւաքած այնքան արդիւնքներն,

այնքան նեղութիւններն, այնքան
մարտիրոսութիւնքն զոր անլսելի
համբերութեամբ կրեց, են իբր
պահանջ՝ զոր ունեցեր է Աստու-
ծոյ վերայ: Այս արդիւնքներն ևս
յաւելլով Յիսուսի Քրիստոսի ար-
դեանց վերայ, անցնիմք սրբոց
արդեանցն:

Սուրբն Յովհաննէս Մկրտիչ,
Սուրբն Գրիգորիոս Լուսաւորիչ,
Սուրբն Յովհան Ոսկեբերան,
Սուրբն Այոզիոս Կօնծակա և այլ
սուրբեր ինչ մեղք գործած են:
Եւ ոչինչ: Պէտք էր ուրեմն որ
ցաւալի և սրտատոչոր եղանակաւ,
ճաղկանօք, ճգնութեամբք, մա-
հացուցմամբք և խիստ ծովերով
բոլոր իւրեանց կենաց մէջ չար-
չարութիւն: Ո՛չ, և ամենեւին ո՛չ:
Այս արդիւնքներն ալ ուրեմն յա-
ւելլումք Յիսուսի Քրիստոսի ար-
դեանց վերայ, որովք ի՛ ունենամք

անթիւ և անհամար արդիւնքներ , որք Աստուծոյ վերայ պահանջք են կատարելապէս . և որք անհուն եղանակաւ ընդհանուր մարդկութեան պարտքերն վճարելէ յետոյ կ'առաւելուն իսկ :

Արդ՝ Յիսուսի Քրիստոսի , Սուրբ կուսին , և սրբոցն արդեանց սոյն այս գործածութիւնն՝ զոր կ'ընեմք 'ի վճարումն այն պատժոց , զոր պարտաւորեալ եմք կրել կամ աստ կամ 'ի հանդերձելումն 'ի Քաւարանի մեր մեղաց համար , ոչ այլ ինչ է , եթէ ոչ *ներողութիւնն* :

Ներողութիւնն ուրեմն՝ որ մեզ անսահման օգուտներ կը պարգեւէ , է՝ « ժամանակաւոր պատժոց « ներումն և թողութիւն՝ զոր եկե-
« ցին մի քանի բարի և վճարիչ
« գործքերու միջոցաւ մեզ մեղա-
« ւորացս կը շնորհէ , Յիսուսի

« Քրիստոսի , Սուրբ Կոյս Մարիամ
« Աստուածածնայ և Սրբոց ար-
« դիւնքներն մերձեցուցանելով » :

Բարի և Վնարիչ գործքերոս *միջոցաւ*
ըսելով , ուրիշ բան չեմք իմանար , եթէ ոչ՝ եկեղեցին ըստ իւր հնա-
ւանդ սովորութեան այս շնորհս մեզ կ'ընէ , պարտաւորեցնելով
զմեզ 'ի գործ դնելու մի քանի
բարի գործքեր . ինչպէս՝ ողորմու-
թիւն , ծումապահութիւն կամ ջեր-
մեռանդական գործքեր , զոր օրի-
նակ եկեղեցեաց , կամ Ամենա-
սուրբ Հաղորդութեան այցելու-
թիւններով , վարդարան ըսելով , աշխարհիս խաղաղութեան և սրբ-
ոց կրօնի տարածման համար ա-
ղօթելով , և այլն :

Բ. — Ներողութիւնն կը բաժնուի՝
1⁰ ըստ առարկային , 2⁰ ըստ ար-
դեանց , 3⁰ ըստ ժամանակին :

1⁰. Ներողութիւնն ըստ առար-

կային՝ որում յարեալն է, տեղա-
կան կ'ըսուի, երբ անմիջապէս մի
տեղւոյ կը շնորհուի. այսինքն՝
այս ինչ Եկեղեցւոյ :

Իրական կ'ըսուի՝ երբ անմիջա-
պէս մի իրի կը շնորհուի. զոր օ-
րինակ՝ վարդարանի, պատկերի,
միտալի և այլն :

Աստ երկու ինչ կայ գիտողու-
թեան արժանի :

Նախ՝ միջական կերպով անձանց
կը շնորհուին այս ներողութիւնք.
այսինքն՝ այս ինչ Եկեղեցին այցե-
լողներուն, այն ինչ վարդարանն,
կամ միտալն կամ իւրեանց
վերայ կրողներուն :

Երկրորդ՝ երբ մէկն այսպիսի
ներողութիւն ունեցող վարդա-
րանն կամ իւրեանց կը իւր քով, բայց
չունենայ գիտաւորութիւն ներո-
ղութիւնն շահելու, այս իրերն՝
ներողութիւնն չեն կորսնցներ,

թէ և այն անձն արդեամբ ներո-
ղութիւն չընդունիր, ըստ որում
գիտաւորութիւնն չունի և տրա-
մադիր չէ :

Ներողութիւնն ըստ առարկա-
յին անձնական կ'ըսուի, երբ ան-
կախ 'ի տեղւոյէ, յիւրէ, անձանց
կը շնորհուի. զոր օրինակ Հաղոր-
դութիւն առնողներուն, աղօթող-
ներուն, խոստովանողներուն ևլն :

2⁰. Ներողութիւնն ըստ ար-
դեանց՝ զորս յառաջ կը բերէ,
շխախտար կ'ըսուի, երբ կ'ազատէ
և կը ջնջէ բոլոր պատիժն :

Մասնական կ'ըսուի, երբ պատ-
ժոյ մի մասէն միայն կ'ազատէ :
Հիսկատար ներողութիւնը մաս-
նական կը լինի, երբ մին կ'ուզէ
լիակատար ներողութիւն ընդու-
նիլ, սակայն չուզեր միանգամայն
ո՛ր և իցէ ներելի մեղք իսկ ատել
և հեռի մնալ անտի :

Մասնական ներողութիւնն ըստ մտաց մեծաւորին, այսչափ աւուր կամ այսչափ տարուան պատիժն կը թողու: Զոր օրինակ՝ հին քրիստոնէից ժամանակ մէկն որ քառասուն աւուր կամ եօթնամեայ մի ապաշխարանքի կը պարտաւորուէր, քառասնօրեայ կամ եօթնամեայ ներողութեամբ յիշեալ ապաշխարանքներէն կամ պատժէն կ'ազատուէր:

30. Վերջապէս ներողութիւնն ըստ ժամանակին առ որ կը տարածի, մշտնջենաւոր, ժամանակաւոր և անսահման է, երբ 'ի մշտընջենաւորս կամ առ ժամանակ մի և կամ յանսահմանս կը շնորհուի:



Թէ որում աւանդուած է ներողութեան զանազան մատակարարութիւնն եւ բաշխման իրաւասութիւնն.

Ըստ բաւականին կրցինք բացատրել թէ ներողութեան շնորհն կը կայանայ Յիսուսի Քրիստոսի, Ամենասուրբ Կուսին և սրբոց արդեանց մերձեցուցման մէջ: Սակայն այս անհուն արդեանց մատակարարն ո՞վ է: Ո՞վ կարող է ըստ տուեալ Աստուածային իրաւանց մերձեցուցանել այդ արդիւնքներն մեզ մեղաւորացս, զայնս մեր պիտոյից վերայ դարձընելով և զմեզ մասնակից ընելով այնց, որպէս զի մեք զայնս Աստուծոյ նուիրելով, կարող լինիմք կամ ամբողջովին կամ ըստ մասին վճարել այն ժամանակաւոր պատիժն, որում մեր մեղօքն

արժանացած եմք: Ըսինք նաև, սիրելի հոգեսէրդ իմ, թէ եկեղեցին՝ մի միայն Առաքելական Հռովմէական Ս. եկեղեցին է այս Գանձուց բաշխողն և մատակարարն: Նմա միայն կը պատկանի մի այսպիսի իրաւասութիւն, ինչպէս վճուեր և սահմաներ է Տրիտենդեան Ս. Ժողովը (1): Այս ճշմարտութիւնն 'ի հաւատոց է. և այն որ Հռովմէական Ս. եկեղեցւոյ հարազատ զաւակ է, պէտք է հաւատայ թէ այս իրաւասութիւնն ունի արդեամբ Հռովմէական եկեղեցին, և զայն ընդունած է նա 'ի Քրիստոսէ՝ իւր Հիմնադրէն, և զայս իրաւասութիւնն գործածած է, և կը շարունակէ գործածել մինչեւ ցայսօր:

(1) Նիստ ԻԵ. 'ի 4 Դեկտեմբերի, վճիռ յաղագս ներողութեանց:

Քրիստոս Տէրն մեր ըսաւ Առաքելոց. «Որպէս առաքեաց զիս » Հայր, և ես առաքեմ զձեզ»: (Մատթ. ԻԸ. 18): Այսինքն որով իշխանութեամբ որ իմ Հայրս զիս զրկեց, նոյն իշխանութեամբ ես ևս զձեզ կը զրկեմ: Այս խօսքն ճշդագոյն և բացորոշակի կրնամք ըմբռնել, եթէ միանգամ մի ուրիշ ժամանակ ըսած միւս խօսքերուն վերայ ևս մեր ուշն ու ուրուշն հրաւիրեմք. այսինքն թէ՛ «Զոր «կապիցէք յերկրի, եղիցի կապեալ «յերկինս. և զոր արձակիցէք «յերկրի, եղիցի արձակեալ յերկինս»: (Մատթ. ԺԸ. 18) Այսու ըսել կ'ուզէր թէ՛ երկրիս վերայ ընդհանուր ձեր կապածներն երկնից մէջ ևս կապուած պիտի լինին. և զով որ երկրիս վերայ արձակէք, ես ևս երկնից մէջ զայն պիտի արձակեմ:

Աստի կը հետեւի թէ՛ Քրիստոս Տէրն մեր ինչպէս որ այս խօսքերով իշխանութիւն տուաւ Եկեղեցւոյ՝ մեղաւորներն կապելու, այսինքն ապաշխարանքներ դնելու, նոյնպէս իշխանութիւն և իրաւասութիւն շնորհեց բացարձակապէս նմին Ս. Եկեղեցւոյ՝ նոյն ապաշխարանքներն կամ թեթեւցընելու և կամ բոլորովին ազատելու անկից մեղաւորներն, այսինքն ներելու։ Դարձեալ՝ ինչպէս որ Ս. Եկեղեցին այս խօսքերով իշխանութիւն և իրաւասութիւն ընկալաւ մեղքերու և նոցա կցորդեղեալ յաւիտենական պատժոցն ներելու, նոյնպէս և առաւել ևս կարող է մեղաց ժամանակաւոր պատիժն ներել, վասն զի բնական է թէ՛ ո՞վ որ աւելին կ'ընէ, կարող է ևս պակասն ընել։

Մի այսպիսի իրաւասութեան՝

'ի Քրիստոսէ հաստատեալ լինելն յայտ յանդիման կ'երեւի, եթէ վայրկեան մ'ևս մեր աչերն դարձընեմք Առաքելոց և նոցա յաջորդաց վերայ։

Նախ կը տեսնեմք Պօղոս Առաքեալն՝ որ զազգապիղծ Կորնթացին յառաջ բանադրած էր, այսինքն կապած և մատնած էր զնա սատանայի՝ հետեւեալ խօսքերով թէ, «Զի ես թէպէտ մարմնով մե՜ «կուսի եմ, սակայն հոգւով մերձ եմ, բայց արդէն իսկ իբրեւ 'ի «մօտոյ ընտրեցի զայն որ այնպէսն «գործեաց, յանուն Տեառն մերոյ «Յիսուսի Քրիստոսի, մատնել «զայնպիսին սատանայի՝ ի սատա՜ «կումն մարմնոյ, զի ոգին ապա «ըեսցի յաւուրն Տեառն մերոյ «Յիսուսի Քրիստոսի»։ (Ա. Կորնթ. Ե. 3) Ապա գթալով նորա վերայ՝ զայն կ'արձակէ Առաքեալն, և

նորա վճարելի պատժոյն մի մասն
կը թողու , ըսելով՝ «Շատ է այն-
«պիսւոյն պատուհասն այն , որ
«'ի բազմաց անտի է : Այսուհետեւ
«նմին հակառակն մանաւանդ չը-
«նորհել ձեզ նմա՝ և մխիթարել »
«որպէս զի մի գուցէ» կը յաւելու
Առաքեալն՝ «յառաւել տրտմու-
«թենէն ընկղմեսցի այնպիսին» :
(Բ. Կորնթ. Բ. 6-7.)

Այսպէս Ոսկեբերան(1) , Սուրբն
Ամբրոսիոս(2) , Սուրբն Փակիա-
նոս(3) և Թէոտորիտոս(4) և այլ
բազում Հարք մեկնիչք Ս. Գրոց
կը հաւաստեն :

(1) Ի Ճառն Գ. 'ի Թուղթն Բ. առ
Կորնթացիս :

(2) Գիրք Բ. վասն ապաշխարութեան
ԳԼ. Է. ԹԻւ 33 :

(3) Թուղթ Գ. առ Սեմբրոնիոս :

(4) Ի Թուղթն առ Կորնթացիս ԳԼ.
Բ. 6-7-8 :

Նախկին դարուց սովորութիւնն
ևս զայս կը հաստատէ :

Սուրբն Կիպրիանոս(1) և Տեր-
տուղիանոս(2) կը վկայեն թէ՛ ըստ
խնդրանաց մարտիրոսաց բան-
տարկելոց 'ի ժամանակս հալածա-
նաց , Եպիսկոպոսունք կը շնոր-
հէին անկելոց ներողութիւն՝ իւ-
րեանց վճարելի ապաշխարանաց
մէկ երկրորդին , զոր պարտաւոր
էին ամբողջ կատարել նախ քան
զխորհրդական արձակումն :

Յամի 314 Անկիւրիոյ ժողովոյն
Ե. կանոնն , ինչպէս նաև Նիկիոյ
առաջին Տիեզերական ժողովոյն
ԺԲ. կանոնն , Կարքեդոնիյամի 398
տեղի ունեցած Գ. ժողովոյն ՀԶ.
կանոնն , և այլ շատ ժողովներ բա-
ցորոշ եղանակաւ կը վճռեն և կը

(1) Թուղթ 57 առ Կուռնէլիոս :

(2) Գիրք յաղագս ողջախոհութեան
ԳԼ. ԻԱ :

սահմանեն հին ժամանակաց մէջ
Եպիսկոպոսաց՝ հաւատացեալնե-
րուն ներողութիւն բաշխելոյ իշ-
խանութիւն ունենալն, 'ի շնորհս
և արդեամբ այն հաւատացելոյ,
որք ջերմեռանդն էին 'ի վճարման
ապաշխարանաց, և կամ սակս հի-
ւանդութեան անկարող կը գըտ-
նուէին վճարել զայնս ամբողջովին:

Ահա նիկիոյ առաջին ժողովոյն
ԺԲ. կանոնն բառ առ բառ 'ի հաս-
տատութիւն բանիցս:

«Որք 'ի ժամանակս հալածա-
նաց զառաջինն պինդ կացեալ՝
«ապա 'ի կռապաշտութիւն դար-
«ձան, զամս երկու կացցեն 'ի կար-
«գի ունկնդրաց, և զամս տասն
«'ի մէջ աղօթականացն: Եւ եթէ
«զնշանակս անկեղծաւոր ապաշ-
«խարութեանն բանիւք և ար-
«դեամբ ցուցանիցեն, Եպիսկո-
«պոսն՝ յետ կալոյ նոցա զամս ե-

«րիս 'ի կարգի ունկնդրաց, վաղ-
«վաղեսցէ բաժանակից առնել
«զնոսա աղօթից ժողովրդեան:
«Նա՝ որպէս ինչ նմա լաւ և բար-
«ւեռք թուիցի, փոքրկացուցէ և ևս
«զժամանակ ապաշխարութեան
«նոցա: Ապա եթէ վերին երեսօք
«միայն կատարեսցեն զպարտս իւ-
«րեանց, լիովի ապաշխարեսցեն
«ըստ ամացն սահմանելոյ»:

Սուրբն Կիպրիանոս կը հաւաս-
տէ իւր Յաղագս Անկելոյ գրքին
մէջ՝ թէ ընդ միշտ ներողութիւնք
կը շնորհուէին անկելոյ 'ի ժամա-
նակս հալածանաց, և եդեալ ա-
պաշխարանքներն չլրացած՝ ներո-
ղութեան միջոցաւ կ'արձակուէին,
և կը հաղորդուէին կենարար մար-
մնոյ Տեառն, ազդուագոյն եղա-
նակաւ և քաջութեամբ սրտի
քրիստոնէութեան հալածչաց դէմ
մաքառելու և դիմագրաւելու, և

մարտիրոսութեան փառաւոր յաղթական պսակաւ պսակուելու համար :

Ընդհանուր Հարց վկայութիւններն 'ի մէջ բերելով իմ նպատակէս շեղած պիտի լինիմ, ով իմ հաւատացեալ հոգեւոր սիրելի, զի նպատակ չունիմ երբէք համոզելոյ զքեզ, որ արդէն համոզեալդ ես, և կը հաւատաս և կը դաւանիս ինչ որ Հռովմէական Ս. Եկեղեցին կը հաւատայ և կը դաւանի . մի միայն կէտ նպատակի ունիմ գլխաւորապէս կրթել քո հոգին 'ի գործեականին, և տրամադրել զայն վայելելոյ միայնակիս շնորհ՝ զոր Եկեղեցին և Եկեղեցւոյ Գլուխն՝ Յիսուսի Քրիստոսի Փոխանորդն և Սրբոյն Պետրոսի Յաջորդն՝ Սրբազան Քահանայապետն Հռովմայ Իւր քով աւանդ ձրդուած գանձուց արկղէն չզլանար

և ոչ մի անհատի . նա մանաւանդ այս վերջին տարիներուն մէջ, յորս թէ քաղաքականապէս և թէ բարոյապէս դառն և աղետալի պարագայից տակ ընկճեալ լինելով համայն Կաթողիկէութիւնն, հաւատացելոց աղօթիցն և օժանդակութեանց կարօտ է գտնելու համար այն դարմանն, որում մէն մի Կաթողիկէ սիրտ անհամբեր և անձկանօք կը տենչայ :

Հարկ չեմ տեսներ կ'ըսեմ այլ ևս տեսականապէս դեգերիլ այս նիւթոյս վերայ . քանի որ արդէն բնական լոյսն զմեզ այս կէտիս վերայ կը համոզէ կատարելապէս : Վասն զի ո՞չ զգիտեր թէ՛ կարգաւորեալ մի հասարակապետութեան և կամ մի կառավարութեան մէջ, հասարակութեան կամ վարձ կամ պատիժ ևայլն տալն՝ կը պատկանի նոյն հասարակապետ-

տութեան գերագոյն իշխանին և ատեանին, ինչպէս նաև սոցա կը վերաբերի ըստպարագային և ըստ առթին քաղաքացեաց հարկ եղած բարիքն տնօրինել և մատակարարել: Ի^ոնչպէս ուրեմն, ի՞նչ գետէրդ իմ, կրնայ ողջամիտ եղող մի անհատ տարակուսիլ թէ Եկեղեցին՝ որ ՚ի Քրիստոսէ հաստատեալ է, մի ամենականոնաւոր հասարակապետութիւն է, հետեւաբար նորա Գլուխն՝ ծայրագոյն Քահանայապետն, և յետ նորա Եպիսկոպոսունք՝ կարող են և ունին իշխանութիւն Եկեղեցւոյ աւանդուած և Յիսուսի Քրիստոսի, Ամենասուրբ Կուսին և Սրբոց անըսպառ արդիւնքներովն լի Գանձարանէն շնորհել ըստ հարկին ներողութեան սուրբ շնորհն, մերձեցուցանել զայն արդիւնս թէ կենդանեաց և թէ մեռելոց, ՚ի

հատուցումն և ՚ի վճարումն ժամանակաւոր պատժոց, որոց ենթարկեալն է մէն մի անկեալ, մէն մի մեղաւոր, և այսու հատուցանել միպարտ՝ զոր պարտի անշուշտ վճարել կամ աստ կամ ՚ի հանդերձելումն ՚ի Քաւարանի:

Ըսինք թէ՝ Ծայրագոյն Քահանայապետն և ապա Եպիսկոպոսունք կարող են Եկեղեցւոյ գանձարանն բանալ հաւատացելոց և շնորհել ներողութիւն: Վասն զի յայտնի է թէ ՚ի Քրիստոսէ հաստատեալ Եկեղեցւոյ հասարակապետութեան գլուխն է Սրբազան Քահանայապետն Հռովմայ, և Եկեղեցւոյ ատեանն կը կազմուի յԵպիսկոպոսաց: հետեւաբար սոքա միայն կարող են բաշխել և շնորհել զներողութիւն հաւատացելոց:

Սակայն դիտելու արժանի է թէ՝ Եպիսկոպոսունք իբր Եկեղեց-

ւոյ հասարակապետութեան Ատենի անդամք և իբր մի առանձին վիճակին վերայ իրաւասութիւն ունեցող հովիւք կարող են միայն հրամանաւ Սրբազան Ծայրագոյն Քահանայապետին Հռովմայ շնորհել ներողութիւն, ինչպէս բացորոշ եղանակաւ կ'աւանդէ Սուրբն Թովմաս :

Այս սկզբունքէս կը հետեւի թէ՛ Սրբազան Քահանայապետն կարող է ներողութիւն շնորհել ըստ հարկին համայն տիեզերաց, մինչ Եպիսկոպոսունք իրենց վիճակաց մէջ միայն զայս ընելու իշխանութիւն ունին :

Սրբազան Քահանայապետն կարող է լիակատար ներողութիւն շնորհել, բայց Եպիսկոպոսունք ըստ Դ. Լատերանեան Ժողովոյ գումարեւոյ յամին 1215, 'ի Քահանայապետութեան իննովկեն-

տիոսի Գ. ի, 'ի Գլ. 62. (Քանզի յայնմանէ և այլն) միայն մի տարուան յօժանելն զեկեղեցիս, և քառասուն աւուրց այլ պարագայից մէջ :

Գալով Պատրիարքաց, Նախագահից և Արքեպիսկոպոսաց, սոքա արտօնացեալ են այնքան՝ որքան Եպիսկոպոսունք. այս տարբերութեամբ միայն՝ որ կարող են հրատարակել և շնորհել ներողութիւնն, իւրեանց իրաւասութեան ներքեւ գտնուած Պատրիարքական, Նախագահական և Արքեպիսկոպոսական գաւառաց :



Ներողութիւն շահելոյ համար հարկ եղեալ թեւերին, եւ այս նկատմամբ մի բանի գործնական դիտողութիւնք .

Ա. — Ներողութիւններն շահելոյ համար հասարակօրէն հետեւեալ թէութիւնք կը պահանջին :

1⁰. Ամէն ոք պարտաւոր է գոնէ զօրութեանալէս (*virtualiter*) դիտաւորութիւն ունենալ ներողութիւնն շահելոյ : Որովհետեւ ներողութիւն կը շնորհուի առաջադրելի դիտաւորութեամբ . զոր օրինակ՝ եկեղեցւոյ պայծառութեան , Սրբոյ Կրօնի տարածման համար եայլն . որով 'ի գործնականին անպատճառ պէտք է որ , այն՝ որ կ'ուզէ մի այսպիսի շնորհ վայելել , գոնէ զօրութեամբ դիտաւորութիւն դնէ զայն շահելոյ , ըստորում որոշեալ գործն պէտք է

ուղղուի այն նպատակին , առ որ ուղղեալ են միտք եւ դիտաւորութիւն եկեղեցւոյ :

2⁰. Ներողութիւն շահիլ ուզողն պէտք է որ՝ Ա. մկրտեալ լինի . որովհետեւ այն որ եկեղեցւոյ չվերաբերիր , չկրնար նորա Գանձարանէն վայելել : Բ. պէտք է որ 'ի շնորհս լինի : Գ. զերծ լինելու է յս եւ իցէ եկեղեցական դատականքոյ . վասն զի դատակնիքն՝ հոգեւոր բարեաց մասնակցութեան կը զրկէ զմարդ : Դ. պէտք է հպատակ լինի այն մեծաւորին , որ կը շնորհէ ներողութիւնն , վասն զի խնդիրն կը չըջի 'ի գործածութեան ճշմարիտ իրաւասութեան , որ միայն հպատակաց վերայ կ'ազդէ : Սակայն 'ի վերայ այսր ամենայնի , երբ ներողութիւնն անմիջական կերպով այս ինչ եկեղեցւոյ , կամ Խաչի եայլն շնորհուած է , նոյն

իսկ ուրիշ մեծաւորաց հպատակք կարող են շահիլ զներողութիւն :

3⁰. Որոշեալ գործոց գործադրութիւնն և կատարումն հարկ է առ ՚ի շահիլ զներողութիւն : Բայց՝ աստի չհետեւիր թէ մի վարդաբան ըսելու պարտաւոր լինելով , մի Հայր մեր և մի Ողջոյն թողլով , որոշեալ գործն կատարած չլինիր : Միայն թէ ՚ի գործնակաւնին կը յանձնարարուի հոգ և խնամք ՚ի ճիշդ գործադրութեան և ՚ի կատարման որոշեալ հրամայեալ գործոյն :

Իսկ լիակատար ներողութեանց համար ՚ի մասնաւորի , հետեւեալ թէութիւնք կը պահանջին :

1⁰. Պէտք է որ ամէն ոք իւր ներեկի մեղացն ևս ներումն և թողութիւն առած լինի խոստովանութեամբ : Վասն զի հակառակ պարագայի մէջ մնացեալ ներեկի

մեղքին ժամանակաւոր պատիժն իսկ կը մնայ անվճար :

2⁰. Խոստովանութիւնն անհրաժեշտ պէտք է , թէ և մեր մեղքերն ծանր չլինին՝ այլ ներեկի , ըստ վճռոյ սրբոյ ժողովոյն ներողութեանց յամի 1759 ՚ի 15 Մայիսի , հաստատելոյ և վաւերացելոյ ՚ի կղեմէսէ ԺԳ. է :

3⁰. Հաղորդութիւն ևս պարտք անհրաժեշտ է առ ՚ի շահիլ զլիակատար ներողութիւն : Սակայն դիտելու արժանի է նախ՝ թէ հաղորդութիւնն սրբապղծօրէն պէտք չէ լինիլ . երկրորդ՝ հաղորդուած օրերնիս կարող եմք շատ ներողութիւններ միանգամայն շահիլ , կարող լինելով նաև զայնս մեռելոց մերձեցուցանել , թէ և մէն մի ներողութեան համար առանձինն հաղորդութիւն հրամայուած լինի : Այսու ամենայնիւ միւս քրտ-

չեալ գործք անթերի կատարուելու են , ըստվճռոյ սրբոյ ժողովոյն Ներողութեանց որ 'ի 29 Մայիսի և 'ի 15 Դեկտեմբերի 1841 ամին , և յ30 Օգոստոսի 1847 ամին :

4⁰. Աղօթք ևս կարեւոր են ըստ դիտման շնորհողին : Այս աղօթք եթէ անորոշ են , 'ի գործնականին լաւ է մէն մի անհատի համար իւր հոգեւոր Հօր խորհուրդ հարցնել և ըստ այնմ շարժիլ :

Բ. — Ի դիւրութիւն և 'ի զգուշութիւն հաւատացելոց անցնիմք մի քանի գործնական դիտողութեանց , որք մեծ օգուտներ պիտի պտղաբերեն առ 'ի արդիւնաւորապէս շահիլ զՆերողութիւնս :

1⁰. Ներողութիւնք մեղաւորաց համար տրուած մի մեծ շնորհք են . զի արդարք մեղք չունենալով և ոչ պատժոյ ենթակայ են , որով և հետեւաբար արդարք

Ներողութեանց շնորհաց պէտք չունին :

2⁰. Ըսինք թէ Ներողութիւն չահելոյ համար 'ի շնորհս լինելու է . հետեւաբար երբ մի ոմն խոստովանի և խոստովանելէ յետոյ վերջատին 'ի մեղս անկանի , պէտք է դարձեալ խոստովանի և արձակուի մեղքէն , ապա թէ ոչ՝ կը զրկուի այս շնորհէն : Նոյնպէս երբ մէկն մի սրբապիղծ խոստովանութիւն ընէ , բնական է դարձեալ որ կը զրկուի սոյն շնորհէն . և կամ վերապահեալ մի մեղք գիտութեամբ լռէ 'ի խոստովանութեան , կը զրկուի դատակրնքոյ արձակմանէն , ևս և ընդ միշտ կը մնայ այն դատակրնքոյ տակ :

3⁰. Լիակատար Ներողութեանց համար ըսինք թէ՝ խոստովանութիւնն ո՛ր և իցէ պարագայի մէջ անհրաժեշտ է , սակայն երբ գըտ-

նուին այնպիսիք՝ որ ութ օրն միանգամ խոստովանելոյ բարի սովորութիւնն ունին, հարկ չկայ որ լիակատար ներողութեան համար որոշուած օրն խոստովանին, բաւական է որ այն եօթնեկին մէջ խոստովանած լինին սոյն այս գիտմամբ :

4⁰. Երբ ներողութեան հրատարակման կոնդակին մէջ *Աշխարհիստայաշխարհելոյ եւ հաղորդուելոյ խօսքերն* որոշակի գտնուին, ինչպէս միշտ կը պատահի Յորելեանց մէջ, ըստ Բենեդիկտոսի ԺԴ-ի, պէտք է խոստովանի անպատճառ այն եւս՝ որ կատարելապէս ՚ի շնորհս կը գտնուի. թէև այս պարագային մէջ, հարկ չտեսնուի խորհրդական արձակման. այլ միայն Քահանային մի օրհնութեամբն եւս մի այսպիսի անհատ կարող է շահիլ զՅորելեանն :

5⁰. Հրամայեալ աղօթք ընդունելի են, երբ յեկեղեցւոջ հրապարակական եղանակաւ կը կատարուին. նոյնպէս ընդունելի են եթէ երկու հոգի փոփոխակի ըսեն. ինչպէս վճռեր է Ս. Ժողովն վաւերացմամբ և հաստատութեամբ Պիոսի Է. ի 20 Փետրվարի 1820 ամին : Սակայն երբ արդէն մի անհատ պարտաւորեալ է, զոր օրինակ՝ վասն ապաշխարանաց մի վարդարան և կամ մի այլ աղօթք ըսելու, չէ կարող ներողութեան համար հրամայուած վարդարանին կամ աղօթքին փոխանակելի համարիլ և այսու շահիլ ներողութիւնն :

6⁰. Երբ մի արտօնացեալ քահանայ՝ ըստ հարկին կամ ըստ պարագային կամ ըստ պահանջման անձին, տեղւոյն և ժամանակին որոշեալ բարի գործքերն

ուրիշ բարի գործոց փոխանակէ ,
յանձն առնելով կը շահիմք զնե-
րողութիւն :

70. Զոր ինչ ըսինք աղօթից հա-
մար , զնոյն կը կրկնեմք ողորմու-
թեան որախոսութեան կամ քա-
նակութեան նկատմամբ : Ի գործ-
նականին ուրեմն որպէս զի մեր
խիղճն հանգիստ մնայ , լաւ կը
լինի հոգեւոր Հօր խորհրդով կա-
տարել զողորմութիւնն , այսինքն
նա որ կարողն է ըստ պարտ ու
պատշաճին չափել և կշռել մեր
վիճակն և մեր կարողութիւնն ,
ինչ որ հրամայէ զայն ընելու եմք :
Այս հրամայեալ ողորմութենէ՝
կրօնաւորք , տան տիկնայք , գա-
ւակունք զերծ կը մնան և ազատ
են , եթէ մեծաւորն , տան տեսրք
և կամ հարք կատարեն նոցա
փոխան :

80. Ներողութիւնն ընդունելոյ

համար հրամայեալ գործք պէտք
է որ որոշեալ ժամանակին ան-
թերի կատարուին : Բայց կարող
է մէկն իւր խոստովանութիւնն
որոշեալ միջոցին՝ կամ սկիզբն և
կամ վերջն կատարել : Նոյնպէս
երբ մէկն անհոգ գտնուի իւր գա-
ւառին կամ հայրենեաց մէջ ըն-
դունիլ ներողութիւնն , կարող է
այլուր ընդունիլ զայն , եթէ տա-
կաւին տեսէ որոշեալ միջոցն :

9. Վերջապէս ներողութիւնք
կը շնորհուին թէ՛ կենդանեաց և
թէ՛ մեռելոց . այլ կենդանեաց
համար շնորհուածն չէ հնար մեր-
ձեցուցանել մեռելոց , ինչպէս նաև
միայն մեռելոց համար տրուած
ներողութիւնն կարելի չէ կենդա-
նեաց մերձեցուցանել : Իսկ եթէ
մի յայտնի որոշողութիւն չլինի ,
այլ ազատ թողուի , կարող է մէն
մի անհատ իւր մեռելոց ևս մեր-

ձեցնել յօգուտ և 'ի թեթեւացումն պատժոց Բաւարանի :

Աստ չեմ կրնար չցաւիլ և միանգամայն լռել՝ երբ կը մտածեմ, ո՞հոգեսէր հաւատացեալդ իմ, թէ կան մի քանի թեթեւահաւատ քրիստոնեայներ, որք ննջեցելոց համար տրուած ներողութեան վերայ ծիծաղելով դէմ կը խօսին, առանց 'ի նկատի առնելոց թէ՛ չիք պատճառ զլանալոց նաև ննջեցելոց՝ որք կատարեալ անդամք են մարմնոյն եկեղեցւոյ, մի շնորհք՝ որ հաստատեալն է հասարակաց արդեանց մէջ, ինչպէս կ'ըսէ Սուրբն Թովմաս . «Չիք ինչ պատճառ թէ առ ինչ եկեղեցին «կարող է փոխաբերել զհասարակաց արդիւնս՝ յորս հաստատին «ներողութիւնք 'ի կենդանիս և «ոչ 'ի մեռեալս» : «Այսպիսիներն, «կ'ըսէ Փիանօ Ժողովրդապետն,

«պէտք էր որ նախ սորվէին գիտ-
«նային թէ ինչ կերպով տրուած
«են, ինչ կը նշանակեն այն ներո-
«ղութիւնքն, այն ատեն կը տես-
«նէին որ ծուռ են թաղբուրութիւն-
ներով է խօսածնին : Բայց ինչալ
«ըսելու ըլլան, միշտ լաւ է նըն-
«ջեցելոց հոգւոյն համար ամէն
«տեսակ օգնութիւն ընել, թէ
«Պատարագով, թէ ողորմութիւն
«տալով, թէ աղօթքով և թէ բա-
«րեգործութեամբ, և ինչ և իցէ
«ապաշխարանքով . որպէս զի որ-
«չափ հնարն է շուտ ազատին Բա-
«ւարանին սոսկալի տանջանքէն :
«Վասն զի, ինչպէս կ'ըսէ Ս. Օգոս-
«տինոս, միշտ լաւ է որ առատօ-
«րէն օգնեմք իրենց, թէև կարօ-
«տութիւն չունենան՝ կամ չկրնան
«վայելել մեր ըրած օգնութիւնքն՝
«քան թէ օգնելէն պակսիլ երբ
«պէտք ունին օգնութեան» :

Յորեկեան ցերեպարեան վերայ .

Մինչ ցայս կէտ , հոգեսէր հաւատացեալդ իմ , տեսանք թէ ինչ է ներողութիւնն , և թէ եկեղեցի սուրբ 'ի հաստատութենէ անտի իւրմէ զլացած չէ երբէք իւր հարազատ զաւակացն մի այսպիսի մեծ շնորհք : Հիմայ լիակատար ներողութեանց մէջ զքեզ լաւագոյն եղանակաւ կրթելու և առաւել շահուէտ և օգտակար մի կէտ ես քեզ ուսուցանելու նպատակաւ , կ' ուզեմ մի քանի խօսք ևս ընել 'ի մասնաւորի Յորեկեան ներողութեան վերայ , զոր Սրբազան Քահանայապետն Հռովմայ կը բարեհաճի շնորհել մեզ ըստ հարկին և ըստ պարագային :

Յորեկեանն է ուրեմն ,

«Թուղթ Քահանայապետական՝
«(Indultus) որով կը շնորհուին

«Թէ լիակատար ներողութիւն և
«Թէ մի քանի արտօնութիւնք որոշեալ գործքերն կատարողնե-
«րու : »

Յորեկեանն Աստուծոյ ամենէն մեծ և գերազանց շնորհներէն մին է , և է լիուլի արտօնութեամբք զարդարեալ մի լիակատար ներողութիւն :

Այս Յորեկեան անունն Քսենտոս Դ. Քահանայապետէն սկսաւ . որ անունն Հրէից Յորեկեան տարիէն առաւ նա , որ յիսներորդ տարի կը կոչուէր :

Կը կարդամք (Ղեւտ. ԻԵ. 10) թէ՛ Աստուած հրամայեր էր Հրէից իրեն նուիրել ամբողջ յիսներորդ տարին , և այս պատճառաւ Սուրբ տարի կոչուած էր : Երբ յիսներորդ տարին կը մօտենար , իբր նախապատրաստութիւն , ամենուրեք քահանայք փողերով կ'ի-

մացնէին Յորեւեան տարւոյն մեր-
ձենալն : Այս տարին մի ուրախու-
թեան տարի էր . վասնզի աքսորա-
նաց ու գերութեան մէջ գտնուող-
ներն կ'ազատէին և իւրեանց բնա-
կավայրերն կը գառնային , պարտք
ունեցողներուն կը ներուէր , յան-
ցաւորներն թողութիւն կ'ընդու-
նէին : «Տարի թողութեան եղիցի
«ձեզ . դարձցի իւրաքանչիւր ոք
«'ի ստացուածս իւր . . . մի նեղեա-
«ցէ այր զընկեր իւր :»

Հասարակ Յորեւեանն Վոնիփա-
կիոս Ը. 1300 ին հաստատեց , և
կը կատարուէր ամեն հարիւրե-
րորդ տարին : Կղեմէս Զ. յիսնե-
րորդ տարւոյ վերածեց : Գրիգոր
ԺԱ. զայն՝ երեսներորդ երրորդ .
Պօղոս Բ. և Քսեստոս Դ. քսան և
հինգերորդ տարւոյ վերածեցին :

Յորեւեանն նախ միայն Հռով-
մայ մէջ կը կատարուէր . սակայն

Վոնիփակիոս Թ. հրաման ըրաւ
հանդիպած տարւոյն առաջին տա-
րին 'ի Հռովմ', իսկ յաջորդ տարին
ընդհանուր տիեզերք կատարելու :
Ի Հռովմ կատարեալ մի տարի կը
շարունակէր , և այս պատճառաւ
Սոսրէ տարւոյն կամ Մեծագոյն Յո-
րեւեան կը կոչուէր :

Այդտարյ կարգի կամ *anale* Յոթն-
շինի (*ad instar Jubilaci*) կը կո-
չուի Յորեւեանն , երբ առանձին
և մասնաւոր պատճառի համար կը
հրատարակուի . և այս կ'ըսուի
Փոքրագոյն Յոթնեան :

Յորեւեանն այլ է ընդհանուր և
այլ մասնաւոր . առաջինը ընդհա-
նուր աշխարհի կը շնորհուի , երկ-
րորդն մի գաւառի կամ տեղւոյ
կը շնորհուի . այս 'ի ձեռ Յոթնշինի
(*in formam Jubilaci*) կ'ըսուի :

Մասնաւոր Յորեւեանի նկատ-
մամբ դիտելու է տրուած Կոն-

դակին եղանակն . Հասարակօրէն միայն երեք թէութիւնք կը պահանջին : 1⁰ Խոստովանութիւն . 2⁰ Հաղորդութիւն . 3⁰ Եկեղեցեաց այցելութիւնք : Իսկ արտօնութիւնք՝ միւս Յորեկեանց նման են :

Ընդհանուր Յորեկեանց համար թէ մեծագոյն լինի և թէ փոքրագոյն , հասարակօրէն հետեւեալ դործք կը պահանջին :

1⁰ Եկեղեցւոյ այցելութիւն . 2⁰ Խոստովանութիւն . 3⁰ Հաղորդութիւն . 4⁰ Ծումապահութիւն , ուրիշ ծով օրերէն դուրս լինելու պայմանաւ . եթէ Գահանայապետն որոշեալ խօսքերով նոյն օրերն չնշանակէ՝ ի Կոնդակին , 5⁰ Ողորմութիւն . 6⁰ Ձայնաւոր աղօթք :

Յորեկեանի ժամանակ շնորհուած արտօնութիւնք հետեւեալք են .

1⁰ Ամէն ոք ազատ է ու և իցէ խոստովանահայր ընտրել , և նմա

խոստովանիլ իւր մեղքերն . բաւական է որ ընտրուած խոստովանահայրն տեղւոյն վիճակաւորէն հաստատուած և ընդունուած լինի : Այսպէս նաև վանականք և մայրապետք ազատ են իւրեանց խոստովանահօրմէն զատ՝ վանականներն և մայրապետներն խոստովանցնելու արտօնութիւն ունեցող մի այլ խոստովանահայր ընտրել (1) :

(1) Իբր ծանօթութիւն ամենակարեւոր կը դատեմք յայտնել հոգեւոր Առաջնորդաց և խնդրել ՚ի նոցանէ մի այսպիսի գեղեցիկ արտօնութենէ չզրկել զհաւատացեալս ոչինչ պատճառներով : Վասն զի այս արտօնութենէն շատ և շատ կ'օգտին հաւատացեալք . և պիտի բռնուին , ազատ չլինելով՝ շատերն կը զրկուին Յորեկեանի շնորհքէն տարբեր պատճառաց համար , զորս յիշելն հարկ չեմ տեսներ . բայտ որում լաւ համոզուած եմ թէ՛ մէն մի մեծաւոր գիտէ խորհիլ իւր հաւա-

2⁰. Խոստովանահարց կը շնորհուի հրաման արձակելոյ զապաշխարողսն յո և իցէ վերապահեալ դատակնքոց :

3⁰. Նոյնպէս կը տրուի հրաման խոստովանահարց՝ արձակելոյ ՚ի գաղտնի անկանոնութեանց :

4⁰. Կը շնորհուի հրաման խոստովանահարց՝ ՚ի խոստովանութեան բոլոր պարզ ուխտերն փոփոխելոյ , այլ ոչ երբէք տնօրինելոյ :

Մի տրտմիր ուրեմն , ո՞վ հոգեսէր սիրելիդ իմ , երբ կը մտածես Հրէից Յորբելեանին և նոցա շնորհուած շնորհաց վերայ : Ընդհակառակն ուրախացիր , զի ունիմք մեք մի այնպիսի շնորհ , մի այնպիսի Յորբելեան՝ որ գեր քան զգեր կը գերազանցէ Հրէից Ս . տարին :

տացելոց հոգեւոր օգուտն , զոր եթէ զլանալ ուզէ անոնց , պատասխանատու պիտի լինի առաջի Աստուծոյ :

այնչափ՝ որչափ հոգին զմարմինն : Վասն զի ինչ է մարմնոյ գերութիւնն՝ բաղդատմամբ հոգւոյ գերութեան . ինչ է մի քանի լումայի պարտք՝ բաղդատմամբ այն հոգեւոր պարտուց , զոր ունիմք և կ'ունենամք մեր մեղքերովն առամենասիրելի Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս : Ի՞նչ է ժամանակաւոր յանցանաց ներումն՝ բաղդատմամբ այն ներման և թողութեան մեր մեղաց , որովք սատանային ձեռքն ինկած և գերութեան մատնուած ենք , զրկուելով յաւիտենական երանութենէ և կորսընցնելով Յիսուսի Քրիստոսի անգին Արեան վերայ ունեցած իրաւունքնիս : Ոչինչ և ոչինչ :

Ո՛հ ուրեմն , սիրելի հոգեսէրդ իմ , մի և մի լիցի մեզ մեր մարգարիտին՝ Հրէից ուլունքներն նախադասել : Վասն զի մեր գթած

մայրն Ս. Եկեղեցին կը շնորհէ մեզ
մի այնպիսի Յոբէլեան, որ ան-
ցանէ զանցանէ զՀրէից Ս. տարին,
որ պարզ ստուեր մ'էր ներկային,
պատկեր և ստուեր այն անհուն
ողորմութեան՝ զոր պիտի շնորհէր
մարդկութեան Քրիստոս Տէրն
մեր: Քանզի այնու պիտի ազա-
տէինք 'ի մեղաց, որք 'ի Ս. Գիրս
պարտիք կոչուած են, և 'ի գե-
րութենէ սատանայի:

Ահա ինչպէս յայտնի կը մար-
գարէանայ Եսայի այս նկատմամբ
ըսելով. «Հոգի Տեառն 'ի վերայ
Եիս, վասն որոյ և օծ իսկ զիս, ա-
«ւետարանել աղքատաց առա-
«քեաց զիս, բժշկել զբեկեալս
«սրտիւք, քարոզել գերեաց զթո-
«ղովթիւն և կուրաց տեսանել,
«կոչել ամ Տեառն ընդունելի և
«օր հատուցման Աստուծոյ մերոյ:»
(Եսայի ԿԱ. 1) Մարգարէութիւն

մի՛ որ 'ի Քրիստոս լցեալ է, և զոր
կատարուած կը տեսնեմք հոգե-
ւորապէս և մեք մեր վերայ քրիս-
տոնէական Յոբէլեանի միջոցաւ.
Ինչպէս ինքն ամենասիրելի Փրկիչն
մեր իսկ՝ սոյն այս կէտն կարգա-
լէն յետոյ, հաստատեց ըսելով.
«Այսօր լցան գիրքս այս յականջս
ձեր:»

«Իրաւ է թէ, կ'ըսէ Փիանօ Ժո-
«ղովրդապետն, մեղաւոր մի ճըշ-
«մարիտ զղջում և դարձ ունենա-
«լով, և լաւ խոստովանութեամբ
«սատանային գերութենէն կ'ազա-
«տի, և մեղքովն կորուսած ամէն
«արդիւնքներն նորէն կ'ստանայ,
«սակայն Յոբէլեանն ազդուագոյն
«միջոց մ'է աւելի դիւրին եղանա-
«կաւ հաշտուելու համար մեր Աս-
«տուծոյն հետ:— Ահաւասիկ Ժա-
«մանակ ընդունելի, ահա օր փըր-
«կութեան:— (Բ. Կորնթ. 2. 2)

«Այս այն ժամանակն է, յորում
«Աստուած ոչ թէ կ'անձրեւէ, այլ
«հեղեղի պէս կը հեղու մեր վերայ
«իւր մասնաւոր շնորհներն, կը
«լուսաւորէ զմեզ, կ'օգնէ մեզ
«մեղքերնիս ճանճնալ և անոնցմէ
«հեռի կենալու, որպէս զի ներէ
«մեզ: Ահա այս պատճառաւն է
«որ Պօղոս Առաքեալ կը յորդորէ
«Աստուծոյ պարգեւած մի այս-
«պիսի շնորհքն 'ի դերեւ չհանել,
«վասն զի այսպիսի պարագայի մէջ
«աւելի դիւրաւ կը լսէ մեզ մեր
«Տէրն: — Աղաջեմք մի ընդունայն
«զշնորհսն Աստուծոյ ընդունիլ
«ձեզ. զի 'ի ժամանակի ընդունե-
«լութեան, ասէ, լուայ քեզ, և
«յաւուր փրկութեան օգնեցի
«քեզ: — (Բ. Կորնթ. Զ. 1): Երկնա-
«յին թագաւորն ամէն ժամանակ
«կարօղ է մի շնորհ ընել մեզ, և
«ամէն ատեն կրնայ ներել մեզ:

«բայց կան այնպիսի առիթներ,
«յորս աւելի դիւրութեամբ մեր
«խնդիրքներն կ'ընդունի, և զմեզ
«շնորհքով կը ընու: »

Յորպս առ հոգեւերն .

Ահա, ով իմ սիրելի հոգեսէր
հաւատացեալ, իմ ընթացքս կա-
տարեցի, և ըստ կարելոյն կը յու-
սամ թէ կրցի ներողութեան շնոր-
հաց մեծութիւնն բացատրել:

Կրցի, կ'ըսեմ, ըստ բաւականին
ցուցանել միջոցներն, որովք կա-
րող պիտի լինի մէն մի քրիստո-
նեայ օգտիլ, եթէ ուզէ և եթէ
բարի կամք ունենայ: Որովհետեւ
ինչպէս կ'ըսէ Սուրբն Օգոստինոս,
«Աստուած ստեղծ զմարդ առանց
«իւր, այլ ոչ փրկեսցէ զնա ա-
«ռանց իւր: » Հետեւաբար մեր
ձեռքն է օգտիլ, երբ եկեղեցին
իբր գթած մայր՝ իւր Գանձարա-

նէն կը բաշխէ մեզ ներողութեանց չնորհն առատօրէն :

Գիտեմ, ով հոգեւէրդ իմ սիրելի, որ չեն պակսիր Կաթուղիկէ Եկեղեցւոյ մէջ այնպիսի զաւակներ, որք չեն կարող ներողութիւն վաստկիլ, մի քանի փոքր հրամայեալ բաներն կատարել չուզելով: Այսպիսեաց յարմարագոյն կը դատեմ կրկնել Նեէման Ասորւոյն ծառային խօսքերն առ Տէր իւր. «Եթէ մեծ բան ինչ խօսեցեալ էր ընդ քեզ մարգարէին, ոչ ապաքէն պարտ էր առնել. թող թէ զի ապաց, լուացիք «Լ սրբեսցիս»: » (Դ. Թագ. Ե. 13): Այսպիսիներն կը փափաքին մեծ գանձ մի վաստկիլ, ծանր պատիժներէ ազատիլ, բայց որովհետեւ թեթեւ բաներ և գործեր հրամայուած են ընել, չեն ուզեր կատարել. ոչ ապաքէն աւելի ծանր

բան մի եթէ հրամայած լինէր Եկեղեցին, պիտի ընէին, Քաւարանին սաստիկ և ամենածանր պատիժներէն ազատելու համար:

«Գիտեմ, դարձեալ կը յարէ արդիւնաւոր ժողովրդապետն Փիաւնօ, որ կան նաև քրիստոնէից մէջ այնպիսիներ, որք բոլորովին չեն ուզեր բանի տեղ դնել ներողութիւններն. վասնզի, կըսեն անոնք, քանի որ ներողութիւնն հին ապաշխարանքներէ ազատելու համար դրուած են, և հին ապաշխարանքներն վերցըւած են հիմա և բոլորովին դադարած, այլ ևս ներողութիւն չա՞հիլն բոլորովին աւելորդ է: Ո՛հ, «ճրքան սխալ և ծուռ ըմբռնումունք է, վասն զի, ինչպէս տեսանք, ներողութիւններն ոչ թէ հին կանոնական ապաշխարանքներէն ազատելու համար կը շը-

անորհուին, այլ մեղաց ժամանա-
«կաւոր պատժէն. զոր վճարելու
«եմք կամ աստ և կամ 'ի Քաւա-
«րանի: Թէ որ այսպէս չլինէր,
«ինչպէս կ'ըսէ Սուրբն Թովմաս,
«Եկեղեցին՝ որ անսխալ է, և մեր
«ամենազթած մայրն լինելով ընդ-
«միշտ մեզ կը բարերարէ, աւելի
«փնաս կ'ընէր մեզ ներողու-
«թեամբ՝ քան թէ օգուտ, և զմեզ
«խաբած կը լինէր. վասն զի աստ
«վճարելի ապաշխարանքներէն ու
«պատիժներէն ազատ կացուցա-
«նելով զմեզ, մեծագոյն ապաշ-
«խարանաց և պատժոց կ'ենթար-
«կէր անդ 'ի Քաւարանի:»

Չէ ուրեմն, չէ, սիրելի հոգե-
սէր հաւատացեալդ իմ, ոչ անհոգ
լինիմք և ոչ այսպիսի սխալ և տա-
րօրինակ գաղափարներով հեռի
կենամք վայելելէ մի այսպիսի
մեծ և արդիւնալից շնորհ:

Թող ըսեն ինչ որ կ'ուզեն, չը-
ռովմայ եկեղեցիէն բաժանեալ
մեր սիրելի եղբայրներն. թող
կարծեն թէ՝ Պապը Սրբաշուքիները
կը ծախե ներողութեամբ. թե՛ ներո-
ղութիւնը Պապերոս ոչինչ, անօգուտ
եւ խաբէրայնիսն հնարքն է: Որով-
հետեւ լաւ գիտելու են սոքա՝ թէ
չիք և չէ կարելի գոյութիւն ու-
նենալ մի ընկերութիւն, որոյ
կազմիչ անդամք միմեանց բա-
րեացն և արդեանցն չմասնակցին,
և յորում ներմունք և ներողու-
թիւնք տեղի չունենան արդեամբ
այս կամ այն անդամակցին: «Վասն
«զի, ինչպէս կ'ըսէ հռչակաւոր
«գաղղիացի գրագէտն Տրմէսթօ(1)
«չիք մի Բողոքական ընտանեաց
«հայր՝ որ իւր ընտանեացն ներո-

(1) Երեկոյթք Ս. Բեդերպուրկի, խօսք
Թ. (Soirée de S. Petersbourg, Entr. X.)

«ղութիւններ շնորհած չլինի, ներեւելով միանգամայն իւր մի պատ-
«ժապարտ որդւոյն, բարեխօսու-
«թեամբ և արդեամբ միւս որդ-
«ւոյն, զորմէ նա ինքն գոհ էր :
«Զիք և ոչ մի Բողոքական թա-
«գաւոր, որ իւր թագաւորու-
«թեան ժամանակ յիսնաւոր ներո-
«ղութիւններ ստորագրած չլինի,
«մի պաշտօն շնորհեւելով, մի պա-
«տիժ տնօրինեւելով կամ փոխեւելով
«եայլն, արդեամբ հարց, եղբարց,
«որդւոց, ազգականաց և նախ-
«նեացն : Այս սկզբունքն այն ստ-
«տիճանի ընդհանուր և բնական
«է, որ ամէն վայրկեան մարդկա-
«յին արդարութեան ամենափոքր
«արարից մէջն իսկ կ'երեւի : Ի
«մէնջ անջատեալ եղբարք կը հա-
«կառակին այս սկզբան. որպէս
«թէ փրկագործութիւնն, զոր կը
«պաշտեն մեզ հետ, մի տարբեր

«ինչ լինէր մի մեծ ներողութե-
«նէ, որ շնորհուած է մարդկային
«սեռին՝ անհուն արդեամբքն գե-
«րազանցօրէն ԱՆՄԵՂԻՆ, որ նոյն
«մարդկային սեռին համար զոհ
«եղեալն է կամաւ . . . : Ինչպէս որ
«փրկագործութիւնն ոչ այլ ինչ
«է, եթէ ոչ՝ մի մեծ ներողու-
«թիւն, նոյնպէս ներողութիւնն
«յիւրում կարգի ոչ այլ ինչ է,
«եթէ ոչ՝ մի փրկագործութիւն
«նուազեալ : Անտարակոյս անհա-
«մեմատութիւնն անհուն է, այլ
«սկզբունքն մի և նոյն և նմանու-
«թիւնն անդիմադրաւելի է . . . :

«Կայ արդեօք մի պատկեր ա-
«ւելի հոյակապ քան այն՝ որ կը
«ներկայացնէ ոգւոց այս անսահ-
«ման քաղաքն, և իւր յար ընդ
«միմեանս յարաբերութիւն ունե-
«ցող երեք կարգերն : Աշխարհն՝
«որ կը մարտնչի, կը ներկայէ մի

« ձեռն աշխարհի՝ որ կը կրէ , և
« միւսումն կը բռնէ զաշխարհն՝ որ կը
« յաղթէ : Ներգործութիւնն շնոր-
« հակալութեան , աղօթքն , վճար-
« մունքներն , օգնութիւնքն , լու-
« սաւորութիւնքն , ներշնչմունքն ,
« հաւատքն , յոյսն և սէրն կը շըր-
« ջագային 'ի միոյն առ միւսն՝
« իբր բարերարիչ գետեր : Ոչինչ
« կղզիացեալն է , և ոգիք՝ մագ-
« նիսացեալ խտրձի կռածներու
« նման , զարդարեալ կը փայլին
« իւրեանց սեպհական և այլոց բո-
« լորից զօրութիւններովն : »

Անեղկիւղութեան և վստահ սըր-
տիւ , ո՞վ հոգեսէրդ իմ սիրելի ,
'ի գործ դնեմք արդեամբ զոր ինչ
կը հաւատամք և կը դաւանիմք :
Անհոգ և անփոյթ չգտնուիմք՝ երբ
միջոց կը մատակարարուին մեզ ,
փայելելոյ ներողութեան սուրբ
շնորհն : Մասնակցիմք այն անըս-

պառ Գանձարանին , յորում կան
և պահին անսպառ արդիւնք կե-
նարար Փրկչին մերոյ Յիսուսի
Քրիստոսի , և ամենառատ ար-
դիւնք Ամենասուրբ Կուսին և
Սրբոցն , և ուստի կը շնորհուին
և կը բաշխուին մեզ մեղաւորացս
մեր ամենագթած Մայր Ս . Եկե-
ղեցիէն . որով ազատելով յո՞ և
իցէ մեղաց , զերծ կը լինիմք ևս
յո՞ և է ժամանակաւոր պատժոյ ,
թէ աստ և թէ՛ 'ի հանդերձելումն :

Այսու կարող պիտի լինիմք մի
օր ուրախ և գոհ սրտիւք հասնիլ
մեր վերջին վախճանին , որ է միակ
երանական տեսութիւն ամենա-
սիրելի Աստուծոյ և Փրկչին մերոյ
Յիսուսի Քրիստոսի :

Վ Ե Ր Զ

ՅԱԽԵԼՈՒԱԾ (1)

Աղօթք նախ քան զհանգուցիւն .

Ո՛վ Աստուած իմ, ահա մի խեղճ մեղաւոր՝ որ ապաշխարութեան սուրբ խորհրդոյն միջոցաւ ինկած է Բու ոտքերուդ առջեւ և Բու հայրենի բազկացդ մէջ դառնալ կ'ուզէ : Ես Բու առջեւդ կը ներկայանամ իբր մի մաքսաւոր 'ի տաճարին , իբր մի անառակ որդի իւր հօրն ծնգացն փարած , իբր մի Մազթաղենացի իւր խաչեցեալ Աստուծոյն առջեւ : Սակայն մի բարի խոստովանութիւն ընելու համար Բո շնորհաց պէտք ունիմ :

(1) Յաւելուածիս քննութեան մասն ամբողջովին Հայր Ռաֆայէլ Մէլեա քահանային խոստովանութեան վերայ Տեսական-Պատմական-Գործնական ընտիր երկէն թարգմանած եմք :

Պէտք ունիմ Բո լուսոյն՝ որպէս զի կարող լինիմ թափանցել իմ սրտիս կոյր խորերն , իմ մեղքերս գտնելու համար . վասն զի իմ չար կրքերս և սատանայն կը ջանան ծածկել զայնս յինէն . առաքեալ զլոյս քո :

Դու՝ ո՛վ իմ ամենասիրելի Տէրս և Արարիչս , այսսառուցեալ սիրտս չարժէ զղջման հոգւովն . տո՛ւր ինձ մի նոր զղջացեալ սիրտ՝ որ սիրէ զմաքրութիւն , ատէ անհուն կերպով զմեզս , սիրէ ճշմարտիւ զԲեզ , և վերջապէս իւր դիտաւորութեանց և ըղձից մէջ ուղիղ լինի . զսիրտ սուրբ հաստատեալ յիս Աստուած , և զհոգի ուղիղ նորոգեալ 'ի փորի իմում :

Խրատ լաւ եւ արդիւնաւոր մի
հանգուցիւն բնեւո համար .

Այս աղօթքն ընելէդ յետոյ , ո՛վ

իմ հոգեւոյն սիրելիս , սկսէ մի առ
մի քննել քու խիղճդ հետագայ
եղանակաւ :

Ա. Աստուծոյ Տաճարանեայ պատ-
ուիրանաց վերայ .

1⁰. Ես եմ Տէր Աստուած քո , մի
ունիցիս այլ Աստուած առաջի իմ :

Խորհողքք . -Թէ հաւատոյ դէմ
միտքդ եկած խորհրդոց հաւա-
նութիւն տուեր ես . -Թէ այդպիսի
խորհրդոց վերայ կամաւ կանգ
առեր ես . -Թէ հաւատոյ մի կէտի
վերայ տարակուսեր ես . -Թէ Աս-
տուածային ողորմութեան վերայ
յուսահատեր ես , և կամ այնու
եղծանել ուզեր ես . -Թէ երազնե-
րու հաւատացեր ես . -Թէ սատա-
նայի դիմեր ես՝ կամ յայտնի կամ
լռելեայն զայն կոչելով . -Թէ մի
արարած Արարչիդ աւելի սիրեր
ես - :

Խօսք . -Թէ Աստուծոյ դէմ գան-
գատեր ես . -Թէ կրօնքի դէմ խօ-
սեր ես . -Թէ մի աւելորդապաշ-
տութիւն ուսուցեր ես . -Թէ մեղք
գործելուդ վերայ պարծեցեր ես .
-Թէ սխալ խորհուրդներով այլոց
բարիք ընելու արգելք եղեր ես .
-Թէ բարի գործք ընողն ծաղրեր
և արհամարհեր ես - :

Գործք . -Թէ մի աւելորդապաշ-
տական գործք ըրեր ես . -Թէ ոչ-
բնական մի գործք ընելու համար
մոգական գործքեր ըրեր ես . -Թէ
սատանային հետ յարաբերութիւն
ունեցեր ես . -Թէ արգիլեալ գրքեր
առանց բարձրագոյն հրամանի
կարդացեր , կամ քովդ պահեր ,
կամ ուրիշին կարդալու համար
տուեր ես . -Թէ սրբապղծութիւն
ըրեր ես - :

Ձանցատնօթիւնք . -Թէ սուրբ հա-
ւատոյ գլխաւոր կէտերն կարդա-

լու անհոգութիւն ըրեր ես. -Թէ մարդկային ակնածութեան համար բարի գործքերէ հեռի կեցեր ես. -Թէ բաւական ժամանակ հաւատոյ, յուսոյ, սիրոյ և զղջման ներգործութիւններն չես ըսեր. -Թէ ծանր փորձութեանց մէջ Աստուծոյ դիմելու զանցառու գըտնուեր ես. -Թէ բոլորովին աղօթքէ հեռի կեցեր ես - :

20. Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն :

Խորհողորդք. -Թէ միտք ունեցար զԱստուած, զՍ. Կոյսն և զՍուրբսն հայհոյել, և կամ սուտ տեղ երդումն ընել - :

Խօսք. -Թէ Աստուծոյ, Ս. Կուսին և Սրբոց հայհոյեր ես. -Թէ առանց յարգութեան Աստուծոյ սուրբ անունն բերանդ առեր ես. -Թէ սուրբ բաներն և Աստուծոյ խօսքն ոչինչ տեղ և կամ ծաղրածու-

թեամբ արտաբերեր ես. -Թէ առանց հարկաւորութեան երդումն ըրեր ես, կամ սուտ տեղ և կամ սուտն ու իրաւն չգիտելով. -Թէ նշովական երդումներ ըրեր ես, կամ քեզ կամ այլում չար մաղթելով. -Թէ առանց կատարելոյ դիտաւորութեան երդամամբ այլում բան խոստացեր ես - :

Գործք. -Թէ զայլս սուտ երդման թելադրեր կամ համոզեր ես. -Թէ այլում հայհոյելոյ առիթ տուեր ես - :

Զանցառութիւնք. -Թէ ուխտերդ կատարելոյ մէջ անհոգ եղեր ես, կամ բնաւ չկատարելով և կամ յետաձգելով :

30. Յիշեա՛ն զօր շաբաթուն սրբել քնա . (այսինքն զԿիւրակէս) :

Խորհողորդք. -Թէ հաստատ և որոշեալ կամք ունեցեր ես Կիւրակէ և Տօն օրերն Պատարագ չտես-

նելու, և կամ այն օրերն առանց հարկաւորութեան մարմնաւոր գործքերով զբաղելու:

Խօսք. - Թէ Աստուծոյ տան մէջ խօսելով կամ խնդալով կամ ունայնայն, արգիլեալ և անյարմար իրաց վերայ խօսելով զայն պըղծեր ես:

Գործք. - Թէ առանց հարկաւորութեան կիւրակէ և Տօն օրերն աշխատեր ես. - Թէ եկեղեցւոյն և եկեղեցական իրաց պէտք եղած յարգութեան դէմ գործեր ես. - Թէ Տօն օրերն առիթ առնելով, խաղերով և կամ արգիլեալ տեղեր երթալով մեղանշեր ես:

Զանցառոյթիւնք. - Թէ կիւրակէ և Տօն օրերն Ս. Պատարագն կամ բոլորովին կամ մի գլխաւոր մասն ձգեր ես, և կամ այնմ կամաւոր մտաց ցրմամբ ներկայ գտնուեր ես. - Թէ քո ստորակարգելոցդ կիւ-

րակէ և Տօն օրերն աշխատելէ չես արգիլած, կամ անհոգութեամբ չես պարտաւորած զանոնք Պատարագի տեսութեան. - Թէ կիւրակէից և Տօներուն սուրբ պահուելուն համար որոշեալ բարի գործքերն չես կատարած:

40. Պատուեալ զհայրքու զմայր:

Զաւակունք և հպատակք հետեւեալ կերպիւ թող քննեն իրենց խիղճն:

Խորհուրդք. - Թէ իրենց հայրերն, մայրերն կամ մեծաւորներն աւտած են. - Թէ նոցա մահուան փափաքեր են. - Թէ իրենց սրտին մէջ զանոնք անարգեր են:

Խօսք. - Թէ նոցա դէմ խօսեր են. - Թէ զանոնք անիծեր կամ անարգեր են:

Գործք. - Թէ զանոնք յարգեր չեն և կամ զանոնք ծաղրեր են. - Թէ նոցա վերայ ձեռք վերուցեր են.

-թէ ծանր անհնազանդութիւններ
ըրեր են. - թէ զանոնք սաստիկ
զայրացուցեր են. - թէ նոցա վեր-
ջին կամքն կատարեր չեն, մանա-
ւանդ կտակաց նկատմամբ, և նո-
ցա համար աղօթքեր չեն - :

Զանցատոյթիւնք. - Թէ նոցա օրա-
կան պարէնին հայթայթման զան-
ցառութիւն ըրեր են, և ծանր պի-
տոյից մէջ իւրեանց օգնութիւնն
նոցա զլացեր են. - թէ նոցա վեր-
ջին հիւանդութեան ատեն վեր-
ջին հոգեւոր մխիթարութիւնքն,
Եկեղեցւոյ սուրբ խորհուրդներն
հոգալու և կատարել տալու ան-
փոյթ եղեր են - :

Իսկ ծնողք հետեւեալ եղանա-
կաւ թող քննեն իրենց խղճերն :

Խորնորդք. - Թէ իւրեանց զա-
ւակներն ատեր են. - թէ նոցա մահն
և կամ մի այլ չարիք նոցա կա-
մեցեր են - :

Խօսք. - Թէ իրենց զաւակներն ա-
նիծեր են. - թէ 'ի ներկայութեան
նոցա գէշ և անհամեստ խօսքեր
կամ բամբասանքներ ըրեր են - :

Գործք. - Թէ իւրեանց զաւակներն
ակամայ մի վիճակ ընդգրկելու
բռնադատեր են. - թէ զանոնք մե-
ղանջելու փորձութեան կամ վը-
տանգի մէջ ձգեր են. - թէ զանոնք
բարկութեամբ ուղղեր և կամ սաս-
տիկ խստութեամբ զանոնք պատ-
ժեր են. - թէ 'ի ներկայութեան
նոցա ոչ-գործելի գործքեր ընելով
զանոնք գայթակղեցուցեր են - :

Զանցատոյթիւնք. - Թէ իւրեանց
զաւակներն Եկեղեցի և դպրոց
ղրկելու անհոգ եղեր են. - թէ նո-
ցա՝ աղօթքներ և սուրբ հաւատոյ
գլխաւոր մասերն ուսուցանելու
թերացեր են. - թէ քրիստոնէա-
կան բարի կրթութիւն տալու ան-
փոյթ գտնուեր են. - թէ յանցաւոր

եղած ատեննին նոցա ազդարարու-
թիւններ ընելով ուղղելու խը-
նամք ունեցեր չեն. -Թէ վնասիչ
սէրերէ, գաղտնի բարեկամու-
թիւններէ և մեղանշական մտեր-
մութիւններէ զգուշացուցեր չեն.
-Թէ նոցա բարի օրինակ հանդի-
սացեր չեն :-

Այր ամուսինը պիտի քննէ,

Թէ՛ խստութեամբ վարուած է
իւր կնոջ հետ, զանի նախատեր
կամ գանակոծեր է. -Թէ անհաւա-
տարմութեամբ զնա վշտացուցեր
է. -Թէ ապրուստի կամ զգեստե-
ղինաց համար հարկ եղեալն իւր
կնոջ կամ զաւակացն զլացեր է :
-Թէ իւր ընտանեաց կամ հար-
սանեկան դաշանց համաձայն հարկ
եղեալ տեղերն ծախսելի դրամն՝
խաղի, գինետան և անհամեստ
մեղքերու միսեր է :-

Կին ամուսինն պիտի քննէ,

Թէ՛ իւր առն հաւատարիմ մը-
նացեր չէ. -Թէ իւր ամուսնական
պարտաւորութեանց մէջ նմա ան-
հնազանդ եղեր է. -Թէ նմա հպա-
տակ և հաճոյ մնացեր չէ. -Թէ իւր
չատ ազատութեամբն և համար-
ձակութեամբ նմա տհաճութիւն
պատճառեր է. -Թէ ունայնասի-
րութեամբ և զարգասիրութեամբ
իւր ամուսնոյն ստակն միսեր է .
-Թէ իւր զաւակաց աղօթքներ և
քրիստոնէական վարդապետու-
թեան գլխաւոր կէտերն ուսու-
ցանելու անհոգ եղեր է. -Թէ իւր
զաւակաց տարբեր աջօք և խորա-
բար նայեր է :-

Տեարք և տիրուհիք պիտի քննեն,

Թէ՛ արգելք եղեր են իւրեանց
հպատակացն և ծառայից՝ Կիւրա-
կէ և Տօն օրերն Ս. Պատարագի
տեսութեան գնալու. -Թէ պար-

տաւորեր են զանոնք նոյն օրերն աշխատելու. - թէ չեն հսկած նոցա վերայ որպէս զի կարեւոր աղօթքներն ընեն և պարտաւորիչ աւուրց մէջ ապաշխարութեան և հաղորդութեան Ս. Խորհրդոց մերձենան. - թէ նոցա հետ գէշ վարուեր են. - թէ նոցա իրաւունքն, թոշակներն կամ ըստ դաշանց հարկ եղեալն վճարեր կամ կատարեր չեն. - թէ կարող լինելով արգիլեր չեն զանոնք անբարոյականութիւններ գործելու, անհամեստ խօսելու կամ ուրիշ մեղքեր գործելու. - թէ անոնց չար օրինակ տուեր են. - թէ զանոնք բռնադատեր են իրենց օգնական լինելու 'ի չար և յարգելեալ գործս. - թէ զանոնք ըստ պատշաճին վարձատրած չեն :

Ծառայք և աղախնայք պէտք է քննեն ,

Թէ՛ իւրեանց պարտուց և ոչարգ չլեալ և անմեղ իրաց կատարման մէջ անհնազանդ գտնուերեն իրենց տեարց և տիրուհեաց. - թէ նոցա դէմ բամբասանքներ ըրեր են. - թէ իւրեանց ժամանակներ պարապորդ անցուցեր են , առանց իւրեանց պարտուց պարապելոյ. - թէ իրենց տեարց և տիրուհեաց իրերն և ինչքերն լաւ չպահպանելէ 'ի զատ գողցեր , մսխեր և կամ այլ եղանակաւ նոցա մի փնաս հասուցեր են. - թէ իրենց անհոգութեամբ նոցա մի փնաս հասեր է. - թէ անոնց զաւակացն և կամ իրենց ծառայակցաց գայթակղութեան պատճառ եղեր են :

50. Մի սպանաներ :

Խորհողորդ. - Թէ ընկերովդ դէմ նախանձ կամ ատելութիւն ունեցեր ես. - թէ զքեզ նախատողին վրէժխնդիր լինել ուզեր ես. - թէ

ընկերոջդ կամ մահ կամ մի ձա-
խորդութիւն կամեցեր ես. - թէ
այլոց մահուան կամ ձախորդու-
թեան վերայ ուրախացեր ես. - թէ
այլոց բարեաց վերայ տրտմեր ու
տխրեր ես. - թէ գքեզ վշտացնո-
ղին ներումն գլացեր ես - :

Սօսք. - Թէ այլում կամ քեզ մահ
բաղձացեր ես. - թէ սպաննելու ,
վնաս հասուցանելու , կամ վրէժ
առնելու այլոց խորհուրդ տուեր
ես. - թէ ուրիշներն նախատեր ,
զրպարտեր կամ բամբասեր ես - :

Գործք. - Թէ գքեզ կամ ուրիշն
մեռցնելու փորձ փորձեր ես. - թէ
յայլոց ընդունած նախատանացդ
վրէժն լուծեր ես. - թէ մէկն գա-
նակոծեր կամ վիրաւորեր և կամ
սպաններ ես. - թէ զայլս կռուոյ ,
թշնամութեանց և անիրաւ դա-
տերու թելադրեր կամ դրգուեր
ես. - թէ ընկերոջդ չար օրինակ

կամ գայթակղութիւն տուեր ես .
- թէ չարաց և մարդասպանաց
պաշտպանութիւն ըրեր ես - :

Զանցառութիւնք. - Թէ կարող լի-
նելով արգելուլ՝ արգիլած չես
ընկերոջդ մի մեծ վնաս. - թէ ըն-
դունած նախատանացդ ներել չես
ուզած , կամ քո այլոց ըրած նա-
խատանաց փոխան ներում չես
հայցեր - :

6⁰. Մի շնար . 9⁰. Մի ցանկանար
կնոջ ընկերի քո :

Ձեռ ուզեր , ով իմ հոգեսէր
սիրելիդ իմ , ոչ իմ և ոչ քո մա-
քուր լսելիքն՝ այս աղտեղի նիւ-
թոյն վերայ երկարօրէն խօսելով
աղտեղել , վասն զի ով որ սոյն
երկու պատուիրանաց դէմ մե-
ղանչելու դժբաղդութեան մէջ
կ'անկանի , արդէն նոյն հետայն
վերահասու կը լինի այնմ : Յիրա-
ւի կը փափաքէի բոլորովին լռու-

Թեամբ անցնիլ, որպէս զի չգիտ-
ցողներն բոլորովին օտարանան
անտի, սակայն դժբաղդաբար մի
անբարոյական աշխարհի և դարու
մէջ կ'ապրիմք, հետեւաբար գրե-
թէ՝ ստիպեալ կը տեսնեմ ինքը-
զինքս գոնէ համառօտիւ խօսիլ
'ի դիւրութիւն թշուառ անկեւոյ :

Ուստի, քննէ ուշի ուշով քո
բոլոր կարողութիւնքդ, յիշողու-
թիւնքդ և կամքդ, քննէ քու
բոլոր զգայարանքներդ, 'ի մաս-
նաւորի տեսանելիքդ, լսելիքդ և
մանաւանդ չօշափելիքդ, քննէ
ամենայն երկիւղածութեամբ և
տես :

Խորհորդք. - Թէ դու սուրբ ող-
ջախոհութեան դէմ խորհուրդնե-
րու հաւաներ ես. - Թէ անհամեստ
իրաց վերայ բերկրանք ունեցեր
ես. - Թէ անմաքուր գործքեր ընե-
լու բաղձանք ունեցեր ես - :

Խոր. - Թէ սուրբ ողջախոհու-
թեան դէմ գէշ և գայթակղե-
ցուցիչ խօսքեր ըսեր ես. - Թէ
գայթակղեցուցիչ երգեր երգեր
ես. - Թէ չարամիտ, անմաքուր,
երկմիտ և ունկնդրաց մտաց մէջ
զաղիր խորհուրդներ յղացնող
խօսքեր արտասաներ ես. - Թէ ան-
համեստ պատմութիւններ, դէպ-
քեր կամ առասպելներ պատմեր
ես - :

Գործք. - Թէ կամ քեզ կամ երկ-
րորդ սեռի անձանց և կամ նոյն
սեռի վերաբերողաց հետ անմա-
քուր գործքեր ըրեր ես. - Թէ ան-
համեստ առարկաներու հաճու-
թեամբ նայեր ես. - Թէ գիտելով
և դիտմամբ անհամեստ խօսքեր,
խօսակցութիւններ և երգեր ըսեր
ես. - Թէ գայթակղելի տեղեր ներ-
կայ գտնուեր ես. - Թէ անմեղներն
'ի չարութիւն ձգեր ես. - Թէ զայլս

'ի մոլութիւնն հրապուրեր ես. -թէ չարիք գործեցու ալոց գործակից և օգնական եղեր ես. -թէ անհամեստ կերպով հագուեր, կամ չար ու գէշ մտքով զարգարուեր ես. -թէ սիրահարական և աղտեղի իրաց վերայ գրքեր, վիպասանութիւններ և անպարկեշտ կատակերգութիւններ կարգացեր ես. -թէ այդպիսի գրքեր քովդ պահեր կամ կարգալու համար այլոց տուեր ես - :

Զանցառութիւնք. - Թէ մեղացմերձաւոր առիթներէ չես փախեր. -թէ երբ կարող էիր արգելուլ զայլս անհամեստ գործքեր գործելէ, չես արգիլեր - :

Միով բանիւ 'ի գործնականին կը յորդորեմ գեղ, ո՛վ հոգեսէրդ իմ սիրելի, որ լաւ համոզուիս թէ այս նիւթոյս մէջ մեղաց թեթեւութիւնն չկայ, և պէտք է որ ա-

մէն ոք՝ երբ այս նիւթոյս վերայ ո՛ր և իցէ բան որ միտքն իյնայ, կամ իբրեւ կատարեալ մեղք խոստովանի իւր խոստովանահօր, կամ իբրեւ տարակուսական մի կէտ յայտնէ նմա :

70. Մի գողանար :

Խօսք. - Թէ ստերով կամ խարդախութեամբ ընկերդ խաբեր ես. -թէ ընկերիդ վնասն ուզեր կամ հաստատեր ես. -թէ ապօրէն դաշինքներ կուեր ես - :

Գործք. - Թէ գողութիւն ըրեր ես. -թէ գողերու ձեռք բռներ ես. -թէ գողունի բաներ գիտելով կամ տարակուսելով գներեա. -թէ անիրաւ դատեր գրգռեր ես. -թէ շատ արժան գնով ապրանք գներ ես. -թէ առուծախի մէջ զայլս խաբեր ես. -թէ անուղիղ և պակաս չափեր գործածեր ես. -թէ գէշը լաւի տեղ ծախեր ես. -թէ ապօ-

րէն տոկոսով ստակ տուեր ես.
-Թէ կեղծ դրամն իբրեւ մաքուր
և ընթացիկ տուեր ես. -Թէ այլոց
ընչից և ստացուածոց փաստ հա-
սուցեր ես. -Թէ ընկերութեանմէջ
հակառակ արդարութեան պա-
հանջմանց և ընկերական օրինաց,
ընկերներուդ խարդախութիւն և
անիրաւութիւն ըրեր ես. -Թէ ու-
րիշին ապրանքը կամ սեպհակա-
նութիւնը անվճար կամ անհա-
տուցանելի թողեր և կամ ուրիշի
դրամով փոխարիներ ես. -Թէ ըն-
կերիդ սեպհականութեան ըրած
փաստիդ փոխարինութիւն ըրեր
չես. -Թէ արդարութեան կամ բա-
րեգործութեան համար ծախսելիք
դրամի մոլութեանց և չուայտու-
թեանց մտեր ես :

Զանցատուութիւնք . - Թէ արդեօք
դաշանց մէջ ըրած խոստմանցդ և
թէութեանց մէջ պակսեր ես. -Թէ

արդեօք մշակաց և ծառայից իրա-
ւունքն գրաւեր ես. -Թէ պարտ-
քերդ անվճար թողեր ես. -Թէ այ-
լոց ըրած փաստներդ տուե՞ր չես.
Թէ գողունի իրերն առ իւր տէրն
դարձուցեր չես. - Թէ ըստ պար-
տաւորութեանդ և ըստ քեզ վճա-
րեալ վարձուց աշխատեր չես.
-Թէ գտնուած իր մի առանց տէրն
փնտռելու քովդ պահեր ես. -Թէ
այլոց ինչքերն մատակարարելու
և կառավարելու մէջ անհոգ գըտ-
նուեր ես. -Թէ կարող լինելով,
յետին աստիճանի կամ խիստ
դառն վիճակի մէջ գտնուող աղ-
քատին ողորմութիւն ըրեր չես.
- Թէ 'ի սիրոյ կամ 'ի պաշտօնէ
պարտաւորեալ՝ կարող լինելով,
ընկերոջդ փաստն արգիլէր չես : :

8⁰. Մի սուտ վկայեր զընկերէ
բուսմէ :

Խորնոյրք . - Թէ ըստ բաւականին

հիմն չունենալով ընկերոջդ վերայ
գէշ կասկածներ կամ դատումներ
ունեցեր ես - :

Սուրբ . - Թէ սուտ խօսեր ես , և
թէ այդ ստով ընկերիդ վնասա-
կար եղեր ես . - թէ առանց ստու-
գութեան ընկերիդ մի պակասու-
թիւն վերադրելով զանի մատներ
ես . - թէ զոր պէտք չէիր ըսել ըստ
արդար իրաւանց , գաղտնիքներ
յայտներ ես . - թէ ընկերիդ պա-
կասութիւնն առանց հարկաւո-
րութեան չգիտցողին յայտներ ես .
- թէ այլոց նեղութիւնն և վիշտն
հաճութեամբ լսեր և խնդացեր
ես . - թէ ընկերդ շողքօրթեր ես .
- թէ սուտ վկայութիւններ ըրեր
և կամ այլոց ընել տուեր ես .
- թէ ընկերդ ուրիշ կերպով խա-
բեր ես . - թէ այլում թոյլ տուեր
չես մի բարի գործք ընել , զոր
պէտք էր կամ կ'ուզէր ընել - :

Գործք . - Թէ քո ստերով կամ
զրպարաութիւններով ընկերդ
ժամանակաւոր վնասուց ենթար-
կեր ես . - թէ խռովութիւն կամ
խառնակութիւններ սերմաներ ես .
- թէ ո՛ր և իցէ բարիք արգիլեր ես - :

Զանցատոյթիւնք . - Թէ կարենալով
ընկերիդ դէմ եղած բամբասանք-
ներն կամ նախատինքներն և կամ
վնասներն արգիլելու զանցառու
գտնուեր ես . - թէ ուրիշն ըստ ար-
դարութեան և ըստ իրաւանց դա-
տելոյ զանց ըրեր ես . - թէ ընկերիդ
դէմ ըրած զրպարաութիւններդ
կամ ըսած ստերդ յետս չես կոչած ,
եթէ հրապարակական՝ հրապարա-
կական կերպով , իսկ եթէ առան-
ձինն՝ առանձնաբար , և ըսածնե-
րուդ կամ բողբոջին կամ մասամբ
մի սուտ լինելն խոստովանելով :

10⁰. Մի ցանկանար ամենայնի
որ նորա (ընկերիդ) է :

Թէ ապօրէն միջոցներով ուրիշի սեպհականութիւնն ունենալ ուղեցիր. - Թէ գնելու և ծախելու մէջ ընկերդ խաբել ուղեցիր. - Թէ ընկերիդ բան մը կորսնցնելն ուղեցիր. - Թէ վճարելու կամք չունենալով պարտք ըրիր. - Թէ ընկերիդ փնասել կամ անկէ բան մը գողնալու տրամադրութիւն ունեցար, եթէ յաջողութիւն գըտնէիր. - Թէ ստակի վերայ չափազանց սէր ունեցար. :

Բ. Եկեղեցւոյ պատուիրանաց վերայ

Թէ կիւրակէ և Տօն օրերն ամբողջ Պատարագ չտեսար. - Թէ զայն ջերմեռանդութեամբ և ամիրոյ մոօք չլսեցիր. - Թէ այլոց Պատարագ տեսնելու արգելք եղար. - Թէ ոչինչ պատճառներով զքեզ Պատարագ տեսնելէ ազատ կարծեցիր. - Թէ արգիլեալ օրեր կամ

միս կամ նաւակատիք կերար. - Թէ Եկեղեցիէն հրամայեալ օրերն ծոմ չբռնեցիր. - Թէ այլոց ծոմ չբռնելու կամ պահք չպահելու պատճառ եղար. - Թէ պահքէն տընօրինուած լինելով միսն և ձուկն 'ի միասին մէկ սեղանի վերայ կերար. - Թէ հիւանդութիւններ կամ անհանգստութիւններ կեղծելով պահքէն տնօրինութիւն առիր. :

Թէ տարեկան խոստովանութիւնդ չկատարեցիր. - Թէ զատկական հաղորդութիւնդ չըրիր. :

Թէ ընդհանրապէս Եկեղեցւոյ ուրիշ հրամաններու և պատուէրներու հնազանդ չգտնուեցար. :

Գ. Ողորմութեան գործոց վերայ.

Թէ կարողութիւն ունենալով աղքատաց ջօգնեցիր. - Թէ պակասութիւն ունեցողներն սիրով չուղղեցիր. - Թէ անտանելի և դը-

ժողովարարայ մարդիկներու ներող ակամբ չնայեցար, և անոնց ըրածներն համբերութեամբ չտարիր. - թէ ուրիշներէն պատճառեալ վշտերուդ չներեցիր. - թէ տարտամ վիճակի և տարակուսի մէջ գտնուողներու խորհուրդ չի տուիր. - թէ քեզմէ կախում ունեցող տգէտներն չկրթեցիր - :

Դ. Եօրն մանացու մեղաց վերայ.

Թէ չզիջանելով և չխոնարհելով հպարտացար - :

Թէ ագահութեամբ ընտանիքդ կամ ուրիշներն՝ որոց օգնելու պարտաւոր էիր, նեղութեան մէջ թողուցիր - :

Թէ սաստիկ բարկութեամբ ընկերդ թշնամանեցիր, նախատեցիր կամ գայթակղական խօսքեր ըրիր:

Թէ գինովցար կամ չափազանց կերար, և կամ միայն ուտելու և

խմելու մէջ քու հաճոյքդ փնտռեցիր :

Թէ ընկերիդ բարեաց վերայ նախանձեցար. - թէ ուրիշին յարգն ու պատիւն նուազեցուցիր կամ ընկերիդ վերայ գէշ գաղափար յղացուցիր. - թէ այլոց չարեաց վերայ խնդացիր - :

Թէ ծուլութեամբ առ Աստուած և առ ընկերդ ունեցած պարտաւորութիւնքդ չկատարեցիր. - թէ ժամանակդ պարապ անցուցիր - :

Ե. Առանձին վիճակի պարտուց վերայ.

Թէ բարի օրինակ տալու զանցառու գտնուեցար. - թէ քեզմէ կախում ունեցողներուն քրիստոնէական կրթութիւն տալու անհոգ եղար. - թէ քո պաշտօնիդ կամ արհեստիդ մէջ արդարութիւն, սէր և բարեկրութիւն

չափանցիր. — Թէ քո վիճակի վերաբերեալ իրաց մէջ դո՛ւ չեղար — :

Ահա քննութեան միեղանակ՝ զոր ՚ի դիւրութիւն քեզ, ո՛վ սիրելի հոգեսէրդ իմ, դրի հոս : Սակայն գիտելու ես որ եթէ չաբաթն մի անգամ կամ ստէպ խոստովանելու բարի սովորութիւնն ունիս, այս երկար քննութեան մէջ դեգերելու պէտք չունիս, այլ մի միայն սովորական անկմանցդ կէտերն քննելով կարող ես բաւականանալ : Քննութիւնդ ընելէ յետոյ, մտածէ մտադրութեամբ մեղացդ չարութիւնն և վշտացուցած Արարչիդ բարութիւնն : Այնուհետեւ ջանա՛ կատարեալ մի զղջումն յղանալ քո սրտին մէջ, և հաստատապէս առաջադրէ՛ այլ ևս չմեղանչելոյ :

Յաւելում աստ զղջման մի քա-

նի ձեւեր, որք շատ պիտի օգտեն քեզ՝ եթէ մտադրութեամբ և զըջացեալ սրտիւ ըսես զայնս : Կը յանձնարարեմ որ յաւուրն դոնէ միանգամ երեկոյին պառկելէդ յառաջ այս ձեւերէն մին կամ երկուքն ուշի ուշով ըսես, վըստահացնելով զքեզ՝ որ այսու քու հոգիդ օր ըստ օրէ պիտի սիրէ իւր Տէրն և Արարիչն, և պիտի ատէ զմեղս և զսատանայն :

Զղջման ներգործութեան ձեւեր .

Ա. — Ո՛վ Աստուած իմ, ամէն բանէ վեր կը ցաւիմ զքեզ վշտացնելուս համար, և կ'ուզեմ զքեզ միայն՝ անհուն և անսահման Բարին քան զամենայն բարիս սիրել առաւել :

Բ. — Ո՛վ անսիրտիս ելի և անհամեմատելի Բարի, ո՛հ, ի՛նչ բանի

հետ զքեզ փոխեցի, և որո՞ւ հետ զքեզ բաղդատեցի. կ'ամաչեմ և կը շփոթիմ երբ կը մտածեմ: Ինձմէ զատ մի յիմար չէր կրնար արդեամբ ասկէ աւելի ծանր մի նախատինք ընել. քեզ դէմ: Երանի՜ թէ բոլոր արիւնս թափեւոյ՞ գոնէ կարենայի մի այսպիսի արատ ջընջել: Եթէ չեմ կրնար, ո՞վ Ամենաբարի Արարիչդ իմ, ուրիշ բան ընել, գոնէ պիտի լամ՝ քանի որ կ'ապրիմ, և իմ մեղքերովս քեզ դէմ ըրած անարգութեանցս փոխարէն՝ զքեզ պատուելու և սիրելու համար բոլոր իմ մեղքերս պիտի խոտտովանիմ քու սուրբ շնորհօքդ:

Գ. — Ո՞վ իմ միակ Տէրս և Աստուածս, ահա քեզ դէմ ըրած նախատանացս համար բոլորովին շփոթած, եկեր քու ոտքերդ կ'իյ-

նամ: Անոնց համար քեզմէ ներումն կը խնդրեմ, և որքան հնարն է զանոնք կ'ատեմ, և անոնցմէ կը գարշիմ, որովհետեւ դու Ամենասուրբ, Ամենաբարի և Ամենասիրելի ես, և բոլոր արարածներէն անհուն յարգութիւն և պաշտօն ընդունելու արժանի: Ո՛հ, պիտի ուզէի ամէն տեսակ վիշտ և չարիք կրել, այսուհետեւ ինձ համար աւելի մեռնիլ՝ քան դառնալ քու սիրտդ վիրաւորել մեղօք: Դու այն հայրական սիրոյդ համար, որով զիս ստեղծեցիր, զիս պահպանեցիր և զիս փրկեցիր, ինձ մի այսպիսի շնորհ մի զլանար: Տուր նաև շնորհ, որպէս զի ես իմ գործած մեղացս մի բարի խոտտովանութիւնն ընեմ. մինչ ես հաստատապէս դիտաւորութիւն կը դնեմ ամենայն անկեղծութեամբ և խոնարհութեամբ մի առ

մի իմ մեղքերս իմ խոստովանա-
հօրս ըսելու, մտածելով թէ դու
զանոնք գիտես և հոն ներկայ ես,
և քեզ հետ պիտի խօսիմ:

Դ. — Ո՛վ Տէր իմ և Աստուած
իմ, կը ցաւիմ ու կը զղջամ իմ
ամէն գործած մեղքերուս վերայ:
Դիտնալով որ դու ամենամաքուր
ես. կ'ատես ու կը զզուիս մեղքէն,
ասոր համար ես ալ կ'ատեմ ու կը
զզուիմ իմ ամէն մեղքերէս, և քու
սուրբ շնորհօքդ կ'առաջադրեմ
հաստատուն կամքով մեղքէն
փախչիլ: Ո՛վ Տէր իմ Յիսուս,
Դուն քու սէրդ ինձ ցուցնելու
համար աշխարհ եկար, անտանե-
լի չարչարանքներ քաշեցիր, ան-
գին արիւնդ թափեցիր, ազնիւ
կեանքդ խաչին վերայ ողջակէզ
ըրիր. գիտնալով որ ես անօրէնս
մտքով, սրտով, խօսքով ու գործ-

քով չատ անգամ զքեզ խաչեցի,
զքեզ մեռցուցի. կը ցաւիմ ու կը
զղջամ իմ ամէն գործած մեղքե-
րուս վերայ: Մեղայ, Աստուած
իմ, մեղայ, կ'ուզեմ մեռնիլ հա-
զարիցս, քան թէ մէկ մ'ալ զքեզ
վշտացնել, և միանգամայն կ'ու-
զեմ մեղքին առիթներէն փախչիլ
քու սուրբ շնորհքովդ:

Ե. — Ո՛վ Աստուած իմ, կը ցա-
ւիմ և կը զղջամ իմ բոլոր գոր-
ծած մեղքերուս վերայ, և կը
խոստովանիմ որ անոնցմով քու
բարկութիւնդ ինձ դէմ շարժած
եմ, և արժանի եմ ամէն պատժոյ:
Բայց քու սիրելի Որդւոյդ Յի-
սուսի Գրիստոսի չարչարանաց ան-
հուն արդեանց վերայ վստահե-
լով, քու ողորմութենէդ ներումն
և թողութիւն կը յուսամ: Ո՛վ
գերազոյն և անսահման Բարի,

որքան պարտիմս քու անչափ սիրոյդ համար . արդարեւ ամէն բանէ վեր սիրուելու և ծառայութիւն ընդունելու արժանի ես :

Կը զզջամ, ո՞վ Աստուած իմ, և կը ցաւիմ բոլորով սրտիւ , գլխաւորապէս զքեզ՝ իմ անհուն և ծայրագոյն բարի Տէրս և Արարիչս՝ իմ մեղքերովս վշտացնելուս համար . կ'ատեմ և կը զզուիմ իմ համայն մեղքերէս , և հաստատապէս կ'առաջադրեմ աւելի մեռնիլ քան թէ այլ ևս զքեզ վշտացնել . դիտաւորութիւն դնելով միանգամայն մեղաց առիթներէն հեռի փախչելու քու սուրբ շնորհացդ օգնականութեամբն :

Աղօթք նախ քան զխոստովանութիւն

Խոստովանիմ առաջի Աստուծոյ Ամենակարողի և Երանուհւոյ Մարիամու միշտ Կուսին , Երանելւոյն

Միքայէլի Հրեշտակապետին , Երանելւոյն Յովհաննու Մկրտչին և Սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի , և Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին և ամենայն Սրբոց , և առաջի քո , Հայր սուրբ , քանզի մեղայ յոյժ խորհրդով , բանիւ և գործով . վայ ինձ , վայ ինձ և յաւէտ վայ ինձ :

Աղօթք յետ խոստովանութեան .

Բոլոր իմ հոգիս և կարողութիւններն թող օրհնեն զքեզ , ո՞վ Ամենասիրելի Աստուած իմ, Երկինք և Երկիր և համայն արարածք շնորհակալութիւն թող մատուցանեն քեզ , որովհետեւ Դու ներեցիր ինձ , քու շնորհքդ վերջստին ինձ պարգեւեցիր , ազատելով զիս ի դժոխոց և շնորհելով ինձ իրաւունք ժառանգելոյ քու Սրբայութիւնդ :

Շնորհակալ եմ, թէ անհուն Բարութիւն :

Սակայն, թէ իմ Տէրս և Արարիչս, ինչպէս կարող եմ ես իմ վերայ վստահիլ, քանի որ կրնամ զքեզ առաջուրնէ աւելի ցաւցնել, զքեզ վշտացնել : Դու ուրեմն քու սուրբ շնորհօքդ զիս հովանաւորէ, և քու ձեռքդ իմ վրայէն մի վերցընէր : Փորձութեանց մէջ օգնէ ինձ, և թոյլ տուր որ իմ կեանքս ինձմէ բարձուի, քան թէ մեղօք իմ հոգիս արատաւորի : Ես անկարող եմ վճարել այն պարտքերն՝ զոր քեզ ունեցած եմ իմ մեղքերովս . քեզ ուրեմն կը ներկայացնեմ քու ամենասիրելի որդւոյդ Յիսուսի Քրիստոսի արդիւնքներն, իւր Արիւնն և իւր Ամենասուրբ Սիրտն : Ներէ իմ ամբարտաւանութեանցս, ի սէր այն Աստուածային սրտին խոնար-

հութեան, Անոր ամենաեղանդուն սիրոյն համար Դու իմ անմաքուրմեղացս թողութիւն տուր . Յիսուսի ողորմած Սրտին հեղութեան և քաղցրութեան համար իմ բարկութեանցս, վրէժխընդրութեանցս, թշնամութեանցս ներէ : Միով բանիւ արդեամբ ամենասիրելի Որդւոյ քո իմ անհուն և անչափ մեղացս և պակասութեանցս ներումն պարգեւէ :

Քու արդարութիւնդ ինձմէ պաշխարութիւն և վճարումն կը պահանջէ, ահաւասիկ ես երեսանկեալ ամենայն խոնարհութեամբ առաջի Աստուածութեան քո կը գարշիմ բոլոր մեղքերէս, և հաստատապէս կ'առաջադրեմ այլ ևս զանոնք չգործելու : Ես պատրաստ եմ ամենայն հընդարձակութեամբ և յօժար սրտիւ կրել ինչ վիշտ և ինչ նեղութիւն զոր

իմ վերայ պիտի զրկես . ես զանոնք պիտի ընդունիմ համակերպութեամբ , և կատարեալ ապաշխարութեան ոգւով զայնս պիտի կրեմ , իմ կողմանէս անոնց վերայ աւելցնելով կամաւոր մահացումունքներ , ծովեր , ոլորմութիւններ , աղօթքներ , ներողութիւններ , բարի և վճարիչ գործքեր , միացնելով զայնս արդեանց միածնի Որդւոյ քո Յիսուսի Գրիտոսի :

Ո՛վ իմ ամենասիրելի Փրկիչս , շնորհակալ եմ քու անսահման սիրոյդ համար , 'ի քեզ հաւատամ , 'ի քեզ յուսամ և զքեզ սիրեմ 'ի բոլոր սրտէ . կը գղջամ կատարեալ սրտիւ՝ զքեզ վշտացնելուս համար , և զիս կը նուիրեմ քու Աստուածային սիրոյդ , քու ծնգացդ կը փարիմ , 'ի քէն աւելի մահ կը խնդրեմ քան թէ մեղանշել :

Քեզ կը դիմեմ , ո՛վ Ամենասիրելի Մայրս Մարիամ , Դու ևս քու հովանաւորութիւնդ և պաշտպանութիւնդ մի զլանար ինձ , քու ամենայետին որդւոյդ , մինչ ես ճշմարիտ սրտիւ կը նախադասեմ մեանիլ քան թէ այլ ևս քու սիրելի Որդւոյդ քաղցրագութ սիրտն վիրաւորել . ոչ ևս մեղք , ոչ ևս մեղք :

ՄԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌԻ



ՅԱՆԿ ՆԻՒԹՈՅ

Առ Հոգեւէրն	3
Ապաշխարութեան խորհրդոյն վերայ ընդհանրապէս	11
Վննութեան վերայ	17
Զղջման վերայ	36
Առաջադրութեան վերայ	53
Ա. Խոստովանելու պարտաւորութեան վերայ. Բ. Լաւ խոստովանութեան համար պահանջեալ տրամադրու- թեանց վերայ. Գ. Խոստովանու- թեան մի քանի կէտերի վերայ խորհրդածութիւնք	70
Ապաշխարանաց վճարման վերայ . .	106
Ներողութեան վերայ ընդհանրապէս և թէ քանի տեսակ են ներողու- թիւնք	109
Թէ որում աւանդուած է ներողու- թեան գանձուց մատակարարու- թիւնն և բաշխման իրաւասու- թիւնն	135
Ներողութիւն շահելոյ համար հարկ եղեալ թէութիւնք, և այս նկատ- մամբ մի քանի դործնական դիտո- ղութիւնք	150

Յորբէլեան ներողութեան վերայ . . .	162
Յորդոր առ Հոգեւերն	173
Յաւելուած. — Աղօթք նախ քան ըզ- քննութիւն	182
Խրատ՝ լաւ և արդիւնաւոր մի քըն- նութիւն ընելու համար	183
Ա. Աստուծոյ Տաճարաբանեայ պատ- ուիրանաց վերայ	184
Բ. Եկեղեցւոյ պատուիրանաց վերայ	206
Գ. Ողորմութեան գործոց վերայ . .	207
Դ. Եօթն մահացու մեղաց վերայ . .	208
Ե. Առանձին վիճակի պարտուց վերայ	209
Զղջման ներգործութեան ձեւեր . .	211
Աղօթք նախ քան զխոստովանութիւն	216
Աղօթք յետ խոստովանութեան . .	217



0075179

2013

2001

«Ազգային գրադարան»



NL0015179

